Տէրնա: Եւ գլխաւոր քղք համօրեն գտւառոին մերձ ՚ի ծովին միջերկրական . յարեւելեան կողմն կուրեէն քղքի . որ և է բարեշէն ամուր և բազմամարդ քղայլ ամբ քղքս այսր կուրի . բնակիչք նր ըստ մեծի մասին արաբացիք են . իսկ այլք են յօսմանեանց անոտի :

Ալ-աւել-ըն . ՚ի նախնումն Վարագոնին . և **Ալ-բէրդ** նա . կմ ըստոմեայ **Ալ-բէրդոնն** . կոչի և Նաւական գիւտ ալ-բէրդ . այլև Նաւակիստ սուլդանի : Եւ քաղաք փորր և անշուք ծովեզերեւայ , և նոււահանդիստ առ սահմանօք եգիպտոսի . զոր նախնիք գնէին աահման եգիպտոսի յարեմտից կոււսէ :

Լանասի . կմ Լանասի . և Քասիլիս : Են փոքրիկ աւանք ծովեզերեայք յարեւանեան կողմն ալպէրթոնի : **Ալ-իուն** առաջն . կմ Սաւահանդիստ Ալ-իուն . կմ ոող ոմանք ասեն Սալոնի : Եւ աւան և նւէնդիստ մեծ , այլ մոււտ նր նեղ և գժունարին :

Սանիւնէ և **Ըստակ** : Ըստ ոմանց՝ են երկու աւանք , կմ գեօլք յանապատն պարբայի . իսկ ըստ այլոց՝ է մի միայն աւան երկու անուամբ անուանեալ . այլ անուայդ է թէ որն յերկուց կտրծեաց տասի իցէ մանարիտ . զի շունիմք զնորսդ ստուգաքոյն ինչ տեղեկուեն զնոցանէ :

Աշուակ: Կմ Ունիւս : Եր բնակութե մարդկան , կը քղք յանապատն պարբայի կարի վաղնջական . զոր երոդոտոս կոչէ Ելիւի . Կմ ըստ ուղղագոյն տարագրութեց՝ **Աշուակ:** Երոյնուս և պաղոմէօս ղրնակիչս ոյսոր դւռի կմ վիճակի՝ յիւրում Շադրութե կօչէ Աշուակիւս . և 'Եսասանացիս : Այլ մելս որոշակի խօսի զնցէ , ասելով՝ թէ ժղվարք՝ զարս ինքն աւ հիմացիս կոչէ , ոչ հանաչէին զայլ տծու , բայց միայն զանս դր զհոդիս մեռելոց . ասկա պատմէ և զումանս ալիզծ սովորութիս կանանց նց :

Անդարիս : Քազաք կմ աւան փոքր ըստ մէջ անապատին պարբայի , որ է տեղի ապաստանի համօրէն աւազակաց շրջակայ տեղեաց :

Պարտա : Եր քղք ծովեղերեայ մեծ և անոնանի , ոյլ այժմ գեօղ աննշան մերձ 'ի պաղոմայիդա : Պօղոս զուկաս երեւելի Ճնպհորդ ըստ պիշինկայ յայս միաս է , թէ այս անուն քղք ոչ երեք եղա . և համարի թէ վրիտանօք անուն դւռին տուաւ գլխաւոր քղքն նր . և թէ այժմ ես զիք անդ գեօղ այդպիսի անունամբ : Բայց ահա տեսանեմք . զի ոչ միայն յՇացոյցս տանվիլլայ քաջ Շադրի , այլև գրեթէ յամ նոր և ստուգագոյն Շացոյցս եղել կոյ Պարքա անունամբ փոքրիկ տեղի . դր գեօղ , կմ աւան մերձ 'ի պաղոմայիդա : ուր եղաք և մեք 'ի մերումս նոր Շացուցի ափրիկոյ :

'Եղնող և առ բնիս 'ի նախնի երեւելի պատմագրաց , և Շադրաց գտանեմք յիշատակել զՊարիէ . կմ Պարտէ անուն քղք երեւելի 'ի կիւռենական նի . ոնդ ահա երոդոտոս 'ի պատմագրութե իւրում՝ բազում ու ըեզ յիշատակէ զայս քղք . ուր և պատմէ թէ փերէտիսնա մայր արկեսիլայսօսի արքայի կիւռենական նի , որ սպանաւ 'ի պարիէ 'ի խոռվուե իմիք , գիմեալ յեգիպատ , ապաստան եղել 'ի պաշտոպանուե կամբիւսոյ որդւոյ կիւրոսի . և արիանդէս՝ որ էր յայնժամ կառավար եղիստոսի փիմկ կամբիւսոյ յանձն էաւ պաշտպանել նմ հզօր ձեռամբ . ուստի պաշարել զպարկէ հանգերձ ոլարսկւան գնդաւ , զոր ունէր ըստ ձեռամբ իւրով , էառ զքղքի իարէտական իմն դաշնադրութեր . և զնմը բնակիչս նր գերի վարեաց յեզ իալտոս . նոյնովէս և ստրաբոն , պլինիոս , և ստեփաննոս , և այլք յիշատակեն զպարկէ . իմ պարքա անուն քղք նշանաւոր 'ի կիւռենական նի . բայց ըստ չելքաբիսի վիտիմն յայսմ , զի զպարկէ համարին նոյն ըստ պաղոմայիդայ . զի ստրաբոն . գիմլաք . Ժէ .

մէ, ասէ : * Աղա է Պարկէ, որ զինի սակաւուց
+ Պտղոմայիս ասացաւ : Եւ պլինիոս գիրք ն. գլ-
հ. ասէ : * Յետոյ Պտղոմայիս, 'ի նախնաւմն Պարկէ
+ անուննել : Եւ սաեփաննոս : * Պարկէ է քղք
+ լիբիոյ, որ և Պտղոմայիս կոչի : Բայց պտղ-
մէոս + և սկիւղակէո զանազաննեն զՊարկէ 'ի պտղ-
մայիդայ. զի զպարկէ գնեն 'ի ներքին կողմն 'ի ցա-
մաքն. իսկ զպաղոմայիս 'ի ծովէ զերն : Վայ ը չէ-
լորիոսի և ը այլոց կարի հաւանական երեխ, թէ
զինի քանդելոյ արիանդեայ զպարկէ քղք. փիսկ եր
յետոյ շինեցաւ պտղոմայիս ոչ 'ի նմին աւզով ուր
եր պարկէ, այլ ուր եր նւհնդիստ նր. կոչեցեալ
նւհնդիստ պարկէայ, ը սկիւղակէայ երթե հարիւր
ասպարիզաւ հեռի 'ի պարկէայ. զի ը նորին սկիւ-
ղակէայ՝ պարկէ նոյնչափ ասպարիզօք հեռի եր 'ի
ծովէ :

Շառմէլս : Աւան կմ զերզ ծովէ զերեայ + 'ի նախ-
նումն Պտղոմայիս. և Պտղոմայիդա կոչեցել, որ եր քղք
բարեշէն և նւհնդիստ հաշակառը, շինել փիսկ պար-
կէ քղքի, որ այժմ ասացափ :

Կառնէն. կմ կիւնէն. 'ի հնումն կիւնէն : Եւ քղք, կմ
աւան բարեշէն երբէ և մզոնաւ հեռի 'ի ծովէ առ-
ոտու լերին : 'ի նախնումն եր գլխաւոր մայրաքղք
կիւռենական ծի որ կոչեցաւ և Պէնքառլիս. յո
հինդ քղքիան. քղի ուներ հինդ երեւելի քաղաքս +
զիւնէն. զԱղաղնիս. զՊտղոմայիդա. զԱղաղնիս. և
զԲերինիս : Ծիազ զայլ փոքր քաղաքս. և զաւանս =
Արդ՝ կիւռէն քղքն գերահռչակ ը պլինիոսի. և
հզը քայլ հեռի եր 'ի ծովէ. և ը սարաբոնի ծօ տո-
պարիզաւ յապողոնիս. քղքէ որ եր նւհնդիստ նր :
Եւ ասէ նա ինքն ստրաբոն, թէ եր քղք մեծ 'ի
դաշտավայրի և ուներ զձեւ մեղանոյ : Բնկք 'ի նախ-
նի պատմագրաց պաամեն զսկզբնաւորութէ սորին
քղքի, ը որս և երոգոտոս որ բշմ ինչ քրէ զնմէ,
այլ ը առասպելեօք. յորս նախամեծար ընտրելի և
ստուգագիր Շագիրն խոհսկանն ստրաբոն +

Արդ՝ ասէ նա, թէ քղքս այս հիմնեցաւ 'ի յու-
նաց եկելց 'ի թերայ կզղւոյն լակոնացւոց, կմ ըս-
պարտիացւոց. տուացնորդ ունելով զոմն բատոտս
անուն. յորմէ կիւռէնացիք կոչեցան երբեմն և Բափ-
պունէանդ. կմ Բափպէանդ. և զի բնակիչք թէրայ կզղ-
ւոյն ելն լակեգեմոնացիք, կմ որ նոյն է՝ սպար-
իացիք, յայն սակա և կիւռէնացիք ասին ունել
զագումն իւրեանց 'ի սպարտիացւոց, կմ ըսկեդե.

մնացւոց . ոնդ յովսեպոս գիրք ժամ . զիւռենացիս
կոչէ ազգաւ լակեդեմոնացիս : Բայց բնաւորութե
նց , և կարծիք զիւլիսոփայական իրօք՝ այլազան էր
'ի բնիկ սպարտիացւոց . ուստի ծագեցաւ մասնաւոր
աղանդ փիլիսոփայից՝ կիւռենացի , կամ կիւռենա
կան կոչեցել . որում դլուխ և հեղինակ եղեւ արիս
ուսպապոս . զոր կիկերոն բազւմ ուրեք յիշատակէ
'ի գիրս իւր . ոող և ստրաբոն :

Այս քղք ըարձակ էր յոյժ , մեծաշէն և հոյակասլ ,
զոր վկայեն և այն սակաւ մնացուածք աւերակաց
նր : Քանզի գտանին արձանիք ճարտարագործք , այլ
առ հերկ կրծատեալք և անդլուխք . բարձրուին նց
իրրե 5 ոտնացսփ և կէս . և ձեւ հանդերձից նման
է այժմեան զգեստուց արաբացւոց տեղւոյն . յորմէ
քանչայացտ երեխ , թէ մինչև ցայժմ պահեն նքը ըզ-
վաղնջական ձեւ զգեստուց նախնեաց իւրեանց : Գոյ
անդ և աղբիւր մի ականակիտ շատաջուր , կարկա-
ջահոս և մշտաբուղիս բլիսել 'ի ժայռե , որ յամ ե-
ղանակս տարւոյ ոչ յաւելու , և ոչ նունազի , այլ
միշտ միանդ բղիսէ . առ որով գտանի պարիսպ թանձր
և ամրակուռ իրրե 100 գրկաշափ ը երկայն . այլէ
սիւնք մարմարիոնեայք , և 'ի պորփիւրեան կճոյ ,
այն է՝ սումախի 16 ոտնաշափ երկայնութե :

Մերձ յայն տեղին է հովիտ մեծ և ըարձակ . ուր
են բշմ տունք կոանաւ հատեալք 'ի ժայռի . այլէ
կրկակք , և սենեակք ըստ ճարտարապետական ար-
ուեստի գասաւորելք . Ուստի են , որք համարին
թէ անդ էր բնակուի վաճառականացն կիւռենայ :
Խոկ 'ի հանդիպակայ կողմն լերին ը արեելս՝ դաս-
նին բազմութի յոյժ գերեզմանաց սքանչելի շափակ-
ցութ փորելոց 'ի վէմս . այլև սենեակք ուրոյն ուր-
ոյն սրուելք . յորոց 'ի միում գտանի տապան ճար-
տարագործ յընտիր մարմարիոնէ . 8 ոտնաշափ ըստ
երկայնուե . և 4 ը լայնուե . և առ նովաւ պատ-
կերք երկու ուրունական կենդանեաց անեղծք . ոոք
կալել ունին զնորաձեւ աշտանակս . բայց չկը դըր-
ուած ինչ 'ի նմ . այլ 'ի վը գերեզմանին քանդակել
կայ կառք յաղթանակի քառամի . զոր վարեն առք
երեք զգեցեալ ը տարազու նախնի յունաց . բայց
եղծեալ են յոյժ առ հնուե թմիի :

Ի անդ և դաշտ նշանաւոր 'ի բարբառ արաբացւոց
Մէնա խափէն կոչեցել . ուր գտանին բշմ դուբք փո-
րիալք 'ի ժայռոս , 'ի պահել 'ի նն համբարս ջրոյ .
և 'ի յոլովս յայնցանէ գտանին դրթնածք 'ի լատին
բար-

բարբառ : Են անդ և անհամար դերեզմանք բովանդակ 'ի կոփածոյ քարանց . այլ այլ ձեռվ շինեալք . և դասակարդելք 'ի ձև ճակատու զօրաց 'ի պաղմակարդելոց . յորս դերեզմանք սպարապետաց՝ և ըստարին գրապետաց՝ նշանաւոր են . իսկ դերեզմանք սոսկական զինուորաց՝ են 5 կմ 6 ոտնաչափ բարձրութ . որը ուղիղ գծին կարդել են . և երկայնուն իւրաքանչիւր դերեզմանի շե ինչ աւելի ք զութն ոտնաչափ . յորմէ յայտ է թէ մարդիկ այնր Ֆմիի շ! ին առաւել երկայնահասակ , ք զայժմու եղել . մի միայն դերեզման գտանի անդ 20 ոտնաչափ երկայնութ . և 5 լուայնուե . բայց չկ'ինմ գրուած . իսկ թիւն նց լուերի վերոյ հաշունի ոմանց՝ հասանէ գրեթէ մինչեւ 'ի 25000 : 'ի բազմուէ դերեզմանոցս ոմանք համարեցան՝ թէ 'ի նախնումն դաշտն այն էր աեզի պաղմի : Գտանին անդ ցրուել աստ և անդ և վերնախարիսխք զնշն ձեռվ . այլ կարի աղաւադելք և եղնեալք . և եթէ հնար էր պեղել զաւերակս , աղաւադէն 'ի լոյս ելանէին պէսնդ պատ-

ուական մնացուածք 'ի նախնի կիւռենացւոց :

Յայսմ դրւափի շուրջ զիւռաէն քղքաւ իրրե 30 մզոնաչափ տարածութ . էին աւելի ք 100 աւանք , կմ դեղլք մեծամեծ և գեղեցիկք . իսկ այժմ և ոչ մի աւան կմ բնակուի մարդկան երեկի անդ . բայց միայն յաւերական հնոյն կիւռենայ գտանին բնակել սակաւ ոմանք արաբացիք , որք կաթամբ իւաշանց իւրեանց , և գարեղէն հացիւ գտամանեն զկեանս : Եւ իրրե 3 մզոնաւ հեռի 'ի նոր կիւռենայ , կմ կուրենայ՝ է լարձակ և ծառախիտ անտառ ձիթենեաց . ուր լուսնաց գտանին առաւել ք 100 հզը ձիթենէնք : Իսկ 'ի շրջակայ լերինս , և յանտառս որչացել կան մղթրդք վայրնիք և գտղսնաբարոյք . որք անամնական վարեն կեանս , ոչ օրէնս , և ոչ կրօն ինչ ունելով . և ոչ իսկ լը իշխանութ ուրուք լինելով , այլ են անկախ և ինքնագլուխ :

Հիմնարկուն կիւռենայ քղքին յատաշտոյն եղել ք զկարեւդոն . կմ գեթ ֆմիակից նմին . այս երկու քղքք և որունք լը բղմ ֆմկս անդադար մարտ ը միմեանս մզէնն 'ի ոյտնաս սահմանաց . և պատմի թէ հուսկ յեաոյ վէճն այն որոշեցաւ օաարակերպ իմն եղանակաւ , Ք զի գտղսնադիր եղեն ը միմեանս . թէ արք երկու 'ի նոյն ժամաւ ելցեն մին 'ի կարիեդոնայ , և միւսն 'ի կիւռենայ , հանդեպ միմեանց զնալով . և ուրուքք գիսկեոցին իրերաց . անդ լէ յէ

ցի սահման երկոցուն որուեցն Բայց քզի կարեկ գոնացիք արտգագոյնս ընթացան , թ պկեռենացիս , յայն սակա կիւռենացիք հրաժարէին կալ 'ի դաշին , եթէ սուրհանդակիք կոտրէնդոնացւոց առ 'ի վկայուն ծըմարտուն ոչ կենդանւոյն թաղեցին 'ի նմին իսկ տեղւո՞ ուր դիստն միմանց . զօր նոք սակա օդակ իւրեանց հայրենեաց յանձն առին յօժարակամ : Այդ կարեղոնացիք առ 'ի պատիք , և 'ի յիշատակ երախ տեաց նց՝ կանգնեցին անդ սեղան , անումանել զայն Աւշն ժենէն . յանուն նց , որք էին եղբարք հարա զարք . և կոչէին Փիշն : Այս պատմութիւն թունի լինել 'ի սակի այլոց առատովելաց նախնի բանաս աեղծից :

Աղողոնիս : Բայտ պտղոմեայ , և պլինիոսի եր մի 'ի հինդ երեելի քղքցն կիւռենական Շի , և հռչակա սոր նւհնդիստ կիւռենայ քղքի . իսկ այժմ է ա ւոն կմ գեօգ փոքր Ա պըլա սոլուկ կոչեցեալ :

Բերնին : Եր քղք և նւհնդիստ հռչակաւոր , մի 'ի հինդ քղքցն կիւռենական Շի կմ պէնտապոլսոց ՚ի հնումն , ըստ պտղոմեայ , ստրաբոնի , և պլինիոսի հսպէրիտ կմ հսպէրի կոչեցել . առ որ ըստ պլինիոսի մօտ եր հռչակաւոր պարտէզն եսպերիացւոց : զոր այսպիս ստորագրէ սկիւզակէս 'ի տեղի ասէ խո րին ութուտամն գիրկյամ կողմանց գտհավէժ և սեպացել , որ ոչ ուրեք ունի էլս . երկայնուն նը և երկու տապարէզ . նոյնչափ և լայնունին . և է պար տէլ հովանացել ամենատեսակ ծառովք* : Բայց այլք ոմանք ը որս և վիրդելիոս՝ զայս պարտէլ գը նեն 'ի մաւրիտանիա . ոտկայն տուաջինն ստուգո գոյն է , թէ արգարէ չիցէ տուասոլել : իսկ այժմ բերինիկէ քղքին՝ է տւան փոքր Բերնին կոչեցել , երբե նօ մշոնաւ հեռի 'ի պտղահայդայ մերձ 'ի ծոցն սիսրայ :

Աղբանոյէ : Բայտ պտղոմեայ , ստրաբոնի և պլինիո սի , և այլոց՝ Տեւէիւս . կմ Տաւէիւս կոչեցել : Եր քղք և նւհնդիստ երեելի , մի 'ի հինդ քղքցն պէն տաղոլսոյ 'ի հարաւակողմն պարբայի . և 'ի հիւսի սոյ բերինիկեայ . այլ այժմ թունի թէ գլխովին աւերակ է , ողի և այլ բղմ վաղիջական քղքք և աւանք այսր նհնդի . և փիսկ նց են այս փոքրիկ ծովեղերեայ տեղիք . յո թօնէ . Զարա . Քարտուս . Ա նէւ տա . Պէնիսրի . Ա նազար . կմ ինուս . ինբարուտո . Ա նէ տա . ևն : Գատանին և 'ի ներքս 'ի ցամաքն՝ գեօլու . կմ աւանք անհանգ :

Քարքու : Ե ձոր կիմ հովիտ ըարձակ յօյժ , որ ձգել տարածի մինչեւ ցեղիպարս , որ է իդւռն՝ ի նախնեաց Մասամասական կոչեցել . յորում էր գերահաջատկ տաճարն գիսօսի ամեննայ . որ ըս հաւանական կարծեաց յայս անուն կոչեցաւ . ի յունական բառէդ (Ամիս) . որ է աւազ . և ոչ յայլ ինչ անունանէ փիւնիկեցւոց . վս զի ըստ առաւել արժանահաւատ և ստուգադիր նախնի մատենագրաց՝ տաճարն այն էր յաւաղուտտ անսապատին լիբիոյ . ուստի և ՚ի տեզւոյն կոչեցաւ գիսօս ամմօս . զի բուն մականունն գիսօսի՝ էր ովեմ բիական . քզի ասեն թէ ՚ի գլուխ ոլիմբոսի բնակեցաւ հանդերձ իւրայնովլքն : Անունի էր ՚ի նախնումն տաճարս այս վս պատգամաց , և գուշակութեց նր . ուր գնաց և մեծն աղեքսանդր մակեդոնացի խորհուրդ հարցանել . այլ ՚ի ժմկու ստրաբոնի՝ և պլուտալիքոսի՝ անկել էր յարդ նր . ՚ի վր հասեալ ստապատիր երկդիմի պատասխանեաց գիւշամլքրմաց նր . իսկ յաւուրս մեծին թէսդոսի իսպառ անարդեցաւ :

Կահանդ ը ։ Ուունուս ։

(1. Անուն . Հին և Տիեւ . Տար) **Տ**էրուի թունուսի՝ զոր ոմանք նոր Դիւտ . Տար) էրուի կոչեն , է նոյն իսկ ն կարկեդոնացւոց արուեն . որ կոչեր և ափրիկէ առանձնատկ . որ և ըարձակագոյն էր յօյժ . թէպէտ նախնի մատենագիրք ոչ միաբանին՝ ՚ի նշանակել զամանակառանձնակ ափրիկոյ . զի պաղոմէոս գիրք և . գլ . 4. ձգէ զայն յամպսակայ գետոյն՝ մինչեւ ցիւռենականն . որով և ըս նր ուրունակէր զյատուկ նումիդիս . զնն կարկեդոնի . և զտրասպոլիս : Յայս միտու է և մելս . ող և մերս խորենացին . զի զափրիկէ գնէ սահմանակից մաւրիտանիոյ . որով և զնումիդիայն՝ ՚ի ներքա փակէ . թէպէտ ող վերագոյնդ նշանակեցաք . զտրասպոլիս թունի թէ ՚ի բայց հանէ : ՚ի այն և ոլլինիոս . Ե . 4. երեխ զհետ երթալ կարծեաց մելսյի . բայց յուջ քզայն՝ ՚ի խօսիլն նր առանձին զափրիկոյ , զնէ նմասահման յարեւելից զթուսքա գեան , այժմ կուատըւ պահար . իսկ յարեւելից զիոքր յորձանուտն . որ և ստուգագոյն և

Վոյ ը ժլլարիոսի առանձնականն ափրիկէ տիրապէս առեալ՝ պարփակէր ը մէջ թուսքայ, և տրիտոն գետոց. և բաժանէր յերկու լուսու. յր 'ի շնչիտանիա, և 'ի բիւսակենա. կմ բիւսակիոն: Եւահա այս էր տիրապս ո տրուե կարկեդոնացւոց. որք թէպէտ ը ժմկօ ժմկս տիրեցին և այլոց շրջուկայ տեղեաց, բայց ոչ շերկար և հաստատապէս. յայն սակո ոչ համարին այնոքիկ իրրե մասն կարկեդոնացւոց տրում: իսկ այժմեան նրուին թունուսի ձգի ը մէջ ճեղայէրայ և գարապլուսոյ. և ունի իւր սահման յարեելից՝ նոյնողս զկուատըլուտ հար գետն. որով բաժանի 'ի ճնջայէրայ. յարեմըտից՝ զկափէս գետն. որ այն ինքն է հին տրիտոն, որ է անջրպետ 'ի մէջ նր, և գարապլուսոյ. այլ և զծովն միջերկրական: 'ի հարաւոյ՝ զպիլէտիւլէրիտ. 'ի նախնումն նումիդիա, յըսրձակ միտու առել. իսկ 'ի հիւսիտոյ նոյնողս զծովն միջերկրական. ուր հարուստ մի ձգի 'ի ներքս 'ի ծովն. հաղիւ 90 մետ հաւ հեռի 'ի սարտէնեայ կղզւոյն. և իրրե 70 մետ նաւ 'ի սիկիլիոյ:

Տարածութ նր 'ի բաց առեալ զպիլէտիւլէրիտ՝ և իրրե 12000 քառակօւսի միջն Յագրական:

(Հ. Գետ:) Կալխաւոր գետը նր են հետագայքդ: Մէկերադու կմ Մէկարագու. որում նախնի Յագերը զնդն անուանս եառւն. պաղսմէոս լիվիոս և պլինիոս կոչեն Պահրագու. ստրաբոն Վաղագու. պոլիբիոս՝ Մատրու. Մատրիս. կմ Մատրա. և յովհաննէս Լէոն՝ Մատրու: Ալանէ 'ի լեռնէ միոյ առահմանօքն զեպայ դւաբին, և անցեալ ը գէպէսսատ քղք՝ գնայ անկանի 'ի ծովն, 10 մլոնաւ հեռի 'ի թունուս քղքէ. այս գետ հռչակաւոր է 'ի պատմուիս հռչակաւոր ստկս նորանշան և զարմանաւը ինչ գործոյ, որ յառասպելեաց սակի թունի լինել: Պատմէ լիվիոս, որ յաւեկտ զարմանալեաց՝ քթէ հմարտուե էր սիրող. և զինի նր պլինիոս, և Շէլլիոս թէ աստիղիոս հռեգուլոս զօրավար զօրուն հռովմայեցւոց՝ յառաջին պտղմի փիւնիկ կարկեդոնացւոց, յաջողութք հասեալ յափրիկէ, յաւուր միումետես յափն սորին գետոյ զնորատեսակ օձ երկայն 120 ոտնացափ, որ սպան զբշմա 'ի զօրոց նր. մորթ նր ասէ այնցափ թունձը էր և կարծը, զի ոչ նետք՝ և ոչ տէդք՝ գծէին 'ի նա. նմին իրի ատիպեցաւ ատափիոս մանդլիոնս պտղմի ըւրէմ նր

՚ի կիր արկանել ։ որով ՚ի հնումն կործանէին զարմացիանու քղթք ։ և այնուս հազիւ սատակեաց զնա, և զնորին նր առաքեաց ՚ի հռովմէ:

Կադէս ։ ՚ի հն՝ Տեժուն: Զոր յիշատակեցաք ՚ի ստորագրուե դարասոլուսոյ: Ելանէ յաւազուտ անապատէ, առ վաստալաթ լերամբ, և հոսել՝ ՚ի հարաց ը հիւսիս, մօտ առ նամմայ քղք դործէ լիճ, կոչեցել լիճ քորոտուե. և անտի ելել, գնայ անկանի ՚ի ծովին ուր է մեծ յորձանուտն ։ դործէ լով անդէն զնուէնդիստն փարինեան ՚ի հիւտիսակովմն թունուս քղքի:

Կուտափը պահար. ՚ի հն՝ Թաւենուս: Գետ փոքր, և գընացք նր շրջապասյու ։ որ ելանէ ՚ի վերին կողմանն Ուշու կոչեցեալ քղքի, և գնայ զեղու ՚ի ծովին առ նւէնդիստն դապաքայ:

(3. ՕՌ. ԲԵՐԻ. (Դ տ այոր նէնդի քաղցր է՝ բարեւ և շամաստ:) խառն, և առողջարար. և երկիրն զնշն ը այլ և այլ կողմանն յարեւեան և ՚ի հիւսիսային կողմանս անբեր է ։ բայց յարեւեան և կարի պարարտ տրդաւանդ և բերի ։ և մւնդ՝ ՚ի ծովելքերեայա՝ բերէ ցորեան առատ յօյժ ։ թէպէտ և կիսուլ չափ, և առաւել՝ անգործ և անգարմանն լքել կայ ։ ոչ միայն առ ՚ի չդոյէ մշակողաց ։ այլ և առ հեղդուե բնակչաց, և առ անկարգ կովարուե կովարչաց, որք չուան թոյլ առաւել ինչ մշկել, ք որչափ ինչ հարկաւոր է և բաւական բնակչաց նր ։ իսկ ՚ի հրւային կողմանս թէպէտ չիք այնչափ առատուե ցորենոյ և այլոց արմատեաց, բայց զկակասուե նց լցուցանեն ազդի ազդի պատուական պտուղք ։ զի շեման, կիտրն, նարինջ, ձիթապտուղ, արմաւ, և նուշ, ևն: Ունի անդ և անտառս ։ յորս գտանին զնշն տեսակք վայրենի գաղտնաց ։ կրառիւծ, վագր, ջայլամն, ոձ, ևն: իսկ գլխաւոր վաճառք թունուսի էն բերք նր ։ և գերիք ։ յդ քրիստոնեայք ։ (զորս հէնք թունուսից գերեն ՚ի նաւուց եւրոպացոց ։ որով և բջմն շահին ։ զի մեծադին վաճառեն զնշ ։ կմ դնեն ՚ի դործ խիստ ծառայութեն ը ծով և ը ցամաք ։) եւ սեաւք գերելք ՚ի հարաւային կողմանն ոին թունուսի: Վաճառականուեն նր է ը ծով և ը ցամաք ։ ծովայինն գլխաւորաբար է ՚ի ձեռս եւ բոպացոց ։ յորոց առաւել յաճաիեն անդր գաղղիսցիք ։ և ապա հրէայք գոսքանայ նէնդին իտաւոյ, մենդ ալիկուանոյ քղքի ։ որք տանին անդը գրեւ:

գրեթէ զնոյնատեսակ վաճառս, զրբա տանին և յայը
Նեհնգիստաս բարբարոսաց Թի. որ ը գուշակը լական
հաշունի ոմանց՝ ամի ամի հաստնէ ցերկու միլիոն
զնչ, իսկ վաճառք նր, զրբ հանեն անտի հաստնէ
ցերկու միլիոն և 500 հզը զնչ: Այս ամ վաճառք
ը մեծի մասին ը ձեռս հրեից անցանեն. որք քա-
ջակարժ, և աշալուրջ գոլով յառետուր վաճա-
ռաց, զիտեն շահիլ տռաւել ք զայլս. կմ յնի անդ
վաճառելով, և կմ տարել յայնպիսի տեղիս՝ յորս
գիտեն եթէ՝ ի յարգի են այն իրք և մեծագիրք:
Իսկ զցամաքային առետրուիս ունեն ը կարաւանս
ամեկայ և կատենացւոց, որք են ժղվեղք բնակելք
Դներբասակողմն երկրին ամսօրեայ Ճնողրհաւ հեռի
Դթունուո քըքէ: Կարաւանն սալեայ ամի ամի հա-
ստնէ Դթունուո գրեթէ երիւք եօթնեկօք յոշ ք
զկարաւանն սամատանայ, և բերէ փոշի ոսկւոյ. և
գրամա ը երկերիւր հզը ոսկւոյ: Իսկ կարաւանն
կատենացւոց յամին երկու Ճնողրհորդուիս առնէ.
և բերէ գերիս սեաւս. և փոշի ոսկւոյ. որոց փո-
խարէն առնու պէսովէս վաճառս եւրոպացւոց:
Այս կատենացիք մասնաւոր, և օտարոտի իմն ե-
զանակաւ առնեն զառեւտրութիւն իւրեանց ը սեւու
Նիկրիախոյ. քզի վաճառատեղի նց՝ է առ ոսս միոյ
Դլերանց նիկրիախոյ. ուր Դմի կողմն լերին ժողո-
վին սեաւքն. իսկ Դմիս կողմն կատենացիք. ոք
բացեալ զվաճառս իւրեանց գնեն Դիք լերին, և
մեկնին անտի. ապա գնան սեաւքն՝ ի զնենել. և առ
իւրագանցիւր վաճառ՝ զոր կամին գնել, գնեն այն-
չափ ինչ փոշի ոսկւոյ, որչափ կամին տալ. և Դիք
մեկնին անտի նոյնցափ հեռաւորութ, ողկ առաջինքն.
և մատուցել անդրէն կատենացւոց՝ եթէ գտանեն
զոսկին համացափ գնոյ իրացն իւրեանց, առնուն
զոսկին, և զիրսն անդ թողուն. զոր յետոյ եկեալ
սեւոց բառնան անտի: Իսկ եթէ ցիցէ համացափ. ոչ
մերձենան յոսկին. յոր թէ սեաւքնոչ յաւելուցուն,
ոչ ես լինի փոխանակութ իրացն. այլ իւրագանցիւր
զիւրին առնու, և Դիք մեկնի, առանց մերձենա-

լց յերս ընկերին,

(4. Բնակտ. և Բարժ.) **Բնակելք այսր նշնգի յերիս**
գասս կմ աղդս բաժանին. որք
Են տաճիկք. մուղրիք. և արաբացիք: Տաճիկք թէ
պէտ սոսկաւ են թաւով ք զայլս. սակայն ինքեանք
են տեալք երկրին. իսկ զայլս ունին իւրեանց

գերիս. որք և բնակին 'ի քաղաքս և 'ի էնս, ոնց և
մուզրիք, որք 'ի միասին ը տաճկաց առնեն նաւար-
կութիս. և վաճառականութիս. ոյլն ասովաստակութիս
'ի ծովու : Խակ արաբացիք յանապատս բնակին ասու
և անդ թափառելով. զի չունեն ուրեք զհաստատ
բնակութի, վայ և անտուն կոչին . և դործ նց է դո-
զուն, գողանալով զպառվս Երկրի . և զայն ամ ոք
ինչ անկանի 'ի ձեռան նց : Եւս սք ամփեան ը հանրա-
ուէս խօսելով բիրտ են և վայրադք և ծոյլք 'ի
դործս, և զուրկ յարունեատից, և 'ի գիտունեց . և
ը կրօնից՝ մահմէտական առ հաստրակ :

(5. Աշուտ :) Կամեցեալ յայտմ վայրի համառօտել
զպէսպէս անցու թունուսեան արուե,
կարեոր է նախ 'ի մէջ ըերել զառաջին հիմնարկու-
թի գերահոչսկ կարկեդոն քղքի . և զբարդաւա-
ճուն հարկապէտուե նր . և զղնղն պտղմունս, որք
կարի հաջոկաւոր են 'ի պատամութիս նախնի հռով-
մոյեցւոց : Արդ՝ նախնի բնակիչք այսր ոքի էնն
բարբարոսք, կմ պէրպէրք . յորոց ոնց 'ի վերանդը
նշանակեցաք՝ այս հիւսիսային մասն ափրիկոյ բո-
վանդակ՝ կոչեցաւ բարբարոսաց ։ որոց զառա-
ջինն ափրեցին եգիպտացիք յորժամ ծաղկեւոլ էր
արուեթի նց, և զօրուոր զինուք : Ասու վաճառաւ
կանք ֆիւնիկեցւոց, ելելք 'ի տիւրասէ, որ էր նա-
ւահանդիսատ հաջոկաւոր ը ամ ։ վո համատարած
և բարդաւաճ վաճառականուե իւրոյ, որ և 'ի ոք
գիրս թշմուրեք յիշատուկի, և անցել զհրունականն
ապնայ, որ իբրե 600 մզոնաւ հեռի էր 'ի նւհնգստէ
իւրեանց, և հասել 'ի բերան մէկերատայ գետոյն
'ի հն՝ պակրառա, անտանօր հաստատեցին զկայտ
իւրեանց . ուր յետոյ առուքեցաւ 'ի տիւրոսէ գալ-
թական, որք հիմնեցին զերեւելի քղքն Ուգիտ . այլ
զժմկ հիմնարկուե նր ոչ նշանակեն պատմութիք :
Ասու 135 ամք յոն ք զհիմնարկուեն հռովմայ այլ
հատուճաճ ժղվարդեան եկել 'ի տիւրոսէ յափրիկէ :
շինեցին զկարկեդոն :

Այլ եթէ տոտսպելական պատմուեց միտ գիցուք,
առաջին հիմնադիր կարկեդոնի եղեւ տիկին մի տիւ-
րացի եղիսաս կմ գիտունէ անուն, թոռն ետքաւ-
զու, կմ խոռոչազայ արբային տիւրացւոց, հօր երեւ-
ելոյն յեղարելի, փախուցելյերեսաց պիմնազինի
տիւրացւոց արբայի, անկաւ յափրիկէ . և անդ հիմ-
նեաց զհուցսկաւորն կարկեդոն : Այն այս պիմնազ
զիոն

վիս ասեն՝ Եզրայր Նորին Դիդովեաց՝ ետ ապահուանել գուշակ կմ սիկարտալ որ և կոչնուր ակերա բաս կմ սիկէոս զայր Նորին Դիդովեաց, որ մեծա առն էր յոյժ. կամեցել է ձեռս թերել զնոխութեն դանձուց նր՝ Այլ Դիդ վեէ ՚ի գերեւ եհան զակն կալու ի նր. քղի իրազգած լեալ չարանիւթ խորհրդոյ նր. երարձ զանիրչաբար ՚ի նաւս զնմ ոսկի և զարծաթ սիկէոսի առն իւրոյ. և եմուտ գիշերոյն ՚ի նաւ ը իւր մակրիմ ծառայս. հաստատել ՚ի միաս դիմագրաւ լինել տռ ամ վտանգ նաւարկութեն, ք թողուլ եղբօր իւրում զնոխուիսն, որբ շաղախեցին զձեռս նր յարին առն իւրոյ: Եւ նաւարկեալ ը երկար ժմի առ Եղերք միջերկրական ծովուն, ե հաս ՚ի ծոցն ուր էր աւախիք քղք, լինել ՚ի տիւրաց ոց համազգեաց իւրոց. գնեաց անդ երկիր կալուածոց. և շինեսց ամբոց՝ անունանել ՚ի բարբառ փիւ նիկեցոց Պիւրսա. կմ Պոորա, և կմ լաւ ևս վիրսա. և անդ ամբապահեստ արար զանրաւ հօխուե գանձուց իւրոց. ուր ապա՛ի ինոգրոյ բնակչաց ու ափ քոյ քղքին՝ հիմնեաց զկարկեդոն քղք. զորոյ զիմ նարկուեն պատմուե կամեցել բանաստեղից և և շքեղաղարդել առասպելեաք, պաճաւս առել ՚ի բառէս վերսա, որ ՚ի յոյն լեզու նշանակէ զմորթ, յօդեցին՝ թէ ՚ի ինոգրել դիդովեաց գնել այնչափ երկիր, որ չափ հնար էր պարփակել միով մորթով եղին, եւ կարել զմորթն ՚ի նրբաթել փոկս, և նորքը շրջա փակեաց հարուսա մի տարածուե երկիրի:

Այս պատմուե թէ լիցէ գլխովին առասպել, թուե լինիլ այլարտնական միպասանութեն, զդիդովնէ անունն առել փինկ սիդոնի, որ էր մի ՚ի գերահամբաւ քղքցն փիւնիկեցոց. յորմէ ել գաղթական և եկել յափրիկէ՝ շինեաց զկարկեդոն: Խակ զմորթ և զին փինկ նուազուե կալուածոց, զոր կալան ՚ի սկզբան անդ. զոր և ՚ի սուղ ժմիի ըտրծակեցին յոյժ. օրի նտկել բազմահատեած փոկօք: Այլ թողեալ զայսպիսի առասպելական կմ այլարանական վէպս, մա տիցուք ՚ի հշգրիտ պատմուե իրացն:

Արդ՝ համօրէն նախնի պատմաբանք միաբան են յայսմ, թէ առաջին հիմնադիր քղքին կարկեդոնի և տրութեն նց եղեն գաղթականք փիւնիկեցոց և տիւրացոց կմ քանանացոց. այլոչ նոյնողս ՚ի նշնկել զպանան անցանելոյ նց յափրիկէ: Քանզի մերս խոր տ. 13. ցուցանէ՝ թէ քանանացիք յերեսաց յեսուոյ փախուցել, անկան յափրիկէ. զոր հաստատէ յար և

ձանագրուէ անախի, որ յարձանան ափրիկեցւոց հիմ
կայր դրել այսպէս . * ' | Յեսուսայ դողոյ փախուցել
։ մեքնախարարք քանանացւոց, եկավ բնակիլ աստ' .
Զօյն հաստատէ յայտնագոյն ևս ոլրոկապիտս յօյն
ոլատմիչ զ դարու . յդ . պազմի վանդ . ը . 10. Նա
նակելով և զտեղի արձանացն, որք կային մինչև ցիւր
ժմկս . յասելն . * Ընեցին և բերդ ՚ի նումիդիա .
։ ուր է այժմ քղթն կոչեցել ՚Դիկիսիս . անդ առ
։ յորդաբուզիս աղբեր ահօանին սիւնք երկու ՚ի
։ սպիտակափառ կճոյ, քանգակել ունելով տառու
։ փիւնիկեցիս փիւնիկեցւոց բարբառով զայս օրեւ
։ նակ . փախուցել եմք մեք յերիսաց յեսուսայ դողոյ
։ որդւոյ նաւեայ : * ' Եսյնպս և սուխտաս յոյն պառ
միչ համաձայն երկուց ոց աւանդէ զայս = իսկ պյուք
յետին ժմկի մատենագիրք՝ ը որս և պիշինկ՝ հայ-
եցել յըարձակ անջրողետուի ժմկաց որ ՚ի մէջ յեւ-
ուայ և շինուե կարկեդոնի, յառասպելեաց կարգս
դաօեն զայս պատմուի ը նմին և զարձանագրուին .
քղի ը ճիշտ ժմկգրուե ոք դրոց, յեսու իբր 600
ամօք յառաջ էր ք զշինութիւ կարկեդոնի . Վայ և
ոլոդեն՝ թէ կարկեդոն շինեցաւ ոչ ՚ի քանանացւոց
փախստէ ից յերեսաց յեսուսայ, այլ 'ե վճռկանաց փիւ-
նիկեցւոց կմ սիւրացւոց, որք ՚ի սակս վճռշահուե-
նաւարկեին ՚ի կողմանս յայսոսիկ : Սակայն առ միա-
բանուե այսց կարծեաց, մարթ է ասել, թէ յառնուը
իշլացւոց զ քանանացւոց, բնիք ՚ի բնակչաց անոտի
փախուցել զեղան՝ ՚ի քղքս ծովեղերեայս և մւնդ ՚ի
տիւրսս, զոր ոչ երբէք կարացին իշլացիք ը լծով
իւրեանց նուածել . և անձնատուր լիալ ՚ի վճռկա-
նութիւ, զինի ժմկց հռչակաւոր եղին ը բովանդակ
ծովն միջերկրական . և յետոյ մատել յափրիկէ շինեցին
ընկն քղքս, ը որս և զկարկեդոն . և այսու ճշմար-
տին երկոքին կարծիք ևս . կմ թէ յաւուրմն յեսուսայ
փախեան յափրիկէ, և զինի ժմկց որդիք նց շինեցին
զկարկեդոն : Բայց յով ք զհաստատել, և ծաւալել
անդ զորուի իւրեանց բղմարտո մղեցին ը շրջակայ
բնակիչս, և ապա ընդ կիւռենացիս սակս անջըր-
պետութեն սահմանաց . և այնպէս առ սակսու սա-
կաւ զօրացեալ, երևելի որութիւն հիմնեցին յափ-
րիկէ :

Ասկա անցին յեւրոպիա . և առին նախ զմերձակայ
սարտենիա կղզին . յետոյ և զբալերեսն կղզիս, յը
շնայսրիքա, և զմինորքա . մոին և ՚ի սոլանիա . ուր
զայնու ժմկաւ բնակէին զանազան բարբարոս ազինք

ստարք 'ի միմեանց ը բարուց և ը գործառնութեց՝
և չունելով ը միմեանս զքշղբական ինչ յօդ միաբա-
նուն, վայ 'ի սուղ ժմկի զրշմն 'ինցէ մի առ մի ը
իւրեանց լծով նուաճնեցին. որով և կալան զմեծ
մասն հարաւային սպանիոյ։ Ապա ձեռն արկին և
'ի սիկիլիս կղզի. ուր արդէն բջմց աեղեաց տիրէին,
յորժամ հռովմ թօթափէր զլուծ թղրաց իւրոց.
առ կենդանութն իսկ բրուտոսի, որ հաստատեաց
զհիւպատոսուին, և զծերակոյտ հռովմայ։

Յայսուիկ ժմկս պատմիչք աւանդեն զգաշնադրութեանց, որով հռովմայեցիք պարտաւորեցան նաւարկելով ը արեմուտս շանցանել զհրուանդանն գեղեցիկ։ որ մօտ էր կարկեղունի։ Եւ 484 ամօք յնչ ք զգա-
լուստ քնի, կմ ք զհսրկաց թուականն, և 164 ամօք
զկնի հիմնարկուեն հռովմայ՝ միաբանեցան կարկե-
դոնացիք ը քսերսեայ պարսից արքայի. ակնունելով
յայնմ Շախումբ պտղմի զբուամբ ածել զսիկիլիս.
այլ վրիպեցան 'ի յուսոյ. քզի յորժամ զօրն պարսից
դիմել գնաց 'ի կիրճն տերմուպիղաց, որ է 'ի թեսա-
ղիա 'ի լեառն ովետայ, ուր և հարան իսկ 'ի լակե-
դեմոնացւոց, յոյնք սիկիլիս ընկալեալ օգնութիւն 'ի
գեղունէ բռնաւորէն սիրակուսայ, որ անձամբ՝ հան-
դերձ 50000 հետեակօք. և 5000 հեծելովք եհաս
անդր, գաղանաբարար յարձակել 'ի վր կարկեդոնաց-
ւոց, հարուածս անհնարինս ածին զնոքօք։ Յետ
այսորիկ զկնի ժմկց գրեմ միանդամ, կմ երկիցս կար-
կեդոնացիք ելին 'ի վր սիկիլիսոյ, այլ վայրապար։
Ապա 400 ամօք զկնի հիմնարկուեն հռովմայ յորում
ժմկի աւանդի 'ի պատմուիս այլ դաշնադրութն 'ի մէջ
հռովմայեցւոց և կարկեդոնացւոց 'ի պաշտպանուին
միմեանց, կարկեդոնացիք զվերջին ձիգն 'ի գործ արկին
Շդէմ սիկիլիացւոց։ Այլ անդէն վզվկի փութացաւ
յունասատն 'ի թիկունս հասանիլ ժղթուեան իւրոյ.
և մենդ կորնթոս, որ գունդ մեծ զօրաց բազմաց
առպքեաց անդր. որք ոչ միայն իսպառ սպուռ վա-
նեցին զկարկեդոնացիս, այլև քաջ սպարտապետն յու-
նաց ագաթոկղէս սիրակուսացի զնմ զնաւահանդէս
յունաց դարձոց յափրիկէ. ը որում միաբանեցան
և ումանք յիշխանաց անտի ափրիկեցւոց, և հանդերձ
նոքօք պաշարեաց զկարկեդոն։ 'ինմին ժմկի յար-
եաւ և ներքին թշնամի կարկեդոնի չարադոյն ք զար-
տապքինս. քզի բոմիղկար սպարտապետ զօրաց կար-
կեդոնացւոց կամեր բռնասնալ և ինքնին միապետել
չթղքն. այլ փութով յայտնեցաւ դաւաճանութն իր։

ռւստի և առ ժամանյն կախեցին զնա զփայտէ . որով
և քարձաւ չարն 'ի միջոյ :

"Կոյնակս 'ի նմին թմկի երկոպակուի մեծ անկաւ 'ի
մեջ զորացն յունաց՝ և ափրիկեցւոց միաբանելոց ը-
նը 'ի պաշարումն կարկեդոնիի . մինչեւ բռնադատիւ
ագաթոկեայ դառնալ անդրէն 'ի սիկիլիա . և լշխա-
նաց ափրիկեցւոց վերստին ըլծով կարկեդոնացւոց
ինքնակամ դնել զպարանոցս . և կարկեդոնացիք
անդրէն յինքեանս ընկրկեցին ղծովեզերեայ քղքո
սիկիլիոյ , զկորուսելու 'ի նմին սլուզմի . զորս և ոչ իսկ
պիւռոս՝ որ 'ի տարենտացւոց կոչեցել յիտալիա ը-
դէմ հռովմայեցւոց , և անցեալ 'ի սիկիլիա , կարաց
խապառ հանել 'ի սիկիլիոյ : Ապա հռովմայեցիք դաշ-
նակիցք կարկեդոնացւոց հանել զպիւռոս յիտալիոյ
և 'ի սիկիլիոյ , ամ ծովեզերեայ քղքք սիկիլիոյ՝ զորս
առել եր պիւռոս 'ի կարկեդոնացւոց , անդրէն 'ի
ձեռս նց դարձան :

Քայլյ հռովմայեցիք , որք 'ի վազուց աւս արձակել
եին 'ի սիկիլիա ոչ միայն սակս ողատունականուենր ,
այլ առաւելակամ տո անյսուգ ցանկուե տիրապետուե .
ձեռն 'ի գործ արկին և զայն ը տրութք իւրեանց
նուանել . զառաջինն սկսան ձեռնտու լինել սիկիլ-
ի զիացւոց , որք տիրէին 'ի մէսսինա քղք , 'ի վանել
'ի կղզւոյ անտի զկարկեդոնացիս . ապա յայտնի պա-
տերազմաւ յարեան ժիտելով դաշինն , զոր տնէին
ը նու : Եւ ահա աստի սկիզբն եղեւ առաջին հռչա-
կաւոր փիւնիկեան կմ կարկեդոնական մարտի . որ
սկսաւ 488 ամօք զինի հիմնարկուենն հռովմայ . և
266 յառաջ ք զդալրուստ քնի . կմ ք զհորկց թունա-
կանն . որև դզբդեաց զհամօրէն իտալիա . զափրիկէ ,
և զյունաստան . զի երեք մեծազօր տրութք ելին 'ի
մարտ . հռովմայեցիք , կարկեդոնացիք . և յօնկ նի
զուկակիցք կարկեդոնացւոց : 'ի սկզբան անդ ամ
պարագայք իրաց յայտնակս ցուցանէին 'եթէ կար-
կեդոնացիք անտարակոյս ունիցին յաղթանակել 'ի
վր հռովմայեցւոց . քզի քաջավարժ էին 'ի նաւար-
կուե . կազմ և պատրաստական բազմութք պտզմա-
կան նաւուց և զօրաց , և ճոխութ գանձուց . ռւստի
և ահեղ երյայնժամնց զօրուի 'ի ծովու : Իսկ հռով-
մայեցիք հազիւ զանուն ծովուն դիտէին , թող թէ
ունիլ վարժուի ծովային պտզմի . որք չունէին բնաւ
պտզմական նաւու , այլ միայն սակաւ նաւու վճռկա-
նուե . բայց այնոք զի՞նչ առաջի ահեղ պատրաստուե
կարկեդոնացւոց :

Սակայն 'ի վեր ք զամ ակնկալուն 'ի ստկառ ամբու
հանին 'ի ծոլ 120 չքատիրի նաւու . և զի քաջ գիտեն ,
զօրուն թշնամոյն , նմին իրի նորահնար իմն մեքե-
նային այնպս ամբացուցին զկողմն իւրեանց , զի 'ի
հակատիլ ըդէմ 130 չքատիրի նաւուց կարկեդո-
նացւոց , զութառուն յայնց առին . իսկ զոյլը ցիր և
ցան արտրին : Գործ՝ որոյ զուգական կարծեմ թէ
շիք 'ի պատմուն : Այլ կարկեդոնացիք ըս անխոր-
տակելի քաջասրտուն իւրեանց վաղվաղակի անդրեն
կազմեցին նոր նաւահանգէս 150 չքատիրի նաւուց .
բայց և նց յաղթեալ հռովմայեցւոց , իսազացուցին
զնաւահանգէս իւրեանց յափրիկէ 'ի վր կարկեդոնի .
զօրագլուխ կարգելով նց զատիղիս հուգուղոս .
և զմանիլիս հիւտատոսս . ակնունելով իստառ ը
լծով իւրեանց նունաձել զկարկեդոն : Այլ յայտնը-
ունագ 'ի գերեւ ելյոյո նց . քզի քանատիպուս երե-
ելի սպարտապետն ովարտիացի թղմուք սպարտիացի
զօրաց յօդնուն հասել կարկեդոնացւոց ըս խնդրոյ
նց , եհար զհուվմայեցիս . և զերծաւ կարկեդոն 'ի
վերահաս վրանգէ կործանման իւրոյ : Սակայն տա-
կաւին եկաց մնաց պողմ ըս ամս 24 . քզի հռով-
մոցեցիք միշտ յաղթօղ եղեն 'ի սիկիլիա 'ի վր ծովու .
մինչեւ խոնարհիլ կարկեդոնացւոց , և խնդրել ըզ-
հաշուուի , խոստահալով միլիսն մի ոսկի դահեկան
'ի մէջ տասն ամաց վճարել հռովմոցեցւոց . որով և
աւարտեցաւ առաջին փիւնիկեան կմ կարկեդոնա-
կան պազմ :

Այլ կարկեդոնացիք երկուցել յանհաւատարմուն-
հռովմայեցւոց՝ որք սրագ էին 'ի գժրել դաշանց ,
ստիպեցան չարձակել զզօրս . և զի յայնցափ ամսոց
ոլողմունուս սպառեցան գանձք նց , մինչեւ ըլենիլ բա-
ւական 'ի վճարել զօրշօրէական թօշակ նց . վէյ
խնդրէին պողնուս 'ի նորեազեցուցանել զայն , կմ յու-
սլազել : Ընդ որ զայրացել զօրաց յայտնի ապստամ-
բեցան ըդէմ տրուեն , և տիրեցին գրեթէ բոլոր
նահանգին . պաշարեցին և զկարկեդոն քղք . յորում
է՝ զի յաղթեցին , և է՝ զի յաղթեցան : Այս ներքին
ոպողմ թունէր կործանիլ տրուե կարկեդոնացւոց .
այլ զհկուկն ներդործեաց . վս զի բնակիչք նր ը մի-
մատնս մարտուցել , առքին արիացեալ վարժեցոն 'ի
մրցմունս մարտի , որով և զկնի այնցափ հարունածոց ,
փութօվ անդրէն կանգնեցաւ կարկեդոն : 'ի ժմկա
այնը ներքին խոռվուն կարկեդոնի՝ ապստամբեցու-
և աւարդոնիա (այժմ սարակնեա) կողին . որում
սրաշու .

որաշտպան կացին հռովմայեցիք . ուստի յառսլել կարկեդոնացւոց զօրս 'ի սարդոնիա առ ՚ի անդրէն 'ի հնազանդութիւնուածել զնա , պատգամս յղեցին հռովմայեցիք կարկեդոնացւոց , առելով թէ այդ դործ է եղծութեալ վերջին դաշնադրուե . որոյ վա պարտապան են հատուցանել այլնս 12 տապանդս արծաթոյ . իսկ կարկեդոնացիք և սյսմ անիրաւ օրինաց ստիպեցան հնազանդիւ . զի առ ժամն այն չեին կարող այլազդ ինչ առնել . սակայն 'ի ծածուկ պատրաստէին 'ի թօթափել յանձանց զծանրակիր լուծ հռովմայեցւոց :

Ուստի և սարդոնիա ելյայնժամ 'ի ձեռաց կարկեդոնացւոց . և միայն 'ի սպանիա ՚ի մասանց եւրոպիոյ մնաց տրուեն կարկեդոնացւոց , որ հեռի գուլով 'ի հռովմայեցւոց , և գուցէ ոչ այնչափ ինչ նաև նօթ նց , ոչ գիտէին թէ զիանը յառաջանան 'ի նմ կարկեդոնացիք . վայ և չէր նց այնչափ ինչ փոյթ զնցիէ : Սակայն և սնդ ջանացին ինդքս արկանել խոսանալով զպաշտպանութիւն իւրեանց առ հնրի ամազգաց և խջխանաց սպանիոյ , որք միանգամ խնդրեցեն ՚ի նցէ . բայց կարկեդոնացիք առ սակաւ սակաւ տիրեին այնց գեռաց , որք չեւ ևս էին մտել լուսաշտպանութեալ հռովմայեցւոց : Ապա առ բառնալոյ զամ սիրճուս խռովուեց . միաբան հաւանաւք երկուց տրուեց զերրոս գետն եղին սահմանն անջըր-պետուե ՚ի մէջ այնր մասին սպանիոյ , յորում թոյլ տունել էր կարկեդոնացւոց շարձակել ցնորութիւրեանց . և 'ի մէջ գւոց եղելոց լուսաշտպանութեալ հռովմայեցւոց . որք այս երեք գեռաք և եթէ էին . քքադալոնիա . նաւառուա և պիստալիս : Ամիլկար զինի ցածուցանելոյ զիսուվութիւն և զապատամբութիւն զօրացն , և 'ի խալազուե հաստատելոյ զիարկեդոն զհոյրենիս իւր , դարձոյց զպազմ 'ի սպանիա , ուր 'ի սուղ ժմէի զըշմ տեղիս կալաւ . ոող և քաջն ասոդրուբաղ փեսայ նը . բայց ոչ անցին զսահմանն զեդեալն 'ի հռովմայեցւոց . զի մի 'ի գրգիւ մարտի շարժեսցեն զնն :

Այ յաջորդեաց 'ի սպարապետութ զօրաց կարկեդոնացւոց երեւելին աննիպալ . նորափթիթ երիտասարդ քսան և երից ամաց . արիասիրտ կորովամիտ աշալուրջ և հսյրենասէր . սա հաստատեաց 'ի մարի իմոքրել 'ի հռովմայեցւոց զվրէժ անսարդանաց , զոր արարին իւրոց հայրենեաց . և խորտակել զինձացել եղջիւր ամբարաւանուեն նց . զոր հաւանեցոյց համօքէն հնրիսպետուե կարկեդոնի . որով և սկիզբն

արար երկդ փիւնիկեան պաղմի: Գնաց վաղմաղակի և պաղարեաց զնովեզերեայ զբազմագանձ քղքն սադունտոս. այժմ մօրվիետրօ կոչեցել. 'ի հիւսիսակողմն վալէնցայի. որ գոլովլ ըստաշտպանութ հռովմայեցւոց, բնակիչքնը առ նու գիմեցին. իսկ հռովմայեցիք վաղմաղակի հրեշտակս արձակեցին առ աննիպալ. պատուի իրելովնմ՝ 'ի բաց կալ 'ի քղքէ անտի: Այլ նը առ ոչինչ գրեալ զապառնալիո նց, ոչ շարժեցաւ 'ի տեղւողէն. և մինչդեռ հրեշտակք հռովմայեցւոց գնացել յափրիկէ իրաւունս պահանջէին 'ի կարկեդոնացւոց վը այսր գործոյ, սագունտութ քղքն անձնատուր եղեւ աննիպալայ. զոր աւար հարին զօրք նը. և կարկեդոն հաւանել հաստատեաց զդործս աննիպալայ սպարապետի իւրոյ:

Յայնժամ և հռովմայեցիք յայտնեցին պաղմ ըդէմ նց. և մինչդեռ պատրաստէին զնւհնոգէս իւրեանց բազմութ զինուց և զօրաց առաքել 'ի սպանիս 'ի վրաննիպալայ, նա ինքն կորովին աննիպալ զօրաժողով լեալ իրը հարիւր հազար արանց, գիմեաց իսարաւ յիտալիա. էանց զերբոս գետ, և զպիւռենեան լերինս. և ճանապարհորդեալ ըստալիոք, և ը ժիրովանս քւուս գաղղիոյ, ըստալիո 15. էանց զսե պացէլ զահեղատեսիլ զանմատոյց լերինս ալբիոյ գրաւեան, եմուտ յիտալիա, և եհաս 'ի գրունս հռովմայ. որով և գողացոյց զնովմէ զհամօրէն իտալիա. քղի ոչ երբէք անցել էր ըստա հռովմայեցւոց թէ հնար իցէ երբէք մարդոյ հողեզինի ըստա այն անմատչելի լերինս անցանել: Բայց քղի 'ի հասանիլ աննիպացոյ, 'ի հռովմ, նուաղել էր յոյժ թիշ զօրաց նը կէս մի 'ի բազմապատիկ պտղմաց, զոր յայնմ սարափելի ճնողրհորդուե իւրում. մղեաց ըստա զանազան որուիս ըստ որս էանց, և կէս մի յանհանդուրժելի տառապանաց ճնողհին, ողէ և զօլքն զօր բղմ անդամ առաքեցին կարկեդոնացիք նմ յօդնականութիւն հորկ կորեան 'ի ճնողհի, յայն սակս ոչ կարաց յամ կողմանց պաշարել զհավմ, չունելով բաւական զօրս:

'ի նմին ժմկի, յորում աննիպալ ըստա ցամաք գիմեր 'ի հռովմ, շխպիոն զօրավար զօրուն հռովմայեցւոց հանգերձ բազմութ նաւուց և զօրաց նաւարիել հասաներ 'ի սպանիս, և անտի յափրիկէ, և պաշարէր զկարկեդոն քղք: Կարկեդոն և հռովմ զհուրն 'ի տան իւրեանց ունեին. բայց կարկեդոնինտ առաւել վտանգաւոր էր առ նուաղուե զօրուե իւրոյ. վայ-

ըստհուրեալ խնդրեցին զհաշտուեն ՚ի շիպիոնէ համարձերձ նունաստացուցիչ պայմանօք . յորոց մի էր և այս . զի աննիպալ վզմզկի յետս կոչեսցի յիտալիոյ . ող և կոչեցաւ . որոյ հասել յափրիկէ , մինչ տակաւին պաշարել պահէր շիպիոն զքեղքն , անդրէն ուժի առին կորկի գոնացիք , և գուն գործեցին եղծանել զնորոգ գաշնադրութին . և բոնութքը վանել զհովմայեցիս յափրիկոյ : Այլքզի զօրք հռովմայեցւոց բջմէին , և քաջավարժք ՚ի մըցմունս կարկեդոնացւոց զկնի վեշտասանամետն պտղմի , և ոչ ևս երկեցուցանեին զնո փիղք կարկեդոնացւոց , վզ ՚ի պարտաւի մատնեցաւ աննիպալ . և կարկեդոն սահիպեցաւ . վերստին ինդրել զհաշտուեն այնովիսի սրայմանօք , որով ըստի ընկճել նունաձեցաւ ըստուամբ հռովմայեցւոց . 500 նաւս ետուն 'ի ձեռս շիպիոնի . որ անդէն յանդիման քլքին հրկէզ արար զնո իսպառ . կորոյս զթմ փիզմ կարկեդոնացւոց . և պարտաւորեաց զնո ոչ ևս 'ի գործ ածել փիզմ 'ի պտղմի . և երեւելի մասն կարկեդոնացւոց Շի՝ տունաւ մասսինիսսայի նիզակակցի հռովմայեցւոց . և ես պարտաւորեցաւ կարկեդոն զի 'ի մէջ 50 ամաց հատուցէ հռովմայեցւոց առաւել ք զերիս միլիոն ոսկի դահեկանս փիզկ ծախուցն պտղմի : Ասրա զկնի յոյսպիսի յետին նունաստութի մընդ թէ գերուն հասուցանելոյ հռովմայեցւոց ըլլկարկեդոնացիս , կողոդտել մերկացուցել զնո յամ զորուեց , այնուհեաև հրատարակեցին զնո ժղվրդազատ և ինքնիշխան . այլ այն ինքնիշխանուն անունամբ էր միայն . քզի չեին կարող առանց հրամանի հռովմայեցւոց պտղմ առնել ըստմեք , ոչ յափրիկէ և ոչ արտաքոյ : Եւ ահա այսոզ աւարտեցաւ երկդիմիւնիկեան կմ կարկեդոնական պտղմ :

Եւ թէպէտ առ երկարուն պտղմց վաստակել էին հռովմայեցիք , և գանձ նց նունազել , սակայն վշ զի անդինչ աղաւորել էր 'ի միտս նտխարարացն հռովմոյ ' դալուստ աննիպալայ մինչեւ ցդրունս հռովմայ , նորին աղագաւ պնդեին եթէ առ ապահովուեն հռովմայեցւոց տրուեն ' կարեոր է իսպառ շնչել զկարկեդոն . և գլխաւոր 'ի նց էր կատոն . որ զթմ պարբերուն բանից ճառի իւրոյ 'ի սոյն աւարտէր . * ֆնչէլէ և է իսրիեդոն * : Այսմքաջ նախաաես էին կարկեդոնացիք . այլ առ ժամն այն ոչ փոյր նց հնար ուստեք : Վզ իւրեւ ըստ բաւականին հանդեան հռովմայեցիք , անդրէն նորոգեցին զպտղմ , ըստ պարտունակաւ շնչին սրատնառաց . և բազմութք նաւուց և զօրաց հասեալ

յափրիկէ , մարկոս կենսորինոս , և մանիլիոս նեղու հիւպատոսք հռովմայեցւոց՝ համոզէլ հաւանեցուցին կարկեդոնացւոց՝ զամ զէնս որբ գտանկին 'ի քղթ անդ , աւանդել 'ի ձեռս իւրեանց , տալով նց յոյժ վերսախին հաշառե՛ : իսկ կարկեդոնացիք հաւասար ըով բանից նց . կմ առ ահի՝ ետուն նց 200000 ամբ բողջ և ըստցել սպառազինուիս . և 300 մեքենայա պաղի . զոր իրրե ասին հռովմայեցիք , անդեն վաղ վաղակի ազդ արարին նց դատարկել քղթն . քղթ հրաման է ասեն 'ի ծերակուտէն՝ հռորբ դատել քանդել և հիմնայատակ առնել զնա :

Յայնժամ կարկեդոնացիք տեսել դդաւահանուեն հռովմայեցւոց , և լունել զանադորոյն պատունէր նց , վատեցան պատրաստեցան 'ի մարտ . ընտրելով զմահանձանց , քան մատնել զպատունական քղթ իւրեանց 'ի հարսոկ հրոյ և սրոյ հռովմայեցւոց . վեյ առ ժամայն ձեռն 'ի գործ արկին չինել զէնս . և ասի՝ թէ յաւուրին 140 վահանս չինեին . 300 թուր . 500 տեղս . 1000 սռչինս . և ը ամիսս երկու 120 նաւս չինեցին . զի ոոկ 'ի վերոյյիշատակեցաք , միով ամաւ յուջ 500 նաւս առաջի ացաց իւրեանց այրեաց շիպիսն . ուստի յայնժամ 12 նաւս միայն ունեին . յորս 'ի նմին թմիի յաւելին և զնախասացել 120 նաւս : Եւ զի զմոււտանէնքուտի իւրեանց կալեալ ունեին հռովմայեցիք , բացին սյլ Ճնդէն , ը օր յանկարծուստ իմն ել նաւահանդէս նց . և ը ամս երիս բղմ քաջութ մարտեդել կոռնէին ը հռովմայեցիս ներքուստ և արտաքուստ . զի 'ի ներքս 'ի քղթն՝ էին յայնժամ 70 հզք զօրք . թող զբուն բնակից քղթին :

Այլ հուսկ յետոյ զինի եռամեան պաշարման՝ զօրք հռովմայեցւոց դաշանաբար 'ի վը յարձակել , մտին 'ի քղթն . զբնակից նր կոտորեցին , և զինչս նց առար հարին , և զըղքն հրձիդ արարին . որ աւուրս 17 այրեցաւ . աղա զմեացուածս 'ի հրոյ՝ պպարիսպս , և զայլ ամրակուռ քարաշէն չինուածս քանդել հիմ նոյատակ արարին , և զըղքն ողջոյն հողաբօւր կաշցուցին . ոոկ և զայլ ամ քղթս , ոոկ 'ի թմկս այնք փիւնիկետն պտղմի ձեռնտու եղեն կարկեդոնացւոց : Եւ այսպս գերահռչակ քղթն կարկեդոնի՝ և հզօր նորութ նր՝ բարձաւ յունք . իսկ նահանդն կարկեդոնի՝ եղե դւու հռովմայեցւոց . զոր անունանեալ կոչեին

Աւետիկ առանցնակի . կմ բիւսովինեան :

Աղտա իրրե երկերիւր ամօք զինի կործաննման կարկեդոնի՝ մեծապէս բարդաւաճնը ծաղկեցաւ քրիստու

առնեական իրմնն ի սմին աշխարհի . ուր 'ի դ և 'ի
դ դարս՝ բղմ ենդսարանք գտանելին . և բղմ արք
Երևելիք որբութ և իմաստութ հանդիսացան 'ինմ ,
ուզ սբն կիսրիանս . տերտուղիանոս . և այլ ետիո-
կոպսունք , որք յիշտկին յեկեղեցական ազատմունք -
Այլ 'ի 427 վանդալք՝ որք ելին 'ի շվետաց , կմ'ի
սկանդինաւիոյ , և ալանք դրացիք կմ' սահմանա-
կիցք 'նց՝ տարադրելք 'ի դժուց 'ի դադղիոյ և 'ի
սպանիոյ , մտին յափրիկէ , առաջնորդ ունելով ը-
դենսերիկոս թդր . կտլան զալսարհն բարբարոսաց .
և զի ունեին զաղանդն արիոսի , տարադրեցին զուղ-
զափառս յափրիկոյ : Բայց ոչ ըերկար թադաւորե-
ցին յափրիկէ . քղի 'ի 534 բելսարիոս սպարա-
պետ յուստիանոսի կայսեր՝ բազմաձեռն դնդաւ-
հասեալ յափրիկէ , և յաղթել գիղիմերոսի վերջին
արքայի վանդալաց , անդրէն ը տրութք կտյսեր
դարձոյց զնմ դւռսն հռովմնյեցւոց . զորս յուստիա-
նոս արար մի միայն կուսակալուն , միացուցեալ ը-
հռովմեական տրուե . զի յո ջդրոյն եր ը հիւպատո-
սիւն իտալիոյ :

Ապօ 'ի 647 . առ նրութք օսմանայ դ իտալիֆիկէն
մահմէտականաց՝ արաբացի պարակինոսք մահմէտա-
կանք յարձակեալք յափրիկէ . տիրեցին համօրէն
ծովեղերեայ կողմանց նր . ը որս կտլան և զայս
աշխարհ . զոր և փութավ յօրէնս իւրեանց դարձու-
ցին : Եւ այնուհետեւ ոչ պակասեցան անտի պատե-
րազմունք 'ի պոճում տիրապետուե թունուսի . ո-
րում է զի՝ մասնաւոր բռնակալք տիրեցին , և է
զի՝ թագաւորք ֆէսի , կտմ մաղբուսայ . մինչ
ցմիւլէյ հասան թդր թունուսի . զոր խայրատտին
փառայն՝ որ իտ՝ կոչի պարպարոսսա , հանել 'ի տրու-
թէ իւրմէ , էառ զթունուս քղք ը ողարունակտւ-
հնազանդեցուցանելոյ զնա մեծի ինքնակալութե-
ռամանեանց . բայց 'ի սրտէ ինքն կամէր թագաւո-
րէլ . խսկ միւլէյ հասան դիմեաց առ ե կտրուս
կտյօր և թդր սպանիոյ , խնդրել 'ի նմէ օգնուեն . և
խոստանայը 'նմ , զի եթէ դարձուսցէ զինքն սնդ-
րէն յաթուն իւր , միշտ հողատակ կացցէ սպանիաց-
ւոց տրուե . և թէ 'ի հասանիլ զօրսաց սուսանիաց-
ւոց յափրիկէ , ինքն ևս հանդերձ արամբք իւրովք
միասցի ը նո . և թոշակս ևս տացէ զօրաց 'նց :

Լուսաւ կայսր աղսանաց նր ոչ այնչափ առ կարեկ-
ցուե ը թշունառուն նր . ք թէ առ շահասիրուն
իւրոյ այնպիսի թդրութե ը իւրեւ ունելով . Վայ
F 5

վաղվաղակի հրաման ետ առնել պատրաստութեն
պազմի ։ բայց ամենեին 'ի ծածուկ ։ սակայն խայը-
րատան վաղագոյն իրազեկ լեալ նոմի 'ի նոցին իսկ
եւրոպացւոց, եգիտ դիպօղ ժմկ պատրաստութեն
'ի դիմագրաւ լինել կայսեր ։ խնդրեաց օգնութեն
յամ իշխանաց բարբարոսաց Նի ։ ժողովեաց զամ
հէնս ծովու, որք 'ի կողմանս յայնոսիկ ասպատա-
կէին ։ ամրացոյց յոյժ զկոլէդա բերդն, ծոյեցուց-
ել 'ի նմ 25 հազար դերիս 'ի քրիստոնէից, զորս
յայլ և այլ ժմկս գերեաց ։ հրաման ետ զի բովան-
դակ նաւահանդէսն մոցէ 'ի ծոց անդր որ է առ-
ջիւն թունուոի, բաց 'ի 12 չեքտիրի նաւոց, զորս
էթող արտաքս, առ 'ի զննել զընթացու թշնամեաց:
իսկ կայսրն այնուհետեւ սախովեցաւ յայտնապէտ
առնել զպատրաստութիւնը իւր ։ արար 400 նաւու ։ յորս
էին 90 արքունի չեքտիրի նաւք ։ և եղ 'ի նո ։ 28
հազար զննուորս քաջամարտիկս ։ թող 700 սպա-
ռազէնս, և զերկերիւր երխվարս ։

Եւ 'ի 1535 ։ յաւարոտ յօւնիս ամսոյ՝ ել նա ինքն
կայսրն այս ամ պատրաստութիւն կալեարի կոչեցել
նւհնդստէն սաւտէնեա կղզոյն, և հասել լափրիկէ-
ել 'ի ցամաք 'ի շրջակայ վայրս աւերատկացն կարկե-
դոնի ։ իորանն կայսեր հարաւ 'ի նմին տեղատջ,
ուր 'ի ժմկս պազմին խաչակրաց բանուակեցաւ սբն-
լուդովիկոս արքայն գաղղիոյ ։ և ասի թէ աւան-
դունի էր 'ի մէջ բնակչաց երկրին, թէ եկեսցէ ժմկ,
զի 'ի նմին տեղատջ զնին գաղղիացւոց արքայի բա-
նակեցի այլ ոմն մեծ ինքնակալ ։ որ առցէ զթու-
նուս քղք, որ և կատարեցաւ ։ Ապա 'ի 21 յուլի-
սի ել խայրատանին 90000 զօրք 'ի թունուս քղքէ ։
և դիմեաց 'ի դաշտ անդր 'ի վր զօրաց կայսեր ։
որք հազիւ հասանէին 'ի թիւ 20 հազարաց ։ ուր
երկոքին ձակատք բաղլիսէլք ը միմեանս, եղեւ անդ-
իրը նախամարտութիւնն, կմ փորձ պազմի, ք թէ
օրինաւոր պազմ ։ յօրում առաւել էր թիւ անկե-
լոց 'ի զօրաց խայրատանին, ք 'ի կայսերականոց ։
Եւ այն ինչ վառէր սրտորաստէր խայրատանին առ
վաղիւն ամ զօրութ դիմամարաիլ և բացորոշել զելս
մարտին, լուր եհասնմ, եթէ նախայիշտուկէլ 25 հզը-
դէրիք քրիստոնէից կալանաւորելք 'ի կոլէդայ բեր-
դի, խորտակեցին զդիթայս, և տիրեցին բերդին ։
յայնժամ լքաւ ամ զօրութիւնը, մշնդ զի տե-
սահեր՝ զի և բնակիչը քղքին հրապուրելք 'ի միւ-
լէյ հատանայ, 'ի կողմն կայսեր սկսան դառնալ ։

վեց այնուհետև զայլ ինչ ոչ խորհեր, եթէ ոչ առկրեցուցանել զանձն, և դժունաս իւր, զոր յառաջադոյն իսկ հրաման տուել էր բառնալ 'ի նաւու . զե եթէ ձախողակ ելք գիպեսցին նմ'ի մարտի անու . մի մատնեսցին 'ի ձեւու թշնամւոյն : իսկ գերիք ազդարարին 'ի բանակ անդր կայսեր զազատուն իւր եւնց, և զտիրել բերդին :

Յայնժամ և կայսըն հրաման ետ զօրաց իւրոց դիմել 'ի քղքն . իսկ միւլէյ հասանայ աճապարեալ տնկաւ առ ոտս կայսեր խնդրելով 'ի նմէ չտալ թյլ զօրաց աւար հարկանել զքղքն . իսկ նա ըս իւրում քաղցր և բարեհամբոյր բարուց՝ լսէր աղաւանաց նը . և այն ինչ խորհուրդ 'ի մէջ առնոյր ը զօրապետաց իւրոց 'ի գտանել հնարս խափանելոյ զզրու յաւարառուեց, զոր յառաջագոյն խոսացել էր նց՝ առ առաւել քաջալերելոյ զն 'ի մարտ, ոմանք 'ի զօրաց ը պարիսպս մտել 'ի քղքն՝ բացին զմի 'ի դրանց նը . ը որ և այլք գազանաբար 'ի ներքս յարձակել, քանդէին, և անխնայ կողոպատէին զմամ զոր ինչ և գտանէին : Յայնժամ տառապեալ միւլէյ հասան թքրն խնդրեաց՝ զի գոնեաց բնակիցք քղքին մի դերեցին . այլ այս ըսր ևս եղն վո բնակչացն . զի իբրև արդելան զօրքն 'ի գերելոյ, սկսան այնուհետև անողորմաբար կոտորել զամնին, զորս գտանէին զարս և զկանայս . մինչն էարկ եղեւ խափանել զհրամանն զայն . ապա թէ ոչ փոքր միւս ևս բովանդակ բնակիցք քղքին սպառէին : Եւ այնուհետև սկսան գերել զնմսին անտիր զարս և զկանայս, զծերս և զտղայս, զորս գուզանաբար 'ի ձեռաց միմեանց յափշոակէին . մինչն առ անյագ ագահուեց զմիմեանս կոտորել . և այսող բոլոր քղքն եղեւ ճարակ զօրաց և զօրապետացն եւրոպացւոց :

Յայնմ պտղմի սակաւք անկան յեւրոպացւոց . իսկ 'ի բարբարոսաց կորեան առաւել ք 60 հզի . գաշոք թունուսի լի էին գիակամբք ոչ միայն արանց պտղմուղաց, այլև կանանց և մանկանց կոտորելոց յանուղորմ սրոյ եւրոպացւոց . յորս բջմ այնք էին, որք գեւ կիսակենդան անկել գնէին 'ի վր տապացեալ աւազայ : Գործ անարժան անհաւատից, թող թէ քրիստոնէից : իսկ գերեալքն էին 13 հաղարք = Յաւուրս երիս կողոսպտեցին զքղքն . և թէ չեր աճապարել կայսեր՝ և հանել զնու տնտի, 'ի հիմանց կործանէին արդեօք և զքղքն . զի առ մէծի ա-

գահուե՝ զհիմունս տանց բրեին, 'ի դժանել դանձա-
ռով զբզմ տունս կործանեցին։ Ազա աշխարելի
քլքն կիսաւերակ և ամսյի 'ի բնակչաց՝ տունա-
թագաւորին միւլէյ հասանայ, որ և պարաւաւորե-
ցաւ հարկատու լինել սպանիացւոց ամի ամի առա-
քելով նց 6 երիվարս, և 12 բազէ, այլեւ 12 հզը
ոսկի դահեկանա 'ի պէտո զօրաց, զօր ուներ կայսրն
դնել 'ի պահպանուի կոլէդայ բերդին զօր կալա-
ը անմիջական իշխանութ իւրով։ Խորհեր կայսրն
ձեռնթափ լինել 'ի գիւտ և այլոց ծովեղերեայ տե-
զեաց բարբարոսաց մի, այլ յանկարծական մրրկա-
շունչ հողմոց ցըռւել զնաւոհանդեսնը, ստիպեցաւ
իսոյս առալ 'ի սիկիլիա :

Իսկ խայրատաին վերստին զօրաժողով լետալ՝ ասպա-
տակեր 'ի վր միջերկրեայ ծովաւ, հասաներ կայ-
ծակնաբար և հարկաներ, քանդեր և կողոպաէր
դամ ծալեղերեայ քշքս եւրոպացւոց յայս լուր զ-
բանալոյ նր՝ բղմք 'ի քղքց անտի թագաւորութե-
թունուսի ապստամբել 'ի միւլէյ հասանայ, անձ
նատուր եղեն տու խայրատաին, վոյ և միւլէյ հա-
սան բանադատեցաւ գնալ և վերստին խնդրել զոդ-
նուն 'ի քրիստոնէից։ Յայնմ վայրի օրդի նր միւլէյ
հումիտա՝ պահնելով եթէ հայր խր գնաց յեւրո-
պիա 'ի լինել քրիստոնեսյ, ետ հրատարակել զանձն
թիք թունուսի, իսկ հայր նր առել իւր օգնութե-
քանի մի նաւս, և 2000 խտալացի զինունորս, գնաց
վստահութ մինչեւ 'ի դրունս թունուսի, ակնունե-
լով, թէ 'ի հասանիլ նր անդր՝ բացցին նմ դրունք
քղքին։ այլ վիխուցաւ 'ի յուսոյն։ քզի անօրէն
օրդին բզմութիք զօրաց լազել արտաքս եհար կո-
տորեաց զսակաւաթիւ զօրս որք էին լո իւրոյ-
և զհայրն կալեալ կենդանացն՝ բրեաց զաչս նր 'ի
ծերութ իւրում, և եդ 'ի կալանս, բայց և ինքն
փութով ելոյծ զլրէժ մեծեղեւն անօրէնութ իւրոյ-
քզի ապտիւլմելիք եղբայր նորին միւլէյ հասանայ,
յաւուր մում ծպտել հմաւտ 'ի քղքն։ հաւաքել
զօրս իւր, զօրս յաւաջագոյն սփուել եր 'ի քղք
անդր 'ի զանազան տեղիս, յանկարծուստ իմն գի-
մեաց 'ի դուռն բերդին, և անդէն կոտորեաց ըզ-
պահաւագանս, և կալել զսայիա զորդի անդրանիկ
հումիտայ, կուրտոցոյց զաչս նր, և ազատել զեղբայր
իւր 'ի բանտէ, թագաւորեաց 'ի վր թունուսի,
բայց աւուրս 36 միայն, որում յաջորդեաց մէհեմ
մէա օրդի նր :

իսկ հումիտա , անկել' ի թագաւորութէ՝ ը այն թմբս թափառել շրջէր յայլ և այլ կողմանս բարբարոսաց ծի , խնդրել օգնութիս առ ՚ի դառնալ անդրէն ՚ի թագաւորութ թունուսի . այլ ոչ ոք եղե նշնունառու : Եւ մինչդեռ էր ՚ի կելվէս քղք երր յուսահատել , ոմանք ՚ի թունուսացոց ապստամբել ք ՚ի մէհէմմէտայ հրաւիրակս արձակեցին առ ՚նա գալ տոնուլ զթագաւորութ իւր . իսկ նր գտեսլ զոմանո ՚ի վայրինի արտաքացոց , և ՚ի բնակչաց անահի թունուսի արս անօրէնս , յանկալծտկի ՚ի ներքո յարձակեցաւ ՚ի քղքն . յորմէ զար հուրել մէհէմմէտի խոյս ետ ՚ի կոլէդա բերդն . և հումիտա կալաւ զթագաւորութին թունուսի : Այլ ՚ի 1570 արուիս ալի իշխանն ձեզայէրի՝ ձեռնտունութք ոմանց ՚ի թունուսացոց վանեալ զհումիտա , ինքն կալաւ զթագաւորութ նր յանուն մեծի ինքնակալին օսմանեանց . բայց զկնի սակաւուց՝ յովհաննէս ծովակալ իշխանն սպանիացւոց՝ եկեալ նստոյց յաթու թագաւորութ թունուսի զհէմմէտ զորդի միւլէյ հասանայ : Իսկ ՚ի 1581 . կմ 82 . գ . սուլդան միւրատ առաքեաց ՚ի թունուս 160 շեքտիրի նաւս , և այլես նաւս 30 . և զօրս 40 հզր , որոց զօրագլուխ կացոյց զգօճա սինան փաշայն ազգաւ ալուսանիացի , որ ՚ի քրիստոնէուէ դարձել : Հասել նր յափրիկէ էառ ՚ի ձեռաց սպանիացւոց զկոլէդա բերդն . ապա և զթաւնուս քղքն , ը գերադոյն արութք ինքնակալին օւմանեանց հունակալով :

(6 . Կառավարութիւն :) Այնուհետեւ միապետական իշխանութին թունուսի փոխեցաւ յագնունապետութ , կմ ՚ի հսրկալետութ , զոր սահմանեալ կարգեաց սինան փաշայն . ստ կացոյց անդէն և գունդ մի 5000 զօրաց օսմանեանց բաժանել յերկերիւր օրթայյա կմ ՚ի 25 գունդս . որոց հրամանաւարդ կոչին՝ օրթայպաշի . յայս իշխանութ անցանեն ՚ի պաշտօն տաենակալի . որ ՚ի բարբառ տաճկաց կոչի օտաղար սկանի . որք զկնի վեց ամսոց՝ ելանեն յայլ բարձրագոյն պաշտօն , զոր Պետրուկի պաշի կոչին . և անտի ՚ի պաշտօնն կոչեցեալ Պաւուշ պաշտօն : Աք կացուցանեն զատեանն թունուսի ը այլոց ոմանց պաշտօնատարաց , որում ՚ի սկզբան անդնախադահ բազմէր փաշայն կմ կուսակալ իշխանն առաքել յարբունիէ դրանէ կոստանդնուպօլսոյ թահմանելոյ սինան փաշային : Բայց յետոյ ՚ի պատճես

ալի փաշային որ ստեղի եղե զօրաց, սակա տար-
տամ մեղկ և անգործ բարուցիւրոց, բոլոր իշխա-
նութիւն փաշային փոխադրեցաւ յայլ ուն պաշտօնա-
տար, զոր ըհանուր անոնամք աղայ կոչեին. և նա
բազմէր նախագահ ՚ի ժողովն ատենի: Սակայն և
այս ոչ մնաց Շերկար. զի զինի 15 ամաց՝ ընկեցաւ
և աղայն. և փինկ նր կացուցաւ այլ իմն իշխանու-
թի, զոր Տայտ կոչեն: Ապա յետ այլոց զնշն փո-
փոխուեց՝ կացուցաւ մի ոմն իշխանն Պէյ անուամբ. որ
և եղեւ ամ միւրատ պէյն, առ որով, և առ յա-
ջորդօք նր՝ առ նկւ նկւ նուազել իշխանուեց ժողո-
վոյն, կառավարութիւն թունուսի փոխեցաւ գրեթէ
՚ի միապետութիւն, կմ բռնակալութիւն. յորում կայ մնայ
մինչեւ ցայսօր. որ և համարեալ է Շ գերագոյն իշ-
խանութ մեծի ինքնակալութիւն օսմանեանց. բայց
ը իրին գրեթէ բոլորովին անկախէ, և ինքնիշխան:

(7. Բաժ' :) Տըութիւն թունուսի բաժանի յութն
գլուս. որք են Մետին. կմ Ալլեթին.
Ալլուն. կմ Ալաղ. Պիրոս. Գայերլան. Համամելին.
կմ Մակամետ. Պիսերթ. Կառահանդիս քարինեայ:
Այլ քի ճիշտ սահմանք սց անծանօթ են. յայն
սակա ՚ի բաց թաղել զբւուն, զբլիաւոր տեղիս նց
յառաջիկայդ ստորագրեսցուք:

Թանաս. ՚ի հն՝ թառնետն, կմ թառնեա: Ե քղք
մեծ, ամուր բազմամարդ և բազմավաճառ ՚ի գաշ-
տավայրի մերձ ՚ի ծոցն, կմ ՚ի լեռն կոլեգայ բեր-
դին իբրև 8 մղոնաւ հեռի ՚ի ծովէ: Ըստապատ նր
է իբրև 3 մղոն. ձեն երկայն քառակուսի. և շրջա-
կայ պարիսպք ամուր և բարձր իբր 60 ոսմա-
չափ, բղմ փոքրիկ աշտարակօք կմ բրդօք զարդար-
ել. 5 դրունս ունի. 18 գլսաւոր փողոցս. և 16
հրապարակս: Եւ Շ մեջ քղքին ՚ի բարձրաւանդակ
վայրի բերդ ամուր ՚ի վաղնջուց շինել, և ՚ի մեր-
ձակայ ֆմկս նորուկ ամրացուցել. որ և է գլսաւոր
ամրութիւն քղքին: Տունք նր իբր ՚ի բղմն աղիւսսւ-
կերտ. և ունանք քարայէն. ունելով ՚ի վերայ տա-
փարակ տանիս ըստվարուե արեւելեայց մւնդ ա-
րաբացւոց: Յիշը բնակչաց նր ըստ ոսմանց ց100 հզբ.
բայց այլք կարի նուազեցուցանեն ց60 հազար ի-
շուցեալ: Գլխաւոր շինուածք նր են տպարանք
տայիին. զոր և դիւնան կոչեն. որ է շինուած մեծ
և երեւելի. չորս մեծաշքն գրունս ունի, և բղմ
աշտարակս. և ՚ի ներքս անդ ըտրածակ հրապարակ.

և պարտեղ գեղեցիկ ։ սրահս մեծամեծու ։ և բջմ
սենեակս մեծաշենս շուրջ զմեծ սենեկաւ գան-
ձուց, որ է ը մէջ նց ։ ուր սլահին զէնք տաճկաց,
և գանձն թունուսի արուեն, և մատեանն օրինաց
էլյուհադիան կոչեցել օրէնսդրի և վդպի նց ։ յարմէ
նախնի Թագաւորք թունուսի պանծային իջանել
տոհմի իւրեանց ։ և յայն սակտ պնդէին ունիլ իւ-

խանունի դատել զեմդատու կրօնի իւրեանց ։
իւրկդ երևելի շինուած թունուսի է մզկիթն և
աշտարակ նր, այն է մէնարէ մեծաշեն և ճարտա-
րագործ, շնուշ՝ ի զաքարիայ անուն թդրէն ։ որ վդ
մեծուե իւրոյ՝ կոչե մեծ մզկիթ ։ բաց յայսմանէ են
'ի քղքի անդ և այլ բջմ մզկիթք ։ յորս չիք ինչ
մասնաւոր յիշատակաց արժանի ։ Են և դպրոցք
հորկց յորս թէպէտ զայլ ինչ ոչ ուսուցանեն, բայց
միայն զգուրանն, և ընթեռնուլ, և գրել 'ի բար-
բառ տրաքացւոց, և զթուաբանուի, սակայն մե-
ծապէտ նազատեն 'ի հրահանդութիւ բարուց ման-
կանց, և 'ի յարդարել զնո՛ 'ի բրտուէ, և ընտելու
բազաքականս և համբոյրս գործել ։ այլև յաջողակս
'ի տուրեապու վճռկնուե ը օտար աղքաց ։ Ակ 'ի
քղքի անդ և ոչ 'ի շրջակայս նր ջրհոր կմ աղբիւր
ինքնաբուղին ։ և կմ գետ հոսական ։ այլ միայն
բուրք կմ ջրիպջք՝ յորս հաւաքին ջուրք անձրեաց
նմին իրի յամառնային ժմկու, յորժամ նուազին
անձրեք՝ երբեմն նեպութիւն կրեն ընտակիցքն սակս
ջրոյ ։ և թէպէտ դատանի անդ արտաքոյ պարտպաց
բնիքնաբուղն ջրհոր, այլ ջուր նր ծանր է և աղեհամ-
զոր գերիք տարել վաճառեն 'ի քղքն ։

Խսկ ներքին քղքական կարգ սորին քղքի՝ չկ ինչ
ը հատ 'ի բարեկարգել քղքց անտի եւրոպացւոց ։
Պղերդունն և անգործ դատարկունն վտարեալ է
տնտի ։ զի գրեթէ համօրէն բնակիչք նր արհեա-
տաւոր են 'ի դասու դասու բաժանել ըս իւրաքան-
չեւր արուենստից ։ որք և ուրոյն ուրոյն յայլե այլ
թալս բնակին ։ կի՞ լաւ և ատել կրաքակք և գոր-
ծարանք նց 'ի զանազան թաղս են բաժանել ։ Մու-
րողունն անարգ և խոտան համարել է առ նո ։ զոկ
ոչ երեխին անդ մուրողք դրաց 'ի դուրս շրջելով ։
բայց միայն աղք մի մուրողաց ։ զոր բնակիչք տեղ-
ւոյն չէյիս կոչեն ։ որք են իբր կրօնաւորք նց ։ որք
և երկինայնոց նկատօղս քարոզեն զանձինու ։ յայն
տակս ամ անկարգութք և պղծագործութիւնց սրբու-
թի համարել է յաւ բնակչաց քղքին ։ և ցնորք և
բան

բանդադուշանք նց՝ տեսիլք և յայտնութեք . ոք ոռ
վօրաբար սակաւ են՝ որք գլխովին մերկ շրջին . սի-
բեն զմիայնութե . վնկ ըստ մեծի մասին յայն կողմանս
քղքին թափառին , ուր չեն այնցափ յանձախ երթ-
եւեկ մարդկան . 'ի մոռանիլ նց մեծահանգես յու-
զորկաւորութիս առնեն նց . երբեմն մզկիթս ևս
կանգնեն յանուն նց :

Առ սովին քղքաւ են Երկու արունարձանք . մի յա-
րամտեան կողմն տու մնաղհաւ պիսճրդայի և միւսն
ը արեւելք առ Ճնողհաւ սուզայի : 'ի նախնումն էր
և երրդ արունարձան , այլ այժմոչ ևս . յորժամ ե-
կարուս կայսր էառ զմունուս , յարունարձանս նր
բնակէին քրիստոնեայք անունանեալք Ուստադիտիւ .
որք էին Մողաբաբային . այլ քղք յարունարձանս
բնակէին , ոսր արաբացիք Ուստադիտիւ կոչեն . յայնմա-
նէ և ոք Ուստադիտիւ . էմ Ուստադիտիւ կոչեցան .
որք 'ի ժմկս եագոււպայ ալմանսուրայ խալիքէյին
մազոււպայ՝ դնացեալ բնակէցան անգեն : 'Նաւա-
հանդիսաւ թունուսի է լիճ կմ ծոց իբր ճ մզնն ը
Երկայն . և գլայն . որ ունի զհաղորդութի ը ծոցոյն
կուլէդայի 'ի ձեռն անձուկ նեղուցի . մերձ յայս
լիճ կմ ծոց է գործարան նաւուց՝ ուր շնուն չեք-
աիրի նաւս . և ղայլ տեսակս նաւուց թունու-
սացոց . իսկ 'ի միւս կողմն ճոցոյն՝ է կուլէդա-
քերդն . և նեղուցի՝ ը օր ջուրն 'ի միջերկրական
ծովէ գնայ 'ի ծոց անդր թունուս քղքի : Աւտա-
քոյ քղքին շուրջանակ՝ են գերեզմանք տաճկաց
ծածկեալք որձաքար վիմք . և իբրև շ մզննաւ հե-
տի 'ի լայնարձակ դաշտի անտառ ձիթենեաց . յոր-
մէ իւղբէմհանեն 'ի պէտս բնակչաց , և 'ի վաճա-
ռել օտարաց :

Այս քղք է մի 'ի հին և վաղնջական քղքցն ափրե-
կոյ , զոր պողիբիոս և ստրաբոն յայտնակս յիշա-
տակեն 'ի գիրս իւրեանց . թաւնեփամ . և թաւնես
կոչելով . զոր և գնեն յարեւելեան կողմն հնոյն կար-
կեգոնի 18 ասպարիզաւ հեռի 'ի նմէ . նոյնպս 'ի ե-
տիեզերական ժողովն յիշատակի եպս նր . որ էր
ուստիլիխանոս եպս թունետոնի : Եշ էր սա 'ի հը-
նումն մի 'ի քղքաց կարկեղոնացոց , որ էանց 'ի
ձեռս հոռվմայեցոց , ապա վանդալաց . որք աւար
հարին զնա յաւուրս սբյն օգոստինոսի . ապա էանց
'ի ձեռս արաբացի սարակինոսաց . և յետ արտա-
սահման լինելոյ մուզրեաց 'ի սալսնիոյ , բղմք 'ի
նցէ խոյս ետուն յայս քղք , և 'ի շրջակայս նր . յե-
տոյ

տոյ սպանիացիք ամրեցին նմ. յորոց էառ խայրառ
տին. այլ զինի սակաւուց անդրէն ը տրութ սպա
նիացւոց ընկրկեցաւ 'ի ձեռն ե կարողոսի ող և 'ի
վեր անդր յիշատակեցաք. հուսկ յետոյ 'ի 1581 առ
ինքնակալութ դ սուլ' միւրատայ էանց ը գերա
գոյն տրութ օամանեանց : Զայս քղք զարդարեցին
և ըարձակեցին արաբացիք եկեալք յերջանիկ ա-
րաբիոյ կիմ եկմանու . յետոյ և և ըարձակեցաւ
աւերակօք նոր կարկեդոնի . վո զի արաբացիք Օկ-
քուպայ գնդին ոչ համարելով զանձինս ապահով
'ի կարկեդոն' յերեսաց եւրոպացւոց, լքին զայն տե-
զի, և փոխադրեցան 'ի թունուս . զոր բշմ երևելի
շնուռածովք վայելքացուցին . բայց և անդ ոչ լեւր-
կար մնացին . այլ չուել 'ի ներքսակողմն ը արևելս .
շնուցին անդ զգարվան քղք :

Մարսա: Ե աւան կմ գեօղ մեծ 15 մլոնսւ հեռի
'ի թունուսէ . շնուել 'ի վր աւերակաց կարկեդոնի .
'ի բարբառ արաբացւոց կոչեցաւ **Մարսա** . որ թարգ-
մանի նւհնգիսա . քզի աստ էր նւհնգիստ հնոյն
կարկեդոնի : Առաջին հիմնադիր նր եղե մեհեաի
խալֆին կարվանոյ . այլ 'ի ժմկս սբողմացն թու-
նուսի քանդեցաւ . ուստի այժմ է աւան գուքը կմ
գեօղ . և չնակիչք նր ձկնորսք , և երկրագործք .
ունի տունս իբրև 800 . և մզկիթ մի . և դպրոց
մանկանց . զոր հիմնեաց միւլեյ մէհէմմէտ հայը
միւլեյ հասանայ , զոր վերագոյնդ յիշատակեցուք :
Են անդ և ապարանք , և տունք ինչ 'ի սակս զբօ-
սանաց . ուր յամառնային Ֆմկս Տային թունուսի
ը իւրոց մեծամեծաց գնայ 'ի զբօսանս վո զրվական
և առողջարար օդոյ տեղւոյն :

կարիերան . զառաջինն տիրատպս կարթապս կոչեցեալ .
յերկուց անուսանց աստի փիւնիկեցւոց կմ երբայ-
եցւոց Քարեօթ խառաւ . որ 'ի բարբառ նց , ող 'ի
բարբառ երբայեցւոց՝ նշանակէ 'Նոր Դաշտ . ուստի
'ի հնումն 'ի բարբառ հռովմայեցւոց կոչեցաւ և
'Նոր-լին . բայց սովորաբար Գարդահօ կոչեին . ող
և մէք կարիերան : Էց քաղաք մեծ հզօր մարդաշաա
բազմավաճառ և բազմադանձ . գլուխ համօրէն հիւ-
սիսային ափրիկոյ . և ախոյեան դիմոգրառ հռով-
մայ , շնուել ոչ 'ի դիդոնիսեայ ախկոնդէ տիւրացւոյ ,
որոց 'ի վեր անդր ցուցաք , և ոչ 'ի փիւնիկեցւոց
կմ 'ի քանանացւոց անմիջանդս աարագրելոց 'ի յես-
ռաց որդւոյ նաւեայ , այլ 'ի փիւնիկեցւոց կիմ տիւ-
րացւոց 'որք 'ի սակս վաճառաշահուէ նաւարկեին
'ի

՚ի կողմանս յայսոսիկ . ը հշտագոյն ժմկագրութեան է 35 ամօք յոջ ք զհիմնարկուին հռովմայ . յթ 883 ամօք յոջ ք զգալուստ քոի յոջին ոլիմողիաթին սահմանելոյ յիփիտոսի արքայէն եղիդեայ . կմ ը յուստինոսի (որ հաւաքեաց զպատամուին պոմպէոսի տրոգոսի) 74 ամօք յոջ ք զհաստատուին ոլիմ պիաթին :

Ասդ՝ կամեցել յայսամ վայրի առաջի առնել զնախնի հանգամանս այսր մեծանուն քղթի , 'ի դէպ համարիմ 'ի մէջ բերել զստորադրութին ապապիանոսի աղեքսանդրացւոյ , քան զոր ոչ ոք 'ի հախնեաց կմ յարդեաց՝ ճգդրտագոյն գիտաց ստորադրել . կարկեդոն քղթ էր 'ի ծայր ծոցոյ 'ի տեղւոջ , որ բերեր զնանութի ցամաք կղղւոյ . պարանոցն որտվ միանացր ը ցամաք էր 25 կմ ը ստրաբոնի 60 ասպարեզ ը լայնութե : 'ի ծոցոյ աստի ձգեալ տարածեր ը տրեմուտս լեզու հողոյ ը մէջ լճին և ծովու՝ լայն իբրեւ կէս ասպարեզ , կմ 62 քայլ հռովմնոյեցւոց : իսկ 'ի հարաւակողմն 'ի ցամաքն կոյս ուր էր պիւրսա կմ վիրսա ամրոցն 'ի պարանոցի անդ էր եռապատեալ պարիսպ 30 կանգուն բարձրութ . և առ նովուտ աշտարակիք իբրեւ 480 ոտնաշափ տարակաց 'ի միմանց ը բոլոր ջրնապատ պարուպին , հաստատեալք 'ի վր 30 ոտնաշափ հիմանց . և իւրաքանչիւրն յաշտարակաց անտի քառուցարկք . (յթ չորս խաթ .) բայց բարձրութ պարսպին ցերկորոդ յարկն և եթ հասանէր . և յարկքն կամարակապ և ը արձակք յոյժ : 'ի ստորին յարկի անդ էր տեղի բաւական 300 փղաց . թող զայլ ը տրձակ տեղիս վեհամբարաց կարեսոր կերակրոյ նց : Յերկդ յարկի էլին ախտոք 4000 էրիվարաց . և համբարանոցք խոտոյ և գարւոյ 'ի ոլէտա այնաշափ երիվարաց . և սենեակք առ 'ի բնակութ 4000 հեծել զօրաց . և 20 հազար հետեակաց : **Ա**յս բովանդակ պատրաստութի պիտղին էր ը յարկաւ 'ի լայնարձակ ներքնատունս ահաւոր պարսպացն , կմ լսու ևս ասել բերդին . բայց անկիւնն որ սկսել 'ի ոլարսպաց անտի սրատէր զնախասացեալ լեզուաւ հողոյ մինչեւ ցնաւահանդիսոն , չէր այնաշափ ինչ ամուր . զըրմէ 'ի սկզբան անդ անփոյթ եղեն :

Կւհնդիստք՝ նո այնողս կարդել էին , զի մարթ էր 'ի միոյ անցանել 'ի միւսն . որք 'ի ծովակողմն մի մուտս ունէին հասարակ երկոյտուցն 720 ոտնաշափ լայնութ . զոր չլիմուցիւ փակէին : **Ա**ռաջին նւհնդիստքիուն

գիտան էր վո՞նաւուց վաճառականաց ։ առ որով չուրջանակի կառուցել կային կրպակք պէսնկս իրաց ՚ի որէտո այնոցիկ, որք նաւեն ՚ի ծովու ։ իսկ ՚ի մէջ երկդ կմ ներքին նւհնգստին էր կղզի ։ առ որով ։ և առ բռվանդակ նւհնգստին էին յարկածածուկ տեղիք բաւականք 220 նաւուց ։ և մօտ այնոցիկ՝ էին համբարանոցք զինուց ։ և զնշն կարտսեաց ՚ի պէտա ծովային պտղմի ։ իւրաքանչեւրն առ դրամի իւրով ունէր երկու երկու սիւնս ։ որով կղզին և նւհնգիստն միանգամայն երեկը իբր բոլորածիր սիւնազարդ թատրոն ։ ՚ի կղզի անդ՝ էր ատեանն ըհանուր ծովակալ իշխանին ։ անտի տային զնշան հնշմամբ փողոյ ։ և հրատարակէին զամ պատուէրտ պատկանեալս առ նաւարկութիս ։ իսկ կղզին էր հանգեպ մտից նւհնգստին ձգել ըերկային յայնպի սի քաջայարմար դիրս, զի դէտն կարէր ՚ի հեռուստ տեսանել զամ՝ որ ինչ լինէր ՚ի ծովու ։ և ըհկոկն որք մաանէին՝ ոչ կարէին տեսանել զըրջանս նւհն դաստին ։ նաև նոյն իսկ նաևք վճռկանաց ՚ի մատանելն ոչ կարէին վազվաղակի տեսանել զմասնաւոր նւհն զիստս ։ վո՞ զի կրկին պարսպօք փակեալ էին ։ և առանց անցանելց ը մէջ այնց պարսպաց, գոյր անդ արտաքուստ ծոց կմ նեղուց, որ հանէր ՚ի քաղաքն ։

Իսկ շրջապատ բոլոր քղքին՝ էր 360 ասպարէդ ։ ֆ 45 մկոն ։ զարդարեալ բազմապատիկ մեծակառուց շնուռածովք ։ և լցել զեղել փարթամուրք, և հըռ զակաւոր ը ամ ոչ վո՞ դպրուե, կմ վո՞ ընտիրքա զաքականուե, և իմաստուն օրինաց, կմ վո՞ ար դարուե և կրօնի, և լաւաբարոյուե, քզի յայսո սիկ միշտ նուազեալ գաաւ կարկեդոն, և հկոկքն յանդիմանեցաւ ։ գազանաբարոյուեք ասեմ, անհաւ տարարմուք, դժողուք ։ և կրօն նր կուսպաշտուե անդթական և զազրոտի ։ պաշտամունքն զենմունք մարդկեզէն զոհից ։ անառակուէք պիղծք ՚ի պատին սրծոյն ափրոդիտեայ ևն ։ ԱՅԼ հոչակաւոր եզե վո՞ պտղմական քաջուեց, վո՞ յաջողակ և համատարած վճռկանուե, և վո՞ անբաւ ծոխուե գանձուց ։ որ և ը դարս ինչ պայծառացել փոյլեցաւ յթի ։ այլ հուսկ յետոյ հիմնայտտակ արարաւ ՚ի հռով մայեցւոց ։ ոնդ ՚ի վեր անդր պատմեցաք ։

Ապա զկնի ամաց ինչ հռովմայեցեք առաքեցին անդր դազթական ։ որք առաջնորդուք կոյոսի դրակոսի միոյ յերից իշխանաց անտի հռովմայ շնեցին անդ.

քղք, բայց ոչ 'ի նմին տեղով, ուր էր կարկեդոն քղքն, այլ փղքը մի 'ի բացեայ. և անոնանցին զնա Յանոնիտ. յանուն յունոնի շածոյն. իբր զի բանաստեղծք առասպելէին, [թէ առաջին կարկեդոն էր լը խնամակալութ յունոնի. ապա յետ 20 ամաց և իբր 100 ամք զկնի կործանման իւրոյ, յուլիոս կայսր կամեցեալ և ևս ըարձակել զնա և 'ի նախնի վայելունի իւր հասուցանել, առաքեաց անդր և այլ գաղթական 'ի հոռվմայ. և թէնդա փութով մեռաւ յուլիոս, բայց շինուն քղքին ոչ խափանեցաւ. և 'ի ժմկս ծոկ սարաբոնի ոչ գոյր յափրիկէ քղք այնակս բաղմամարդ, որպատ զնոր կարկեդոն: Յետ այնորիկ և ևս մեծացաւ, մինչեւ լինել նր առաջին մայրաքղք ոչ միայն հիւստոսական ափրիկոյ, այլև համօրէն հոռվմեական ափրիկոյ. և թէ ոկտ և անտիոք ասորւոց՝ և աղեքսանդրիա եգիպտոսի՝ մեծ և երեւլի էին առ նովին ժմկօք, սակայն տակաւին զսա անոնանէին քղք մեծ հոռվմայեց ւոց տրուե զկնի հոռվմայ:

Առա յամի 439 գենսերիկոս արքայ վանդալաց է առ զսյս նոր կարկեդոն: որում տիրեցին յաջորդք նր մինչեւ 'ի ժմկս մեծին յուստիանոսի կայսոր. առ որով բելիսարիոս սպարապետ նր, եկել յափրիկէ, եմուա 'ի կարկեդոն խաղաղութեալ առանց ինչ դիմամարտուել ուրուք. ինընակամ անձնատուր լինելով նմ դիլիմերոսի վերջին թղթի վանդալաց: Եւ քղք յուստիանոս կայսոր յօժարամիտ էր 'ի շինուն շնունածոց, ետ նորոգել զավտրիմապս քղքին. շնունաց և եկեղեցիս, և մի հոյակապ բաղանի, և սմբոց, և մենաստան միանձտնոց: Եկաց մնաց քաղաքս լը տրութ արեւելեան կայսերաց մինչեւ ցղեռն դիսս կայսրն. առ որով արաբացիք մահմէտականք առին զնա, և մինչեւ ցհիմունս քանդեցին. և այնուհետեւ ոչ ևս շնունեցաւ: Եկեղեցին կարկեդոնի յերկրորդ դարուց անտի երեւլի էր յոյժ և մեծարդի: և ամոռու մետրապոլիտին համօրէն բիւտակենեանդաւառին զոր հոլօնեաց և սբն կիսպրիանոս: առաւելք զբան ժողովս ենկաց գումարեցան 'ի նմ: անդնաւ տերութիւնոս: և հոչակաւոր բանաստեղծն տերենախոս:

Յաւերակս որք մնացին 'ի հոյակապ քղքէ աստի՝ յաւէտ երեւլի է ջրմուղ նր: շնունած որ հիացու, յանէ զտեսօղս: զի 60 մղնաւափ հեւաւորութեալ գոյ հասանէ մինչեւ 'ի քղքն անցել ը լերին և ը ձորս

ձորս և ը գալուս . բարձրութե կամարաց նր 130
բանավափ . աղջոյն 'ի մոխրագոյն որձաքար ամրակուռ
վիմաց մածուցելոց ը միմեանս 'ի ձեռն կարծր և
սաստիկ մածուցիկ շաղախոյ : Ասի թէ արհեստ
բաղադրուե այնր մասնաւոր շաղախոյ , պահի մինչեւ
ցոյժմ առ մուղիս : Խոկ ջրմուզն որ 'ի վր կամա-
րաց էր և ոտնաշափ լայն . և 8 խոր : 'Նայնորս եր-
և ելի են և գուբք կմ ջրեղջքյորս զեղել հաւաքէին
ջուրք , և կեալք ը ջրանցիկո մինչեւ 'ի ներքս 'ի քա-
ղաքն . ամ գուբք հաւասարաշափ էին . յթ 100 ոտ-
նաշափ երկայն . 20 լայն . և 30 խոր . որք մօտ էին
միմեանց և հազարդութե ունեին ը միմեանս : Յա-
ւերակս անդ գտանին երեկն և դրամք սակիք և
արծաթիք , և յայլոց հրահալելեաց . յորոց յոմանոտ
դրումել կայ 'ի միոյ կողմանէ խալամ ձիոյ , և իրան
մարդոյ . խոկ 'ի միւռ կողմանէ տառք ինչ 'ի նախնի
լեզու փիւնիկեցւոց : Խալամն ձիոյ էր նշան կմ
կնիք նախնի կարկեդոնացւոց . որ և պահառ ետ
բանաստեղծից առասպելել , թէ յունոն չուծն ա-
ռաջն հիմնադրողաց կարկեդոնի 'ի ցոյց զտեղի 'ի
շնել անդ զբաք . ուր և գտին ը հողով զխալամ
ձիոյ . զոր մեկնեցին 'ի բարի գուշակուե վոյ լինե-
լոյ ձիոյն ազնիւ , վաստակաւոր , և պատերազմա-
կան :

Արևետա . կմ Գուշերա : Ե ամրոց կառուցել 'ի բարձ-
րաւանդակի , առ բերանով լճի կմ ծոցոյ , որ յա-
նուն նր կոչվ լիճ , կմ ծոց կոլէդայի . երկու գը-
զեակք են անդ . մի 'ի բարձրաւանդակ վայրի , որ
սկզբնաւորել է 'ի մուղըեաց , և աւարուել 'ի սպա-
նիացւոց . իսկ զերկգն ետ շինել ահմէտ տային
թունուսի . քզի տեսանէր զի չեքուիրի նաւք մալ-
գացւոց համարձակ մատանէին 'ի ծոցն . և գնային մատ
թունուս քզքի , ոչ ինչ երկուցել 'ի հրազինուց ան-
տի վերին ամրոցին , որ գոլով 'ի բարձր վայրի ,
ռումբք արձակեալք 'ի բարձանց անցանէին . վոյ
նա ինքն ահմէտ տային ետ շինել զոյլ ամրոց 'ի
ցածադոյն վայրի դրեթէ ը հւորաւե երեսաց ջուրց
ծովու : Ընդ մէջ այսց 'երկուց ամրոցաց են երկու
առունք կմ սպարանք , և 'ի ծովու նեղուց 'որ հանէ
'ի լիճն թունուսի . ուր խորուի ջրոյն հազին հա-
սանէ 'ի չափ 5 թզաց : Ոմանք յ հադրաց վրիպսնօք
համարեցան , թէ կոլէդա բերգն իցէ նախնի կա-
ւերա կզզին յիշտիեալ 'ի պաղպամեայ . այլ նա ոչ ու-
բեք յ իշատակէ զայս անուն կզզի . սցլ զ Գալաթէ , որ

Է նոյն խակ կղզի, դոր այժմ կաւիլէ կոչեն. իսկ
այլք համարին թէ իցէ կովան կղզին յիշտկելն 'ի
պլինիոսէ: Յայս բերդ գտանի քանա, կմ արդե-
ղան վ՛ գերեաց քրիստոնէից. և մաքսատուն. և
նաւահանգիստ. երկու մզկիթք. և բզմ համբարա-
նոցք, չը մաղաղաք. վոյ և բերէ զնմանուն քղքի.
Պիստոր. որ 'ի բարբառ արաբացւոց նշնկէ որդի
լմի. քղի է առ ծովածոցով՝ որ բերէ զնմանուն թի
լմի. կոչի և Պիստոր: Ե, քղք մեծ բարեշէն, և
երկդ զկնի թունուսի յայսմ նահանգի՝ յարևելեան
կողմն սպիտակ սարին. շրջապատնր թէ կողա չէ այն-
չափ մեծ, բայց բազմամարդ է. զի ունի 6000 տունս
և առելի: Գլխաւոր շինուածք նր են երկու բանտք
մեծամեծք. և հօրկց շուեմարան. և երկու աշտա-
բակք կառուցեալք 'ի սպաշտոպանուն նաւահանգստի
քղքի. զի ունի և նոհնդիստ մեծ յոյժ և յալող,
որ և է տեղի ասլաւինի նաւուց հինից բարբարո-
սաց: Ոմանք հսմունեցան թէ քղքս այս իցէ նախ-
նի Ռուբու քղք մեծ, և անուանի 'ի պանձևս պտղ-
մին պոմպէոսի, և մահուն կատոնի. բայց ոչինչ
նշանաւ հնար է ցուցանել զայն: Ըուրչ զնոցով
պէնսարդեայ՝ բնակին առ շատը շնականք, և ձկնորսք,
քղի ձուկն բզմ բերէ, մենդ մանր գլբին: 'Ի շր-
ջակայ վիճակի սորին քղքի՝ է դաշտ ըարձակ, զոր
նախնիք Կուտուզէն կոչէին, արդաւանդ յոյժ. ուր
դտանին ձիթենիք մեծամեծք արտաքոյ սովորական
կարգի:

Փարինէան նաւահանգիստ. 'ի բարբառ արաբացւոց կո-
ւ յըհա: Ե, նոհնդիստ՝ զոր բկմք յագրաց իրա-
ւացի նշանոք համարին լինել նախնի Ռուբու քղք
հռուլմայեցւոց. ուր մեռաւ լուդովիկոս թղթ գաղ-
ղիացւոց 'ի պտղմի, 'ի դարձի իւրում 'ի սը երկրէն:
Նապէւ: Ե, քղք փոքր ծովեղերեայ. 9 մղննաւ հե-
ռի 'ի թունուսէ. շինեսուլ 'ի նախնի հռովմայեցւոց.
զոր յիշաւակէ պաղումէոս, և այլ նախնի աագերք
Նեպուիս կոչելով. ոոկ և այժմ իտալացիք և այլք
յեւրոպացւոց կոչեն 'Նեպուիս բարբարոսաց: Յանց-
եալ դարսն ծաղկել էր յոյժ և բազմամարդ. իսկ
այժմ եղծեալ գլխովին. ուր շինականք և եթ. և
սակաւ ոմանք պարտիզպանք բնակին:

Սուլա, կմ Սուլա: Ե, քղք երեւելի տրուեն թունու-
սի. կառուցել 'ի ժայռի մերձ 'ի ծովի, 25 մլունաւ
հեռի 'ի թունուսէ՝ յոյնիոյս ոլոնոյ սարաւանգա-
կին հանդէպ փանթէլարիա կղզւոյն. ուստի և ա-

ոտել մօտ սիկլինոյ, ք զայլ նմ քղքս ափրիկց : Առաջին հիմնադիր նր եղեն նախնի հռովմայեցիք . և թ պինչինկայ թունի լինիլ Ալեքս-Ներոն . զոր ստրա-րոն և ստեփաննոս՝ Ալեքս-Ներոն . կմ Ալեքս-Ներոն . պլուտարքոս և կատոն Ալեքս-Ներոն . զոր և ասեն լեալ մայրաքղք բիւսակենայ դւոխն : Առունի նա-ւահանդիստ մեծ և քաջադէպ . յառաջին ժմկս ծաղ-կեալ էր և բարգաւաճ բազմութ բնակչաց, և վա-ճառականութ , այլ այժմ ոչ նոյնութ . բնակիչք նր առաւել քղքական են, ընտել և համբոյր ք զայլ ամ ժողովուրդս բարբարոսաց նի . որոց մեծ մասն նաւավարք են . իսկ այլք վճռկանք, որք յածին 'ի նէ հնդիստս արևելեայց, և օսմանեան թրութեն : Մերձ առ այս քղք . զոր քրիստոնեայք կամէին առ-նուլ 'ի ձեռաց տաճկաց, մեռ-սւ 'ի մարտի փիլ-քերառոս մեծ իշխանն ստբաւդիոյ կմ սաւոյայի .

ուր անկան և բջիք յասպետացն մալդայի : Ալեքս-Ներոն . զոր բնակիչք նր Մէկէդիտ կոչեն . որ թունի լինել նախնի Ալեքս-Ներոն յիշատակեալն 'ի պաղոմեայ : Ե քղք ծովեղերեայ շինել 'ի լեզու ինչ հողոյ 'ի խալֆէէ գոյրէվանայ . կմ գարվանայ . 'ի ցամսքակողմն ունի ամբուկուռ պարիսպս, խրամս . և աշտարակս . այլ 'ի ծովակողմն փիմկ պարսպաց և սյլոց ամբուեց՝ ունի աւազակոյտ խաղիտազս, որք ոչ ներեն նաւուց մերձենալ 'ի քղք անդր . ունի նէ հնդիստս մեծ յոյժ , և ըարձակ բաւական հօ նաւուց . բայց մուտ նր այնչափ նեղ է, զի հազիւ կարէ մասնել ը այն մի միայն չեքտիրի 'ի ձեռն թիա-վարութեն . դուռն ցամսքակողման քղքին՝ հզօր է յոյժ . ունելով 'ի վր աշտարակս, և պատշիամբս կա-մարայարկս : Այս քղք ը բջմ ժմկս եղեւ ը թրութ թղրց թունուսի . ապա էանց 'ի ձեռու խայրատտինի . որ կացոյց նմ կովար զհասան հէրպին զմերձաւոր աղքակից իւր . զոր բնակիչք քղքին տարագրել թու-թափեցին յանձանց զլուծ խայրատտինի . ապա 'ի 1550 Տրակուդ իշխան գարապլուսոյ՝ կաշառել զմե-ծամեծս քղքին , էառ զքղքն 'ի ձեռն մատնուեն նց : Քադուպիս իշխան փոքր ծովեղերեայ 'ի հարաւա-կողմն ափրիկեայ կմ մէհէտիայ :

Գայրէշն . կմ Գայրէշն : Քաղաք մեծ 'ի ցամսքա-կողմն 'ի լայնարձակ աւազուտ և անբեր գաշտա-վայրի . 28 մզոնաւ հեռի 'ի ծովէ . և 80 'ի թունու-սէ . այլ բնակիչք նր տու համեմատութ ըարձակուե-իւրոյ սակաւ են : Զայս քղք շինեաց դ օսման յա- Հորդ

Հորդ մահմէտի 1652. իրոց պատսպարտն զինուց վկա զօրաց իւրոց . զօր և պատեաց աղիւսակիւրա պարսպօք . և ամբացոյց աշաարակօք . կառոյց ինը և մզկիթ մի մեծաշէն , զարդարեալ մարմարիսնեաց սեամբք . յորոց միջն են երկու սքամնչելի սիւնք մեծամեծք և միաստանիք պայծառ կարմրագոյն և շող շողիւն . ունելով ի վլ մանր նիշս սպիտակս լը որոր փերեան կճոյ : Կարի անունանի է քղքս այս և ի յարդի առ մահմէտականս վկա լինելոց նր հմանեալ ի վերոգրել օտանայ . հաստատել ունելով ի մարի թէ թաղետլքն ի նմ ոչ գնան ի գտնպրառն վկա ազօթից օրէնտղրի իւրեանց , և ոյլոց նորին յաջորդաց . ուստի և է սա ուխտառեղի նց . և պատմի թէ ի գնալնանդ յունոտ մեծամեծաց տանկաց բոկ ուն մատնեն ի քղքն :

Ուրդս : Քղք մեծ կառուցել ի գեղեցիկ գաշտավայրի . ի հրւակողմն թունզւսի . իբրհ չո մզոնաւ հեռի ի նմէ . ի հնումն էր քղք հոյակապ , և ծաղկեալ յոյժ . թառախիս կոցեցել . և բնակիչք նր հռովմայեցեք . գտանին անդ մինչև ցայսօր մնացունածք ինչ նախնի մեծուե նր . որ կճեայ արձանիք . լատին գրուածք ի վլ գրանց իւրոց , և ի վլ վեճաց պարըսպացն , որք են գործք ոյնիր գարու : Ունի և ոյթմ դղեակ , առ որով անցանէ փոքրիկ գետակ ածեալ անդր լը քարաշէն ջրմուղս :

Պէյա . կմ Պէյան : և կմ Պէյան : Է քղք ը զառի վայր բլորոյ իւրեւ 8 մզանաւ հեռի ի ծովէ . յարքունի Ճնոպհի որ հանէ ի կոստանդիս . շինել ի նախնի հռովմայեցւոց . և մինչև ցայժմ պահեալ յիւրում բարեշէն և ծաղկել վիճակի : Ըրջակայերի նր պարարտ է և արդաւանդ . բերէ ցորեան այնշափ առատ , մինչև առատութիւն ցորենոյ նր յառակս լինել առ արարացիս :

Գաղքա : Քաղաք ի յարեւմնեան հարաւ գայրէվանայ . որ է նշանաւոր սակա սմբակուռ պարսպաց ամրոցի իւրոյ . որ է գործ նախնի մեծագործ հառվ մայեցւոց :

Սական . կմ Սական : Աւան ի գլուխ համանուն լերին 6 մզոնաւ ևեթ հեռի ի թունուսէ . բնակիչք այսր լերին վրանարնակ են . և գործ նց է գարմանել անասունս , և բեթակս մեղմաց . յորոց մեղք բշմ հաւաքեն և վաճառեն . նոյնպս և բնակիչք այլոց շաջակայ լերմանց՝ սոյն օրինակ կեանս վարեն . զե և նք վրանասորք են . որք 200 . 300 ի մի խումբ

հաւաքել, ձեսցուցանեն զգեօղ շարժական . զի « Տիան հաստատուն 'ի միում վայրի , այլ անդադար յածել թափառին ասու և անդ 'ի գտանել արօտս տնաօնոց իւրեանց : Զվրանս հարկանեն բոլորաձե մօտ առ մօտ թողել նեղ անցս Ճնդի անջրապետ 'ի մէջ երկուց վբանաց . և 'ի միջի անդ լայնարձակ տեղի՝ ուր կերակրեն զանտառունս իւրեանց . Վյ ընակութի նց 'ի հեռուստ երեխ իրրե գեօղ մեծ : 'ի շրջակայս այսր լերին՝ գտանին բկմ աւերակք վաղնջական բերդից կառուցելոց 'ի նախնի հուով մայեցւոց . ուղ ցուցանեն լատին գրուածք 'ի վէպս քանդակեալք :

Լամբէդաւուս . Լինուս . և Բանդաւարիա : Ե՞ն երեք փոքրիկ կզղիք յարեելեան կողմն թունուս քղթի , ը որոյ իշխանութե էին 'ի նախնումն , այլ այժմ երկու 'ի նցէ են ը տրութե ասպետացն մալդայի . իսկ երդորդն ը մասնաւոր իշխանաւ 'ի ներքոյ պաշտպանութեան սպանիացւոց :

Դապարիա : Փոքրիկ կզղի յարեմանեան կողմն թունուսի , ը տրութե իշխանի Ճննուացւոյ 'ի լըմելեանց տոհմէ :

Համանէր : Քաղաք ծովեզերեայ ը մէջ սուզայի և նապէլայ :

Յօդ Շ . Ճեղայէր . իտ" ԱլՃէրի .

(1. Աշխան . Տա .) **Ճ**աշխարհ ը արձակ , որ սլարաւ բած :) **Ճ**արէ զբովանդակ տարածութիւն երկրին , զոր նախնիք կոչէին Նադրիա , Մաւրիսանիա իշխարեայն . որ էր մասն նուժութիոյ : Բայց չէ սլարա շփոթել զնումիդիայն ը մաւրիտանիոյ . վազ զի սկող՝ ուղ և այլ նախնի Շագիլք յայտնապս զանազանեն զնս . բաժանելով զմաւրիտանիայն յերկու մասունս , ը բաժանման զոր արար կղոդիսս կայսր . ին 'ի տինգանի՝ որ էր բուն մաւրիտանիայն . և 'ի կեսարեայն՝ որ էր յարեելեան կողմն մաւրիտանիոյ տինգանի . ուղ դնէ և մերս խորենացի : 'ի կեսարիա անունանէս՝ ել Ճեղայէր անունս . զի ը բնիկ հնչիան լատինացւոց * Մաւրիդանիա Զեղաւ ը իւնգիս * լսի . և մայրաքղքն՝ * Եսուլիս Ջեղաւէս . Չոր ապա յետագայք դարձուցին 'ի Ճեղայէր . և

աղջատմամբ ումկ . Ճեզայիր : Քզի Ճեզայիր՝ ի բար
բառ տրաբացւոց՝ է բնշնորականն անոնքանս Ճե-
զիրէ . որ նշանակէ կղզի . որ է անուն անյարմար
այսր նահանդի : Տես և ստորև՝ ի ստորագրուե մայ-
րաքղքին : Այլ առ յայանագոյն լինելոյ իրացգ ,
կարեոր է զորոշ ծանօթուն ինչ տալ յայամ վայրի՝
վլ այսց երկուց նահանգաց ափրիկոյ . որ կարի հը-
շակաւոր են՝ ի պատմուիս հոռվմայեցւոց :

ԱՐԴ՝ Նուժիա լը նախնի Յագրաց ձգել տարածէր
առ երի միջերկրական ծովու . և յերկու գլխաւոր
մասունս բաժանէր . յու ՚ի Նուժիա Մասսենիշաշոյ .
և ՚ի Նուժիա Մասսիշաշոյ . լը երկուց երեւելի ազգաց
և ժողովրդոց՝ որք էին ՚ի նմա , յորմամ ծանուցաւ
հոռվմայեցւոց . բայց զանազան օրինակաւ աւանդեն
զայս երկու բաժանումն : Պոմագոնիոս մելա՝ նուժի-
գիա կոչէ զմասսեսիղեանն . զոր դնէ՝ ՚ի մեջ մուլու-
քայ , և ամփսակայ գեաց . յաւելել ՚ի նմ և զմասն
ինչ ՚ի մասսիղեանն նուժիգիոյ , զի և զիկրատ քղքն
՚ի նուժիգիա դնէ . որ էր յայնկոյս ամպսակայ գե-
աց . և զմասցեալն տայ առանձնական ափրիկոյ : Իսկ
պլինիոս՝ որ յայլ տեղիս զհետ երթայ մելայ , աստ
խոտորի ՚ի նմ . զի զմասսեսիղեանն , որ կոչիւր և
թղբունի սիւփակայ , կոչէ Մարդկանիս իւսուբեայ , իսկ
՚Նուժիա միսյն զմասսիղեանն կոչէ , ՚ի պաղպմեայ
՚Նուժիա ունոնանել . զոր և երկոքին աստ սոս-
քագրեն : Ոչ և զինի տիրելոյ հոռվմայեցւոց այսց
երկուց նուժիգիոյից . որ և ունէր յայնժմ իւր սահ-
ման ՚ի հիւսիսոյ՝ զծովն միջերկրական . յարեւելց՝ ըզ-
հիւպատոսական դւան հոռվմայեցւոց , որ այժմ է
տրեմսեան մասն թունուսի տրուե . ՚ի հարաւոյ՝
զներքին լիբիա . զոր այժմ կոչւմք միջերկրական Յ
բարբարոսաց . կմ Պիլէափիւլձէրիտ . իսկ յարեւմտից՝
զմասսեսիղեան նուժիգիա . որ այն ինքն է մաւրի-
տանիա կեսարեայ . և ՚ի Ժմիս քրիստոնէուե ունէր

121 Եղուարանս :

Իսկ Մասսենիշանն նուժիան տիրանդս կոչեւր Մա-
րդկանիա իւսուբեայ . որ էր յարեւմտեան կողմն բնիկ նու-
ժիգիոյ . և ձգել տարածէր մինչև ցմուլլիս կմ մաշվա-
դեան . որով բաժանէր՝ ՚ի մաւրիտանիոյ տինդանւոյ .
և յերկոսին՝ ՚ի սո . յու ՚ի կեսարեայն և ՚ի տինդանւոյն՝
՚ի Ե դարուն էին 226 եղուարանք : Յայսցանէ յայտ
է թէ վրիսպի քլուվիրիոս երեւելի հագիրն , որ հա-
մարի թէ նախնի հոռվմայեցիք նուժիգիա կոչին
զիսչա դւան . որ է ՚ի միջերկրական ՚ի բարբար-

ուց . այլ տիրանգո կոչեին նումդդիա զայս մամն
ափրիկոյ . զոր այժմ մեք ճէզայեր , կմ թրուի ճէ
զայերի առեմք . որ և ունի իւր սահման յարեւելց
վթունուս . յարեւետից՝ զֆէս . 'ի հարաւոյ՝ զմիջերկ
բական Շ բարբարուաց . իսկ 'ի հիւսիսոյ՝ զծովն
միջերերեայ . առ որով ձգի ՛ երկայն իբրև 500 մզրն
տցոփ տարածութ՝ 'ի գաղարքայ գետոյ մինչ 'ի ֆի-
կալոն սարն . և ըսվանդակ տարածութնից լը հաշոն
ումանց հննէ ց40 հըլք քառակուսի մղոն Շագրական :

(2. Գէտի :) Եյս նահանգ բշմ գետս ունի . այլ
դրեթէ տմբն փաքրեն , և սակաւածւր .

յորոց զոմանս յառաջիկայդ ստորագրեացուք :
Հառետ Ջիր : Ելանէ յագլանդեան լերանց , և հոսել
ը հիւսիս , խառնի յայլ գետ 'ի խումառա կոչեցել
գաշտի . և ոռ արզէվ կմ արզէոն քղքաւ գոխնեալ
զանունն , այնուշիտե կոչի Ջիրետ . ապա գնայ տն-
կանի 'ի ծովին . ջուր նը մաքուր է և ականակիտ . և
ձուկն բշմ 'ի նմբ :

Միւս . 'ի պտղոմեայ Քիւնաթ անունանեալ : Ելանէ
նոյնպէս յագլանդեան լերանց . և անցեալ ՛ աւա-
զուտ և ը անիբեր անապատա՝ ուր է պարթատա
քղք , գնայ ը հիւսիս , և մտանէ 'ի ծովին միջերերա-
կան ը ծոց արզէվ քղքի . բնակիչք տեղւոյն ու կո-
չեն զնա մինա , այլ Ջիր . յանուն ուրումն սբյ իւր-
եանց . որ նորոգեաց զպարթատա քղք զբանդեալն
'ի խալիքիյից պէնինիերեանց :

Թէւիք . որ և Շէւեիք . 'ի հն' Քարենո կոչեցել :
Ելանէ 'ի կուալնէշեքիս լեռնէ . և անցել ՛ ամայի
անապատա , գնայ մտանէ 'ի ծովին առ գէնիս . կմ
գէնէզ քաղաքաւ : Խակ յայժմեան Շացոյցս ակն նը
եղեալ կայ 'ի միջերերական Շին բարբարոսաց . և
անափ հոսել ը հիւսիս , գործէ զթիթէրի լիձն . և
աւկա գնայ անկանի 'ի միջերերական ծովին առ միւս-

գիկան քղքաւ :

Հառետ իւր , որ թուի լինել Գէրէն գետն յիշոկել
'ի պտղոմեայ : Սա ևս (ող և այլք) ելանէ յագլանդ-
եան լերանց 'ի կողմն պիլէտիւլմէրիտայ , և գնայ
անկանի 'ի ծովին միջերերական յարեւելեան կողմն մէ-
գէյա քղքաւ :

Հառետ ըււըդիր . որ կոչի և Ջինինէր : Ելանէ 'ի գա-
ւառէն զէպայ , և ուրեք ուրեք գահավէժ հոսել 'ի
բարձրաբերձ լերանց , գնայ մտանէ 'ի ծովին առ սիր-

մէյա քղքաւ :

Սուբէճէնար : Անցանէ առ կոստանտին քղբաւ , և
գնայ մոսանէ 'ի ծովիշյարելելեան կողմն սարին պա-
կասաց :

(3. ՕՐ Ն ԲԵՐԻ :) () դ և բաժին այսր Շիքաղցը է
և բարեխառն . ոչ սաստիկ տօթա-
գին յամառան , և ոչ կարի ցուրտ 'ի ձմեռան . ծառք
նր ը ամս ողջոյն կան մնան 'ի դաշլարուե . 'ի փետըր-
վարի արձակեն ծաղիկո . և յաղրիլի սկսանին հա-
սուցանել զպտուզս . իսկ 'ի յունիսի հասանեն և
խաղաղք :

Երկեր նր ը մեծի մասին աւազուտ է և անբեր
մւնդ 'ի հարաւային կողմանս . այլ առ միջերկրական
ծովու ունի դաշտու արդաւանդո . և արօտու անասնոց
խոտաւետու . նոյնոպս և յարեւմուեան կողմանս ունի
լոյնարձակ մարդադետինս . և անդաստանս ցորե-
նոյ , և այլոց արմաւեաց առատարքերս . և հովիսամ
բարեբերս , որք բաց 'ի ցորենոյ բերեն և աղդի աղ-
դի պատուական պատուզս , ոոպ և խաղող ազնիւ .
և ասի , թէ գատանին անդ որթք այնչափ սառնարք ,
մինչ հազիւ հնար է 'ի մէջ երկոցունց բազկաց ամ-
փոփել , և ողկոյզք նոյ մեծամեծք իբրև ոտնաշափ
մի և կեռ ը երկայնուե : Արդ՝ գլխաւոր բերք նր
են ցորեան և այլ արմուիք . և աղդի աղդի պատուա-
կան պատուզք . յորս անունանի է արմաւեն , և սեխին
քաղցրահամ , որոյ երկու են աւեսակք . մինն հասանէ
յամառան , իսկ միւսն 'ի ձմեռան . նոյնոպս և խաղող
նր աղնիւ : Ունի և բազմատեսակ բանջարս պատուա-
կանս 'ի կերակուր և 'ի գեղորայս . այլև մեզք , և
մում , և խաշն , և արջառ : Գտանին անդ դադանք
վայրենիք որջացելք 'ի լայնածաւալ անսակստո նր .
զք առիւծ , եղջերու , այծեամին , կատիկ , ջայլամն ,
և այլ շահազան դաշանք և թուզունք վայրենիք և
ընտանիք :

(4. Վաճ' :) Ա աճառականուն ճշզայերի յառաջին
ժմկս ծաղկեալ եր յոյժ . այլ այժմ ոչ
նոյնոպս . գլխաւոր նւհնդիսուք և վճռտեղիք նր են
Ճեպայեր . Քալչ . Պառ . և Քալչլ . ուր յեւրոպաց
ւոց անահի առաւելապէս երեխն անգղիացիք , գաղ-
ղնացիք , և հրեայք լիվանայի . որք առնին անդը
ոսկեթել գիսպակս , և այլ աղդի աղդի կերպասս ,
կտաւու , և ըեւհեզս , չախոյ , նիւթա դեղորեկից ,
սղմնաձ անտիկ , լեղակ , որդան կարմիր , կիմառարիս ,
բամ :

բամբակէ, խաչվէլ, շաքար, արջասապ, գինի, ցըի, աֆիտն, խէժ, թուղթ, հրացան, այն է՝ թիւֆէնկ. և այլ ազգի ազգի զէնս, և կարասիս նաւուց։ Եւ փոխարէն՝ առնուն ՚ինչէ մում, ասր պատուական, մօրթս ընտանի և վայրենի անասնոց, փետուրս ջայլեման, ցորեան, արմաւ, իւղ ձիթոյ, և այլ զնկն առասկս վաճառաց, զորս ճեղայէրեցիք աւազակութ՝ ՚ի ձեռս բերեն։

Քանզի իբր սեփական գործ է նց առարտակել ՚ի ծովու, և հարկանել առնուլ զնաւս քրիստոնէից. յորս զոր ինչ գտանեն թէ մարդ իցէ՝ և թէ այլ ինչ իրք՝ յափշտակեն զամ. յորոց զութերդ մասն առէեալ տայիին՝ զմնացեալն բաժանեն ՚ի մէջ իւրեանց. և այն է գլխաւոր վաճառ նց. յորմէ ինչ վաճառեն և նոցին իսկ եւրոպացւոց. մնդ զմարդակերիս։ Այլ զմեծագոյն մասն այնոցիկ՝ վաճառեն հրէից. քը հրէայք բիշ են անդ. որք և են դիսաւոր վճռկանք՝ ՚ի ճէ զայէր, ոող և յայլ ծովի. զերեայ քղքս բարբարոսաց ՚ի, զորս ապա նք փոքր փոքր վաճառեն անդէն. կմ բարձեալ տանին յայլ վճռաւեղիս, որով և բղմո շահին. վա զի դիւրագին տունուն ՚ի նշէ, և ինքեանք մեծագնի վաճառեն։ ՚Սաև մուզրիք առնեն ՚ի ճէ զայէր վճռկանւիս, ոող և տաճիկք. բայց վճռկանուի տաճկաց ՚ի տակաւ իրս ամփոփեալ է. յի միայն ՚ի դերիս, ՚ի զէնս. և յայլ զնշն գործիս պտղվի։ ՚Սաւք տաճկաց և մուզրիք որք մտանեն ՚ի նաւահանգիստ նց՝ վճարեն շօ զնշ սակս խարիսխ տրկանելոյ անդր. և ՚ի քրիստոնէից նք որք խաղաղութ են ը ճէ զայէրեցւոց՝ 40 զնշ։ իսկ այլք որք թշնամուի և պտղմունին ը նո զիրկ։ ՚Նապատիկն վճարեն. յի 80 զնշ։

Ճէ զայէրեցիք ունին զայս գովելի սովորութի, զի զնաւս ամսաւր ազգաց, թէնդա և թշնամութ իցեն ը նո՛, յորժամ մտանեն ՚ի նւհնգիստ նց՝ առնուն ը իւրեանց պաշապանութ. և ը հկեկն եթէ դոցեն զնս ՚ի ծովու, նաև անդէն իսկ յելս ՚ի նւհնգստէ, համարձակ ՚ի վը յարձակին, ունելով զիս իրեւ օրի ՚նաւոր աւար իւրեանց. և այս իսկ է պտճան, զի ոմանք ՚ի ծովելքերեայ մրուեց եւրոպացւոց՝ ամ ը ամէ մասնաւոր տուրս ինչ տան նշ իբրեւ ՚ի պարդեւ. զի մի միաս ինչ հասուսցեն ՚նաւուց իւրեանց։ իսկ մաքսն ՚ի վը մոմ ազդ վաճառաց որք մուծանին ՚ի նւհնգիստ նր ՚ի տաճկաց և մուզրեաց ոող և հրէից՝ է և սկէս ը հարիւրոյ. բայց անդշիացիք ը դաշ-

նադրուեն, զոր 'ի 1703 արարին ը նո վա վճացն՝ զորս մուծանեն, և եեթ ը հարիւրոյ վճարեն. և 2 վա վճաց զոր հանեն անտի : (Նոր թէ և գաղղիացիք ունին անդ զնոյն աշատութեն : Իսկ վա առձեռն (ֆրանալտ) դրամոց, զոր տանին անդր 'ի գնել վաճառս, նոյնչափ մաքս վճարեն . բայց 5 ը հարիւրոյ . բաց յայնց դրամոց՝ ոլք առաքին անդ 'ի գին փրկառաց գերեաց . զի վա այնոցիկ դերիս միայն ը հարիւրոյ վճարեն :

Գաղղիացիք, և անդղիացիք, ոոկ և այլք ոմանք 'ի ծովեղերեայ տրուեց եւրոպացւոց, ունին հիւպատոսս 'ի ճեղայեր քաք 'ի խնամակալուեն նաւուցիւրեանց : (Այլ 'ի մէջ ամցն առաւել շահաբեր վաճառկանունուիս առնէ անդ հիւլատոսսն անդղիացւոց . զի նա տայ նց վառօթս, հրազենս, ոռումբս, և այլ ազգի ազգի զէնս, և զամ' կարեւոր կահս և կարասիս նաւուց . և փոխարէն առնու ցորեան, իւղ ձիթոյ, ևն . զորս առաքէ 'ի նաւահանգիստն մաւոնայ, և 'ի ճիպիլդէռուայ : Վա այսր փոփոխ տուրեատուեն ազգն անդղիացւոց 'ի պատուի է 'ի ճեղայեր . և բիշմ աշատունս ունի անդ . ը որոց ճեղայերեցիք ջանան միշտ խաղաղութ մնալ : Եւ յիրաւի՝ վա զի 'ի ձեռա անդղիացւոց դոլով ճիպիլդէռուայն, ոոկ երբեմն և նւէնգիստն մաւոնայ, որ է հանդէպ ճեղայերի . յեղծանիլ խաղաղուեն՝ այնուշետե չէ հար ճեղայերեցւոց ելանել անդամ 'ի նաւահանգստէ իւրեանց, քշի զերծանիլ ոչ կարեն յանսկարտելի վինուց անդ զիացւոց :

(5. Աշետիկ, և Կամեցեալ նշանակել ինչ վա քակառչուն :) զաքական կառավարութեն այսր նի, կարեւոր է նախ յայսմ վայրի համառօտել զգնիքն անցս նր . քզի ըս բազմասլատիկ փոփոխուեց՝ որք ը դարս դարս եղեն 'ի նմ, պէս ոլէս եղեն և եղանակիք կառավարուեն նր : Արդ՝ առժմիզք կարիեդոնացւոց ուներ իւր սեփական թիքրս ինքնիշխանս . որք է զի՝ դաշնադիր էին ը հոռվմայեցիս, և է զի՝ մարատդիր ըդէմնց : 'Ի մէջ այլոց թիքց իւրոց երևելի հանգիստացան յուբա . սիփակէս . և մասսինիսա . սա 'ի մեռանիլ իւրում կացոյց ժառանդ տէրուեն իւրոյ զծերակոյտն հռովմայ . և այնուհետեւ նահանգս այս եկաց մնաց ը հոռվմայեցւոց տրուք : (Նոր 'ի մատանել վանդալաց յափրիկէ . ը այլոց նացն սիփրիկոյ՝ առին և զայս . այլ զինի Ճմից

Եմկը ինչ վանեւալ զի՞տ անտի բելիստարիոսի սպարապէտի յաւստիանոսի կայսեր , անդրէն ը տրութիւն կայսերաց նուաճեաց զան : Յետոյ 'ի է դարուն տրաբացի սարակինոսք մահմէտականիք տիրեցին նմ , և զնահանգն ողջոյն 'ի սուղ ժմկի յօրէնս իւրեանց դարձուցին . և այնուհետեւ ը բղմ ժմկս եկաց մնաց ը տրութիւն մազրուպայ և ֆէտի : 'ի 1492 մուզբէք տարագրելք 'ի սպանիոյ , անցին յափրիկէ . և առաւելանս 'ի ձեզոյէր . և անտի առ 'ի հանել զվբէժ 'ի սպանիացոց՝ ասպատակէին 'ի ծովեզերեայ սահմանո նց , հարկանէին քանդէին զծովեզերեայ քաղաքս , որք չեն այն շափքաջան պաշտպանեալ . և զբշմա 'ի բնակչաց նց գերի վարէին : Ապա կարգինալն քսիմէնէս այր կորովմիտ և արի , որ ը այն ժմկս էր առաջին պաշտօնատար և նախարար ե գերդինանդոսի արքայի արակոնայ , կումեցել սրհճակոծել զապարատանուի բարբարոսացն , 'ի 1505 հանդերձեալ կազմեաց նւհնդէս բղմ նաւուց , հանդերձ բազմուծեւն զօրօք . սպարապետ կարգել նց զիորովին պետրոս զկոմնն նաւառուայ . որոյ հասել յափրիկէ էաւ նախ զքզվքն օրանայ . ուր յայնժամ որշացել կային մուզբէք տարագրեալք 'ի կամանադայ , և 'ի վալէնցայ . և ապա զայլ բղմ ծովեզերեայ քաղաքս նր . ուղ և զփոքրիկ կզզին՝ որ է հանդէպ ծոցոյ ձեզայէր քզքի . յորմէ զարհուրել սէլիմ իշխանն ձեզայէրի , կոչեաց յօդնուի զծովչակաւորին խայրատտին . որ ը այն ժմկս ասպատակէիր 'ի միջերկրական ծովու : 'Նը վաղվազակի հասեալ անդր , և բղմ ցըն ծութիւն ընկալեալ 'ի ձեզայէրեցոց . փիկ ձեռնատուլինելոյ սէլիմին ըդէմ սպանիացոց , դաւաճանութ սպան զնա՝ մինչքեռ 'ի բազանիս էր . և ինքն կալաւ զարութիւն երկրին :

Եւ տհս աստի եղեւ սկիբզմն ինքնակալութ սոմանեանց ունիլ իշխանութիւն 'ի վը ձեզայէրի . որ եղեւ 'ի 1516 : Այլ սպանիացէք ոչինչ երկուցել 'ի դադանական սրամութիւն խայրատտինի՝ յամին որ զինի բազմութ նաւուց , և 10 հզր՝ զօրօք ելին առնուլ և զմէզայէր քզք . այն ինչ հանդէպ քզքին էին , և պատրաստէին 'ի վը յարձակիլ , ել 'ի ծովու մրրիկ սաստիկ . յորմէ ցիր և ցան եղեն նաւք նց . և շատք ևս բհարեալ յաւազուա՝ խորաակեցան : 'ի յաղթուէ աստի , զոր արար ծովի ըդէմ սպանիացոց , ևս առաւել մէծամնեալ սոմբարտաւանիէր խայրատտին . մինչև անհանդուրժէլի լինել մուզբէաց տեղ

ւոյն սակս անգթուել իւրոյ . վեց տպատամբեալք , կացուցին ինքեանց սպարապետ զթղրն դէնէսայ , և դիմեցին 'ի ձեզայէր քղք ըդէմ խայրատաինի . այլ 1000 սպառադէնք 'ի զօրաց անտի տաճկաց միաբանելլ ը 500 մուղրեաց՝ որք էին ը խայրատաինի , յաղթեցին 10 հզրաց եղելոց ը թղրին դէնէսայ . իսկ եղիելի թղրն փախուցել անկաւ 'ի լերինս աղւլանդեայ . և խայրատաին մտեալ 'ի դէնէս քղք . ետ հրատարակել զանձն թղր դէնէսայ :

'ի նմին ֆմկի յարեաւ խռովուն մեծ և 'ի գրէմէչէն քղք լժղրանիստ տրուել ինչ , որ անկանի 'ի հարաւոյ արևմտից օրանայ . և ասլսատամբք քղքին դիմեցին առ խայրատաին . որոյ անդէն վրժդկի առեալ զղօրս իւր , խաղաց գնաց ըդէմ թղրին գրէմէչէնայ . և պատահէլ միմեանց յանապատին անկատայ փախուտական արար զթղրն . զոր իւր իսկ հպատակք սպանեալ հատին զցլուխ նորա , և բերեալ մատուցին առ խայրատաին : Բայց տեսել նորա եթէ գժունարին էր նմ զայն տրուել այնչափ տարակաց 'ի ձեզայէր քղքէ պահէլ , ունելով 'ի թիկանց զցուպանիացիս ամրացելս յամուր բերդն օրանայ , յայն սակս արար հաշտուել ը թղրին ֆէսի . որ զայնու ֆմկու զօրաւոր էր ք զայլ տմ տրուես բարբարուաց նի : Այլ վայրապար եզե խայրատաինի այս զցուշաւորուել . քզի որդի մեռել թղրին գրէմէչէնայ , դիմեալ առ արքայն սպանիացւոց ինդրէր օդ նուել . վեց նա ինքն արքայն վզիզկի առաքեաց 10000 զօրս . որք առաջնորդուք իշխանին օրանայ 'հասին 'ի գրէմէչէն . նոյնու և խայրատաին վզվզկի եհասանեդր յօգնուել քղքին՝ ունելով ը իւր 5000 հեծելաղօր մուղրիս . և 1500 եէնիչէրիս . և մինչդեռ սուր 'ի ձեռին յարձակել 'ի հակատ անդր սպանիացւոց յաջ և ահեակ յուսահատարար շահատակէր , հարին զնա սպանիացիք և 'ի սայր սուսերի մաշեցին . ը նմին և զտմ զօրս նր կոտորեցին : Զայն հարունական լունել թղրին ֆէսի , որ դայր 20 հզրաւ յօդնութիւն խայրատաինի , և մօտ իսկ էր , դարձաւ անդրէն ը կրունկն . իսկ սպանիացւոց մտեալ 'ի գրէմէչէն , թղրեցուցին զօրդի թղրին զոր սպան խայրատաին . ապա իշխանն օրանայ դարձաւ անդրէն յօրան . և զզօրս՝ որք եկեալ եին 'ի սպանիոյ , դարձոյց 'ի սպանիս :

իսկ բնակիչք ձեզայէր քղքի փնտ խայրատաինի թղրեցուցին զեպայր նր վասյքատաին . որոյ իրաւ դեկ

զիկ լեռաւ, եթէ մուղբիք խորհնին հանել զնտ՝ ի թագաւորութիւն իւրմէ, դիմեաց առ սուլ սէլիմ ինքնական օսմանեանց, խնդրելով օգնուեն՝ ի նմէ. իսկ նա առաքեաց նիմ 2000 զօրս եէնիշէրիս • թող զայլ խառնազանձ սիկարեանս, որք ինքնակամ գնացել խառնեցան՝ ի նոր, որով զօրացել խայրատափնի՝ ոչ միայն զնորհուրդ մուղբեացն նանրացոյց, ը իշխանութիւն իւրով նուածելով զնոր, սյլե զսպանիացիս Նան՝ ի փոքրիկ կղզուոյ անտի, որ է հանդէպ ճեղայէր քղքի • և զիշղին միացաց ը ցամոք, ամբարտակ կիմ թումէ կառուցեալ՝ ի միջի, բազմացոյց և զնաւու հինից իւրոց :

Բայց այնուհետև թէրութիւն ճէզայէրի անկաւ քուլուվին՝ ի ներքոյ ինքնակալուեն օսմանեանց. վնյ զկնի մահուն խայրատափնի յաբրունի գրանէ անտի կոստանդնուպօլուսոյ կացուցաւ նմա փաշայ, այն է՝ կուսակալ իշխան. որով և ճէզայէր եղե մի՝ ի կուսակալուեց անտի օսմանեանց մինչև՝ ի ժէ գրանցորում ժմկի եէնիշէրիքն ապստամբեալք՝ ի փաշայէ անտի, իշխանութիւն առին՝ ի գրանէն կացուցանել զոմն՝ ի զօրապետաց իւրեանց իշխան ճէզայէրայ. կոչելով զնտ Տայի. ը պայմանաւ, զի լիցի միշտ՝ ի ներքոյ հրամանատարութե արքունի գրանն կոստանդնուպօլուսոյ : Առյ պայման թէնկտ ՚ի սկզբան անդ առ ժմկի մի պահեցաւ, սյլ յետոյ առսակաւ սակաւ գրեթէ խսլառ չքացաւ. զի այժմ ոչինչ հրաման, կիմ օրինադրութիւնքնակալին օսմանեանց զօրէ ինչ առ նոր, ոնդ և ոչ՝ ի թունուս. վնյ և է այժմ ճէզայէր բացարձակ և ինքնիշխան թրութիւն. բայց զինքնակալն օսմանեանց տակաւին ճանաչէ իրբե խալիֆէ, և գերագոյն թր:

Իսկ կառավարութիւն նր է միապետական խառն ը ազնուապետականի. քզի տայի նր թէնկտ չունի զանուն թէրի, սակայն իշխանութիւն նր է թէրտիկան. բայց և ինքն կախել կայ զլօրուեն, որք են իբր 12. հիշք. անքեան բուն օսմանցի աաձիկք. կիմ՝ ի քրիստոնէից գարձելք՝ ՚ի մահմէտական օրէնս. որք և տիրապ եէնիշէրիք կոչին. և համարել են ազնուականք ճէզայէրայ, և կացուցիչք թրութ նր. վնյ և ոմ պաշտօնատարք՝ ՚ի գնդէ նց լինին, ոնդ և տային, զոր ինքեանք ընտրեն. զոր և անդադար փոփոխին: Յորմէհետէ կառավարութիւն ճէզայէրայ անկաւ՝ ՚ի ճեռս զօրաց, ոչ ոք՝ ՚ի տային նր ըերկար վարեաց զիշխանութիւն իւր. և սակաւք բնական մահա-

ուամբ իւրեանց մեռան - բնշմք հաղիւ ըլ եօթնեակ
մի կացին յիւրեանց իշխանութեն - ումանք ևս 'ի նմին
աւուր՝ յորում ընարեցան, ընմին բարձան և 'ի կե-
նաց. երջանիկ է Տայի նց, թէ ողջանդամ ընկեռ
ցի յիշխանութէ:

Եւ չեն ինչ զարմանք . քզի մեծ մասն նց են արք
շարագործ 'ի կտիւազանաց փախուցելք . ոյլե գոր-
ծատեացք աղքատք, և կարօտք աւուրն պարենի .
վկյ գիմել 'ի ձեզայէր, մասնեն 'ի զինուորութի 'ի
գտանել զգարման կենաց . ուստի և են արք գա-
զանաբարոյք, արհամարհող վահնգաց կենաց, ան-
երկիւղք և յանդդունք 'ի ծովու, և 'ի ցամաքի .
և ահարկուք ամցն, մենդ մուղթեաց . 10 հազարք
և եթ 'ի նցէ բաւտկան եղեն 'ի միում ամի առնուլ
զֆէս զարգայանիստ քզք . և յամին որ զինի՝ զթու-
նուս քզք . որ իրը 800 մլննաւ հեռի է 'ի ձեզայէր
քզքէ : 'ի գնդէ աստի զօրաց 40 գլխաւոր զօրաց
պեաք են միանգամայն նախարարք . կմ խորհրդա-
կանք տայիին . ը որում կացուցանեն զգվաւոր առ-
եանն ձեզայէրայ, իսկ յորժամ գեղլինի խորհուրդ
'ի մեջ առնուլ վո մեծամեծ և կարեոր իրոզուեց .
յայնժամ կոչին 'ի ժողով և այլք 'ի փորձ և 'ի հին-
աւուրց զինուորաց :

Բայց 'ի ժողովոյ աստի են 'ի ձեզայէր քզք և այլ
զինին մասնաւոր ատեանք, ը զինին քզքական իրու-
զութեց, և 'ի գտուել զմասնաւոր գտաս քաղաքաց-
եաց . բայց թէ ոք 'ի գտասսազից կամիցի ելանել
յատեան տայիին, երբ և իցէ կարօղ է առնել զայն .
Քզի բաց են ամցուն դրունք նր, որ զօրն ողջոյն
բազմելիս յըարձակ սրահի 'ի լսել զգաաս ամցուն,
որոց գիմեն առ նա . զոր և քննել 'ի ձեռն վկայից,
փութավ բացորոշէ . և զինիու նր առ ժամայն ը գլ-
րով արկանեն չորք ատենադպիրք, որք միշտ յատե-
կան առաջի նր : Նոյնողս և այլ իւրաքանչւր գտ-
առոք և քզքք, որք են ը տրուք տայիին, ունին
սեփական պտեանս և գտատաւորս :

(6. Զինուորական զօրութ ձեզայէ-
րայ՝ կրկին է . յն ցամուքային և ծո-
վային . և ը երկոցունց ևս հզօրագոյն է ք զայլ
ամ տրուիս բարբարոսաց Թի . քզի 'ի ցամաքի բաց
'ի նտիւոյիշատակել 12 հըրաց, ունի և հեծելալորս
արաբացիս առաւել թ 30000 . որք կոչին օդնտկանք .
յորս 'ի լինել հարկի կարօղ է յաւելու այլս ևս
բնական

բերմա 'ի քղթց և 'ի գիւղօրէից : Խսկ 'ի ծովու՝ տոի
թէ ունի 25 նաւս զինունորեալս . յորոց և և թ մ ձ
են . որք ունին 60 ումբագործիս , յդ գոփս . խսկ այլք
փոքր են . յորոց ումանք ունին 30 , այլք 20 մինչեւ 'ի
18 . այլք բաց 'ի 25 նաւուց աստի որք են տրուեն
ձէղայէրայ , նաև մասնաւոր ումանք սպատազինեն
զնդն տեսակսնաւուց . որով ասպատակեն ոչ միայն
'ի միջերկրական ծովու . այլև յովկիանոս անդր . և
երբեմն նաւք սոցա տեսան և 'ի մերձակայ ծովե-
զերեայ սահմանս ամերիկց :

(7. Բաժ'':) **Ա**յս աշխարհյառաջին ֆմկս բաժանելը
'ի թքրուեն և 'ի կւռս . որք յետոյ ընդ-
ֆմկս ֆմկս պէսսկէս օրինակաւ բաժանեցան , ըստ
պէսսկս փոփոխուեց՝ որք եղեն 'ի նմ . և ահա յայս
մանէ յնչ եկին այն զնդն բաժանմունք այսր Շի .
որք գտանին յացըցս , և 'ի գիրս Շադրաց : Խսկ
իրեւ տիրեցին նմա օսմանեանք , յերիս մեծամեծ
դւռս կմ կուսակալուեն բաժանեցին զնա . յդ յա-
րեելեան . յարեմտեան . և 'ի հարաւային : Եւ այս
բաժանունն կայ մնայ մինչև ցոյսօր . յորոց իւրա-
քանչիւրն ունի իւր սեփական տայի կախելզուայիէն
ձէղայէր քղքի , և հպատակ նմ . յոր մեք ը սլիշին-
կայ յաւելումք և զորրորդն . յդ զկուսակալութին
ձէղայէր քղքի . որ է առաջին և գլխաւոր . յորմէ-
և բոլոր Շն ունի զանուն . զորս յառաջիկայդ մի
առ մի ստորագրեսցուք հանդերձ գլխաւոր քղքօք
իւրեանց :

Արտակալունին Շնչղայէր Քաղաքի :

Հգի առ ձէղայէր քղքաւ հարուստ մի տարա-
ծուք . օդ նր քաղցր է և սրատունական , գո-
լով ը բարեխառն բաժնիւ . և երկիրն արդաւանդ-
յոց , մշտագալոր ը ամն ռզշոյն . բաժանել 'ի գաշուռ
արդասուորս , և 'ի հովիստ պարարտարօսս , և 'ի
ըլուրս ծալիաւէտս և զուարձալիս : Ունի յորեան
և այլ աղջուազգս արմուեաց առատ . զնդն տեսակս
պատունական պաղոց . բանջարս 'ի կերակուր մարդ-
կան , և 'ի պէտս գեղօրէից . այլև այգիս բարե-
բերս , զոր սկսան տնկել անգ և մշակել զառաջնին
մուզեք եկելք 'ի ապանիոյ . քղի յնջադոյն ափր և
կեցիք ոչ միոյն ցիշակէին այգիս , այլև զոնկեալս
'ի

՚ի քրիստոնէից արմատագի խլէին : Առ ձեզայէը քղբաւ ՚ի լայնածաւալ դաշտի որ ըթափակել է լեռամբք իբրև տասն մղոնաւ , ըստիշնկայ են իբր 20000 պարտէզք . և ծառատունկք . իսկ ըստ պատմելոյ մեզ միոյ ուրումն ՚ի նախապատիւն իշխանոց ձեզայէր քղբի են 30000 . և յոժնանս ՚ինցնէ կառուցել կան տունք գեղեցկաշենք ՚ի պէտա զբօսանաց տեարց նց : Ունին անդ և հիւպատոսք եւրոպացւոց պարտէզք գեղէցիկս . յօրս յաւէտ երեկով է պարագէզք հիւպատոսին գաղղիացւոց :

Յայնկոյս նոյն լերանց յարևելեան կողմն՝ և ոյլ քարձակ դաշտ իբր 25 մղոնաւ ըստ երկայն , և 10 ըստյն . ոռողել ՚ի պատուական տկանակիտ ջուրց պարարտ և արգաւանդահող . ուր ամի տմի երկու և երբեմն ևս եցեք հունձք լինին ցորենոյ՝ գարւոյ՝ և այլոց արմաեաց . ուր և բնակին զնշն ցեղք աշխարտցւոց յայն սակս կարի առատունի է անդ ամի իրաց : Իսկ գլխաւոր քղբք նր են հետագայքդ : Շնեղայէր . ըստ եւրոպացւոց Աշեհեն : ՚ի հն . Բառ քարձամ . կմ Բառաւուրաւում : Մայրաքղք մաւրիսան նիոյ կեսարեայն . ուստի և կարծի լինել Եօլ քղք յիշատակեալ ՚ի պաղոմեայ . կմ մւեդ ըստ երբլայ Յուլիա իշարեայն . իսկ ըստ այլոց՝ է նախնի Մալք : Կմ Սալտէ անունել քղքն : Ե քղքմեծ և անունենի . ամուր բարձնամարդ և բազմավաճառ որսարսօվա պատ . կառուցել առ միջերկրական ծովու ըստ զառ ՚ի վայր լերին հանդէպ ծովու ՚ի նմանունի գեղեցկառ գիր թատրոնի . զի գրեթէ յամտանեաց երեխ ծովու համատարած : Զեւ քղբին է քառակռւսի . և շրջապատ նր ՚ի ստորին կողմն ըստ ոմանց 3400 քայլ . իսկ ըստ նախայիշատակել իշխանին ձեզայէրեցւոյ՝ 8 մղոն . և ՚ի վերին կողմն հազին 1800 քայլ՝ պարիստք նր ըստ մասին են ՚ի թրծել աղիւսոյ . և ըստ մասին յորձաքար վիմոց . թանձրութիւն նց 12 ոտնաչափ . իսկ քարձրութին ՚ի բարձրագոյն տեղիս քղբին՝ 30 ոտնաչափ . բայց ՚ի ծովակողմն հասանէ ց40 ոտնաչափ առ ՚ի պաշտպանուն քղբին ՚ի զայրացել տմէհի կռկակաց ծովու , և են ամրացուցել քառակռւսի աշտարակօք , և այլովք ամրուէք . և ունի շուրջանակի խրամիսորայատակ , և լայն : Վեց գրունս ունի , առ որովք զցայդ և ղթերեկ կարգել կան ուահատանք . որոց զէնք են բիբք սուռնալք . և ըստ շինկայ 15 հզք առւնու . բայց ըստ նախայիշատակեւոյ իշխանին 16 հզք . կէս մի աղիւսակերտք , և կէս մի

քարաշենք բռեալք ներքուստ և արտաքուստ, ոչ
փոքրիկք, և միայարկք ըստ պիշտնեայ, այլ կրկնա-
յարկք, և եռայարկք, և թիւ բնակչաց նր ըստ ո-
մանց 120 հազար, և ըստ անցանե զերկերիւր
հաղորաւ:

Փողոցք նր ըստ մեծի մասին նեղ են յոյժ, յորս հա-
զիւ կարեն արք երկու, կմբ երեք գնալ առ միմէամբք,
բայց դայս թունի թէ խորհրդով այսպ արարին առ
՚ի խափանել զձգումն կիզողական շողոյ արեգականն.
աղա թէ ոչ յամառնամիջի անհնարին իմն էր շրջել
՚ի նոն, մի միայն փողոց ունի՝ որ առ փոքր մի լայն
է, բայց ըստ երկայնուն է 1200 քոյլ, առ որով առ-
աի և անտի, են կրպակք ազդի ազդի վաճառոց,
անդ է և վաճառանոցն ցորենոյ, հացի և մսոյ, և
ձկան: Չիք ՚ի քղքի աստ ջրհոր, կմբ աղբիւր ինք-
նաբուղի, ոնդ ասացաք և վոր թունուսի, այլ միայն
գուբք, յորս հաւաքին ջուրք անձրեաց, և այնիք, որք
դան արտաքուստ ՚ի քղք անդր ըստ երկու ջրմուղմա-
զոր շինեաց, ՚ի ժշգ գարուն մի ոմն մուղբի տարագ-
րեալ, ՚ի սողանից, լլւնի մղկիթս 100, և սուստէլ,
որք առ հնրկ են ՚ի ծովակուղման, և եւ բաղանիս,
յորս են և բաղանիք մեծաշենք և գեղեցիք. 9 քը-
նակարանո մեծամեծ վինունորաց, ցը խըշպայս, յորս
բնակին 600 եէնիչէրիք հանդերձ գերեզք իւրեանց:
Են անդ և բանտք մեծամեծք, ուր արգելեալ սլա-
հին գերիք, զարս հէնք մէղայերայ գերեն ՚ի ծովու.
և այլ ևս զնշն շինուածք հսրկց և մասնաւորաց մե-
ծաշենք և վայելուզք, այլ ՚ի մէջ ամցուն յաւեւտ ե-
րելի են ասրարանիք իշխանին մեծ և երեւելի կա-
ռուցեալ ըստ մէջ քղքին:

Չիք ՚ի քղքի աստ պանդոկ հսրկց, կմբ իջևան վո-
ռարականաց, ցը խան, ոնդ սովորունի է լինել յայլ
քղքս օսմբանեան տրունք, վայ մուղբիք, այլև օսման-
եանիք որք գնան անդր սակս վճռկանունք, իջևանին
՚ի տունս բարեկամաց և ծանօթից իւրեանց, իսկ
քրիստոնեայք առ հրեայո՞ որք ՚ի թաղի իւրեանց
ունին մասնաւոր բնակարան պահել վոր նշ: Բայց
պինետունք բղուք են ՚ի քղքի անդ, որք ըստ մեծի
մասին են ՚ի ձեւս քրիստոնեայ գերեաց, որք ունին
իշխանուն ՚ի տրունք բռնի առնուլ և ՚ի նոցին իսկ
մոհմէտականաց, յորժամ ոչ կամին վճռել. քղք
տաճիք և մուղբիք, և ուրացողք՝ անխտիր յաճա-
խին ՚ի գինեառունս յայնոսիկ, ուր ուտեն և ըմպեն,
և խաղան համարձակ: Յառաջագոյն քղքս այս ար-

պաքոյ պարսպաց իւրոց ուներ արո՛ւարձանս . յորս
'ի 1473 , յո 19 ամօք յըջ ք զտարագրուե մուղթեաց
'ի սպանից՝ եին 2000 տունք և աւելի . զորս առ
հորկ հիմնայտակ արարին սպանիացիք յառաջնում
նունագի յելանել նց 'ի վը քղթիս . և այնուհետեւ
ոչ ևս շինեցան . ուստի այժմ հաղիւ գտանին անդ
40 տունք փոքրիկք . բայց և այնք ը մեծի մասին
անբնակ են . յորս մուղթիք և արարացիք , որք ուզ-
պուք բարձել բերեն պարէնս 'ի քղք անդ 'ի վաճա-
ռել , կապէն զուզտս իւրեանց :

'ի ծովակողմն արտաքոյ պարսպաց՝ է մեծաշէն ամ-
բարտակ կամ թումբ 'ի ձեւ կիսաբոլոր , որ 'ի միոյ
գրանէ քղթին ձգի մինչ 'ի փոքրիկ կղղի . և 'ի միւս
կողմանէ կղղւոյն մինչեւ 'ի քղքն . որ և ձեւացուցա-
նե զնւհնդիմտ նորա . զոր կառոյց խայրատաին 'ի
պաշտպանութիւն նեհնդստին , և յապահովուե նաւուց
'ի զոյրացել ալեաց ծովու , մենդ 'ի ձմեռան յաձելն
չուրց , և 'ի շնչել հիւսիսային հողմոց . զի այնպէս
խուսվի յայնժամ ծովին անդ , մինչ 'ի նեհնդստի անդ
վտանկիլ նաւուց . նա երբեմն և խորտակիլ իսկ .
ուստի և հաստակառոյց ամբարտակն այն՝ թէ ոչ
նորոգէին անդտդար , վաղու ևս արդեք քայլայել-
եր : 'ի դլուխ սյոր ամբարտակի 'ի միումն 'ի նախայի-
շատակեալ փոքրիկ կղղեաց՝ կառուցել կայ դղեակ
ամնւր հնգանկիւնի . վաւեալ հրազինուք 'ի պաշտ-
պանուեն . նոյնու՝ և 'ի միւս կողմանէ մոից նաւու-
հանդստին կան կառուցել այլ ևս մարտկոցք . յորս
գիշերայն հուր վառեն յառաջնորդութիւնաւուց 'ի
նաւահանդիստ անդը :

Բաց 'ի դղեկէ աստի ունի քղքս այս և այլ վեց գըշ-
եակս , և ամրոցս . առաջինն է յարեելեան կողմն
կառուցել 'ի գլուխ լերին , որ տիրէ 'ի վը բովան-
դակ քղթին . և կոչի կայսերական բնեակ . իրը զի Ե-
կարոլոս կայսոր Էարկ զհիւնուն նը 'ի 1745 . 'ի Ֆակին՝
զի պաշարեաց զհեզայէր քղք . զոր ապա բնակիչք
տեղւոյն կատարեցին , և կարգեցին 'ի պահպանուեն
նը 100 զինունորս : Երկրորդն կոչի 'Եր Էէրդ . որ է
եթեանկիւնի իբր 132 քայլ հեռի 'ի քղքէն . և նոյն-
շափ 'ի կայսերական գղեկէ : Երբդն է հին բերդն
Հայաստան անունել . կառուցել 'ի բարձրաւան-
դակի 'ի մշջ քղթին . և ամրացուցել աստի և ան-
տի երկու աշարակք . յորս զինունորք կարգեալ
կան 'ի պահպանուեն . որք մասնաւոր նշանօք ծանու-
ցանեն զթիւ նաւուց . որք երեխն 'ի ծովու : Զոր-
բորդն

բորդն է ամբոցն կոչեցել Պաղպընէրեայ յանուն միոք
՚ի գրանց քղբին . շինեալ ՚ի 1596 ՚ի ժայռի մօտ ՚ի
ծովին : Հինգերդն է ամբոց փոքրիկ մերձ ՚ի դուռն
նախայիշատակել ամբօրտակին . վառել հինգ հրա-
զինուք ՚ի պաշտոպանուի մուից նւհնդստին : Իսկ վեց
երրորդն է աշտարակ փոքրիկ առ մուռուն նոհնդստին .
որոյ ՚ի պահպանուի կարգել կան մուզրիք ունանք :
Բաց յայսցանե՝ ունի քղբու և այլ, փոքրիկ աշտո-
րակս, և բրդունս կառուցել շուրջանակի ՚ի պաշտ-
պանուի իւր:

Սակայն ՚ի վը այսր ամի չէ մարթ ասել թէ ճե-
ղացեր քղբ իցէ հզօր ՚ի ցամաքակողմն . քղի սակա-
բարձրաբերձ բլոց, որք շուրջ պատեն զնովաւ,
կարէ թշնամին ըռմբարտակօք զքղբն ովզոյն հիմնա-
յատակ առնել . զոր ամօք ինչ յառաջ սպանիացիք
կոմէին ՚ի գործ գնել . զի խորհեին առնոււլ զմի ՚ի
բլոց անտի . և ՚ի վը նը կառուցանել մարտակոց,
առ ՚ի հարկանել անտի զքղպն . այլու կարացին հա-
սանիլ վախճանի իւրեանց . քղի հարան ՚ի ճեղացե-
րեցոց : Եւ ասի, թէ յետ մեկնելոյ նց անտի՝ ճե-
ղայէրեցիք շինեցին անդ ամբոց, այլ ամենեին վայ-
րապար . քղի գոլով քղբ նց յեմ կողմանց շրջապատ-
եալ բարձրաւանդակօք, չէ հնար սմբացուցանել
զայն ողջ արժան էր : Իսկ ՚ի ծովակողմն թէ պատ-
առ ՚ի ամբագոյն է, բայց այնողիսի են ամբունք
նը, որք ոչ կարեն ըերկար ըդէմ ունիլ ըռմբարտա-
կոց, զոր կարէ թշնամին ՚ի նաւուց ընկենուլ . ՚ի
քւե անդր . ողջ արարին գաղղիացիք ՚ի 1682. և 1683.
բայց ինաս սակաւ հասուցին քղբին :

Այս քղբ հին է յոյժ . որ և ՚ի նախնեաց զանա-
զան անսւամբք անունանեցաւ, ողջ ՚ի վեր անդր
նշանակեցաք . բայց դժունարին է ճշդրտիւն նշանա-
կել զառաջին հիմնադիր նը . յայտնի է ՚ի պատմու-
թեց թէ ՚ի ֆակտ յուրայ արքայի՝ էր սա արքայա-
նիստ մայրագոյն նումիդիոյ : Եւ պատմի, թէ մի
ուն յարդոց սորին արքայի վարել ՚ի գերութեն ՚ի
հուզմ' ՚ի յաւլիս կայսերէ, եդիս շնորհս առաջի
հուզմայիցոց այնչափ, զի օգոստոս կայսր դար-
ձոյց նմ անդրէն զհայրենի թիգրուն իւր, որոյ նո-
րոգել զայս արքայանիստ քղբ իւր, կոչեաց զնա-
լու . կմ Յաւլիս իւստիս յանուն բարերարին իւ-
րոյ : Այս անուն դտանի մինչև ցայժմ դրոշմաշ
՚ի դրամ կղօդիստի, և անտոնինոսի կայսերաց :
Ապա զինի ֆակտ ու սակաւ սակաւ կորոյս զառա-

Չն ճոխութե՞ և զվայելցուն իւր, և փեսկ նը առ
որութք կաղիդոլոյ կայսեր՝ կոստանդինա քղքն
բարդաւաճել պայծառացաւ. նոյնպէս և բուդիա,
և պօնա, և դրէմէցէն գեր 'ի վերոյ գտան ք զայս
քղք: Իսկ 'ի է գարուն յաւնուլ արարացւոց մահ
մէտականաց զքղքս զայս, չքանդեցին գնա, այլ
ը ոմանց ասելոյ զի մի մնացէ յիշատակ ինչ քրիս-
տոնէուն 'ի նմ, որ ատելի էր յոյժ նց, փոխեցին
զանուն նը. Ճեւնէն կոչելով որ թարգմանի կղզի.
յօրմէ եւ Ճեւսիէ անունդ. վն զի քղքս այս երեկը
միացեալ ը փոքրիկ կղզւոյն, որ է հանդէպ նը.
ըայց այս բան ցունի ինչ հիմն. այլ այսպէս անունա-
նեցաւ յաղաւազելոյ հին անուանն ոնց ասացաք 'ի
վերոյ:

Վերոյգրել կղզին Թէպէտ իրք բաժանեալ եր 'ի
նմ, այլ յետոյ օմանեւանք միացուցին. կառուցել
'ի միջի զնախայիշատակէլ ամբարատակն. ուն և զքղքն
ամբացուցին և մեծացուցին. ուստի և այնուհետև
եղե առաջին և յաւետ բազմամարդ և բազմագանձ
'ի մէջ համօրէն քղքց բարբարոսաց աշխարհի:

Մերագուկ, ը արաբացւոց Պէտենտիքուր. Թունի
լինել նախնի Քուրդոնիւն քղք յիշատակէլ 'ի սկզբո-
մեայ: Է քղք կմ աւան փոքր ծովեղերեսոյ մօս 'ի
համանուն հրուանդանն, քանի մի մզսնու հեռի 'ի
ճեղայէրայ. առ սովորն քղքաւ յարեւելց անցունէ
հուետ իշեր գետն. և մասնէ 'ի ծովին մերձ 'ի գետով
մի մեծ Պէտ աբուլւակ կոչեցիլ. յանուն ցեղի ինչ
արաբացւոց, որ անդ բնակի:

Դերտէլէդ. կմ Թէպէտս: Է քղք պարսպաւոր յա-
րեւելան կողմն սարին գաւառի. մօտ առ միջերկրա-
կան ծովն. 'ի պաղպամեայ Աշոտիմէ անուաննել. ունի
տունս լիբրն 1000. և դզետի տմուր, ուր բնակի
քղքապէտ նը:

Սաւզա. 'ի հն' Դէբէտասս: Քղք վաղնջական յիշա-
տակէլ 'ի նախնի աշխարհագրաց, այլ այժմ աւեւ-
րակ, յարեւմուեան կողմն մէդաֆուրզոյ, առ հուետ
իշեր գետով: Զայս քղք ոմանք հին ճեղայէր կո-
չն. և ասեն թէ նախ ք զաւերիլ ունէր տունս
աւելի ք 3000:

Քօլ Կը Տադէւարէս: Է քղք փոքր շինեալ 'ի 1550.
յաւուրս հռաշակաւոր հասան փաշայի յարեւելան
կողմն Սաքըն գետոյն իրիւ 3 մզսնու հեռի 'ի
նմ, բնակիչք նը են 'ի սերնդոց անտի մուղրեաց
'ի սպանելոյ ասրագրելոց:

Քառակինէ : "Աւահանդիստ ը մէջ այսր քղքի , և անզայէրայ , ուր նաւք խոյս տունել ապաստան լինին
'ի ֆմիս փոթորկաց :

Մարտ Տօսպէն : Ե՛ գեոլ մեծ մօս 'ի քասսինէ նաւահանդիստն . ուր ձեզայէրեցիք առաքեն յարօտ զանասունս իւրեանց :

Ավանելեան Կոստակալսէն :

Ա ահանդ ըարձակ . որ 'ի դւռէ անտի ձեզայէր քղքի , ձգի մինչեւ 'ի սահմանս թունուսի , և ունի իւր սեփական կուսակատ , որ կոչի արեւելեան որէյ . կախել զմէզայէրէն : Եւ բաժանի լինի դւռը ը իննունց գլխաւոր տեղեաց իւրոց . զրսյառաջիկայդ ստորագրեացուք :

Կոստանդիա լոտ" . Քուդանդինա : Ե՛ գլխաւոր քղքէ համանուն դւռի , այլև բովանդակ այսր արեւելեան կուսակալուն , 'ի հարաւակողմն բարձր լերին իբրև 70 մղրնաւ հերի 'ի ծովէ , և շրջապատել քարաժայու լերամբք , որք են նմ 'ի տեղի պարոպաց . բայց . ունի և որարիսովս ամրակուռս 'ի սեագոյն յորձաքար կոփածոյ վիմաց , և գղեակ պատուական . առ այս դղեակ՝ ոնդ և առ քղքն՝ ը երկու և եթ շաւիզս անձուկս հատեալս ը քարաժայու լերինս , որք պատեն զքղքաւ հնար է մատչել . ունի տունս իբրև 1000 . և փողոցս գեղեցիկս . և թաղտ որոշեալս վշ ազգի ազգի արհեստաւորաց : Այս քղք հին է . զոր ասեն շինեալ միկիոպայ նախնի թփին նումիդիոյ . և էր արքայանիստ մսյրաքղք տռանձին նումիդիոյ . որ յանուն քղքին կոչեցաւ և կիրա . վշ զի 'ի նախնումն քղքս այս կոչեր կիրա (լոտ" . Ջերտ") . այլև կիրա յուլիա . զրբ յետոյ մեծին կոստանդիանոս և ևս ըարձակեաց , և ճոխացոյց հոյակապ շինուածովք , և բազմութ բնակչոց . յայն սակս յանուն նր կոչեցաւ կոստանդիա . որ մինչեւ ցայսօր պահի յագրաց . բայց մուղիք բնակիչք նր եղծմամբ կոչեն զիա Քուստանդինա : Առ ժմկոք կաղնդոլայ կայսեր՝ էր մայրաքղք մաւրիտանիոյ կեսարեայն . և յետ տիրելոյ նմ արաբացոց եղիւ արքայանիստ քղք համանուն մասնաւոր թփրութե . ուր նստան ոմանդ թփք կիմ բռնակալք , որք սովորել շիջան 'ի 1420 . ը լծով թունուսի նուռ ճեալք . ապտ իբրև եառ խայրատաին զմէզայէր քղք և զբոլուվ , սա ինքնին անձնապուր եղիւ նի՞ :

Աշուարոյ քղթին տեսանին մինչև ցայսօր հին շին ուշածք, և աւերակք մնացելք՝ ի նախնի հռովմայ եցոց. որք յայտնապէս ցուցանեն զանցել մեծութի և զնոխութի նը. յորս է կամար յազթութե. և այլ շինուած ինչ հանդէս Սռբէմէնար գետոյն սիւնազարդ գործեալ կռանաւ. ի միաստանի ժայռէ լերինն : Եւ փոքր մի հեռի ՚ի քղթէն՝ է ինքնաբուղին շերմուկ. մերձ յայն տեղի՝ է միւս ևս ազգիւր ինքնաբուղին ցուրտ ջրոյ. յորոյ վր կառուցեալ կայ հոյակտապ շինուած քարաշէն՝ արձանեայ պատկերք դարդարել. զորմէ բնակիչք տեղոյն առասպելին, թէ ՚ի նախնութն դպրոց էր. որոյ ուսուցիչն հանդէրձ աշակերտոք սակս եղեռնագործուե իւրեանց՝ յայն քարեզէն արձանս փոխեցան : Այլ պահառայսց առասպելեաց՝ է տգիտութի նց. զի տեսեալ յայն քարեզէն արձանս մարդկային կերպարանս, համարին թէ նը յուղն կենդանի մարդիկ էին. վր զի ոչ կարեն կարծել մարդկային ճարտարութք գործել. իբր զի ՚ի կողմանս յայնոտիկ, ոոկ և յայլ տեղիս որուե տանկաց՝ չկը բնաւ սովորութի կանդնելոյ մարդակերպ արձանս :

Բնակիչը նր են 'ի ֆուլիացւոց , ոռպ հսստատեն բշմք . և ունին թգր մեծազօր անուաննել Սահետով . կմ Սեհագով . որում հարկատու է կալամ , և մեծ մասն 'ի որջակայ թգրութեց . պատմի թէ 'ի հնումն տիրէր և նց . դուցէ յայն սակս այժմ հարկս հարկանեն նմ : Վո քըքց կմ գիւղորէից այսոր թագու սորուն ինչ ոչ գրեն Շագիլք . և չեն ինչ զարմանք . զի սակաւ ծանօթութիւնին զնմէ . ոռպ և զայլոց ներքին Շաց ափրիկոյ . զի չենս ոք 'ի նցնէ եհաս 'ի ներքին կողմանս անդ . ուստի զոր ինչ գրեն զնցէ եւրոպացիք , 'ի վաճառականաց անտի նիկրիտաց .

Հոց լունեալ գրեցին :

Քարտշապ . կմ Սահանէ իոշինայ : Են յարեելեան կողմն այսոր թգրութեն , իրեւ 90 մզօնաւ հեռի 'ի կղզւոյն քայինովայ , որ է 'ի թգրուեն կալամայ : Այս քարավազք բարձր են ք զքարավազս ֆուլեայ , ուր ը անձուկ կիրճս բարձրաբերձ լերանց իջել սէնէ կալ գետոյ , անհնարին շառաշիւնս արձակէ , և ցնցղ կել շուրջանակի բշմ գունագեղ ծիածանս գործէ :

Կալամ :

Այս թգրուն կմ նէնք ըս պիշինկայ է յարեելեան կողմն թգրուեն ֆուլեայ . իսկ ըս այլոց 'ի հարաւային և ըս մասին յարեելեան կողմն նր . սկսել 'ի ծովեղերեայ բերանոց սէնէկալոյ , մինչև ցաահանս ֆուլեայ , որ է առաջին քարավազ նորայարեմոից ը արեելս գնալով . իսկ 'ի հարաւոյ ձգի մինչև ցքամորիա : Բաց 'ի սէնէկալոյ՝ որ ոռոգանէ զերեելի մասն նր , ունի այլես երկու երեւելի գետու . որք կոչին ֆալէմէ . և Շիհունն . որք մեծապ նպաստեն արդաւանդուե երկրի նր : 'ի լերինս նր գտանին քարահանք պատուական մարմարիոն քարանց . այլեւ ակն վանի , և այլ զնշն տեսակք թափանցիկ քարանց , կմ հսրկ ականց . ոռպ և բովք ազնիւն երկաթոյ : Ունի և փայտու գունագոյն ներկոյ , և բոյս մի , որ բուրէ զհոտ մէկոյ . զոր բնակիչք տեղայն կոչեն ապէլ միսկ :

Յայսմ

Յայսմթերուեն են երկու զնդն աղքք . որք կոչին
Սարագուշացին . և Մանտիխացի : Սարագուշացին առա-
ւել բաղմաթիւ են . որք և ունին զանուն ՚ի բաղ-
մուէ գետոց իրեանց . զի անունս Գուշպ . ՚ի բար-
բառ նց նշանակէ գետ . ուստի մեք կարեմք կոչել
զնդն գետացիս : Աք համարել են իրեւ բուն բնակք
երկրին . և են անհանդարոք , խորվասէրք , որք առ
դոյզն ինչ պատճոի ընկենուն յիշխանուէ զթքքը իւր-
եանց . ծոյլ են , և ոչ սիրեն երկար Ճնպհորդութեն նց է Շն
առնել . վերջին սահման Ճնպհորդութեն նց է Շն
պամապուկայ հնդօրեայ Ճնպհաւ հեռի , ուստի բե-
րեն գերիս , և ոսկի : Իսկ Մանտիխացի Թումին լի-
նել յիշակացւոց անտի . որոց եկել ՚ի սէնէկալ , և
բազմացել անդ , այժմ կացուցանեն զմասնաւոր ժո-
ղովուրդ , կմ հասարակութեն գրեթեն ինքնիշխան .
սակաւ կախումն ունելով զթքքէն սարադոլէզաց-
ւոց : ՚ի ձեռս սց է բովանդակ վճռկանութեն երկ-
րին , զոր առնեն և ը շրջակայ Շաց : Իսկ ը կրօ-
նից Ճիշտ մահմէտական են , և ժրաշանք ՚ի տարա-
ծել զմահմէտական օրէնս զոյդ ը վճռկանութեն իւր-
եանց : Աք՝ ը պատմելոյ Ճնպհորդաց՝ հեղաքարոց
են և քղքական . բարեկամ օտարականաց , հաւա-
տարիմ՝ ՚ի խոստամունս , աշխատառէր , ճարտար , և
յարմարաւոր առ ուսմունս գիտուեց . սակայն բո-
լոր գիտուեն նց չէ այլ ինչ , բայց միայն ընթեռնուլ
և գրել ՚ի բարբառ արաքացւոց . զոր գրեթեն ամե-
նեքեան գիտեն . և յայն սակս Մարգուրա կոչեն զսն-
ձինս , յո գրագէտս :

Իշխան այսր նահանգի կոչի Թանգա . որ Թարգմանի
թեր , բայց իշխանուեն նր չէ ինչ մեծ . զո զի մեծա-
մեծք երկրին են իրը մի մի թերք ինքնիշխանք , մւնդ
յորժամ՝ ՚ի ձեռս բերեն զկառավարուեն միոյ ՚ի գիւ-
ղորէից , որք Ալոյէց կոչեն յայնժամ զանձինս . և
գրեթեն զթքրական վարեն զեշխանուեն : Իսկ դլիու-
ւոր աեղիք նհնդին են հետագայքդ :

Դրապազ : Գլխաւոր քղք այսր Թերուեն արքայա-
նիստ առ սէնէկալ գետով ՚ի հարաւային կողմն նր .
մեծ , այլ անշուք և աղքատակերտ . ՚ի մերձակայ լե-
րինս նր գտանի քարահանք պատուական մարմա-
րին քարանց :

Թաքաւիսիս : Քաղստք մեծ բազմամարդ և բազմա-
վաճառ . որ ունի փոքրիկ մզկիթ մի քարաշէն . զոր-
մէ բնակիչք տեղւոյն ասեն ունիլ զէն մզկիթին

Տեսնե՞տ : Քաղաք մեծ և բազմամարդ . որոյ բնակիչը 'ի սկիզբն անցել գարօւ , յորում ժմիկ եհաս անդր անդրէաս որուէ գաղղիացի՝ էին աւելի ք 4000. ըստ մեծի մասին մահմէտականիք արդարակուրով և ինքնիշխանք , անկախ զթագաւորեն կալամոյ . որք սակա վճռկանութեն գնան մինչև 'ի թումպուր , և 'ի ծովեղերս քամպիայ . ուր բշմ առեւարութեա առնեն ըստ եւրոպացւոց , աարել անդր գերիս , և ոսկի :

ՄԵ յուշե՞տ . կմ Մահանեդ : Գետող՝ ուր գաղղիացիք փոխադրեցին զդործարան կմ զվահանելի իւրեանց , զոր 'ի 1699 կառաւցին 'ի ծովեղերս քամպիայ . զենիքանդելոյ նիկրիացւոց զամբոց նց , զոր ունեին անգ : Այս գետող է մերձ 'ի քարավազս ֆուլեայ . իբրև 700 մզոնաւ հեռի 'ի բերանոց անտի սէնեկալայ :

Քայինով . կմ Կոնխիր : Քաղաքառ ունեկալ գետով 'ի հարաւային կողմն նը , մեծ բազմամարդ և բազմավաճառ յոյժ . վս զի ը այն անցանեն կարաւանիք , և վճռկանիք մանտիկացիք թումպուրայ . որք 'ի պատպարայ քանայ որ է 'ի ներքին կողմանս նիկրիացիոյ . բերեն բազմութեն գերեաց 'ի վաճառատեղիս անդղիացւոց , առ քամպիա գետով : Հանդեպ այսմ քայլի՝ է կզղի մեծ կոչեցել նոյնուկս Քայինով . իսկ 'ի բարբառ գաղղիացւոց Փանթաւերէ . ըստ մեջ սէնեկալայ . իբրև 45 մզոնաւ 'ի վերոյ ք զմանկանէտ . և փոքր մի 'ի վայր ք զքարավազս ֆուլեայ . երկայնութենը է իբրև 3 մզոն . և երկիրն բարի և արդաւանդ . և այնչափ բարձր , զի որսոփ և աձեւցին ջուրք սէնեկալայ , հազին ժամանեն 'ի ծածկել զիոքը ինչ մասն նը :

Ջուլի , կմ Ֆեւլի : Էնեղ անցք , ուր սէնեկալ գեան գոլով փակեալ ըստ մեջ երկուց բարձրաբերձ լերանց , և արգելեալ յընթացից 'ի բազմապատիք ժայռից , բաժանի 'ի բշմ աւաշս , և գործէ քարավազս կմ սահանս իբր 40 կանգնացափ 'ի բարձանց իջեալ :

Այտմողունք :

Այս աշխարհ կմ նահանգ է 'ի հարաւային կողմն կալամայ . և 'ի հիւսիսոյ մանտիկացւոց . որ թէպտյանցէ ժմկս հոչակեալ էր վս իւրոց առատա-

տարեր բովուց ոսկւոյ, սակայն յետոյ գլխովին՝ ի մունքան եղեւ մինչև ցակիցքն անցել դարու. թացամեն 16. յորում կոմիզանոն անուն ոմն գործակալ վաճակնաց գաղղիացւոց յափրիկէ, եհաս անդր. ուր և եկաց մնաց ամ մի և կէս. և ետ ծանօթուն լէ պրուեայ գլխաւորի ընկերուն այնց վճռկանաց. որ և 'ի սկզբանն խորհէր տանիլ անդ ժղվրդս, և շնուր ամրոցս. քաղցրութ ընկալել զմոյլունուն 'ի բնակչաց երկրին: Ապա 'ի 1723 փոխեաց զսորհուրդիւր. և կամէր բռնութել ախրել երկրին և բռվուց նր. վայ առաջարկեաց գաղղիացւոց հասուցանել նմ գունդ մի 1200 զօրաց, բայց ոչ յաջողեցաւ: Ուստի և եկաց մնաց երկիրն 'ի ձեռս բռն բնակչաց իւրոց:

Գլխաւոր գետք նր են ֆալէնէ, զոր մանտիկացիք համարին մի յառաջից նիկէր գետոյն. որ զկնի ըերկար ընթացից՝ գնայ խառնի 'ի սէնէկալ գետ. Սաննոն, կուտանս, և Մանսա. որք մտանեն 'ի ֆալէմէ, կմ'ի սէնէկալ: Օդ նր տօթագին է յոյժ. ոչ միայն զի անկանի ը մէջ 12 և 13 աստիճանաց հիւսիսային լայնութեն, այլ առաւել յայնմանէ՝ զի դոլով շրջապատել 'ի բարձրաբերձ լերանց, չունի անցս առ 'ի մաքրիլ և զալիլ 'ի ժանոտ գոլորշեաց անտի, որք անընդհատ շնչին 'ի հանքալից երկրէ նր. վայ և վնասակար է յոյժ առողջուն օտարաց, այլ ոչ նոյնուկս բռն բնակչաց իւրոց:

Խսկ երկիր նր անջրդի է և անքեր ամեննեին, մաւ նաւանդ 'ի ներքին կողմանս, ուր ոչ ոռոգանի 'ի գետոց. սակայն զամ պակասուն նր լիուն բազմապատիկ հանք նր՝ մշնդ ոսկւոյ, որ յաշախել է ը մամ տեղիս. ևս առաւել 'ի միջին կողմանս ը մէջ թամհա, կմ' թունպա աւրա, և նէթէքոն դիւղից՝ իր 30 միոնաւ հեռի 'ի ֆալէմէ գետոյն: Հող երկրի նր կաւուտ է և բազմադոյն. ցոսպիտակ, կարմիր, կանաչ ծովային, գեղին զնշն աստիճանաւ, կապուտադոյն, ևն. որք են նշանք այլ և այլ հանքաց՝ որք զօղեալ կան 'ի խորս նց. բայց բնակիչք երկրին չունին ծանօթուն զղնշնուէ հողոյ. և ոչ կանոն ինչ բնաւ յորոշել, թէ որն 'ի հողոյ ոսկիաբեր է, և որն ոչ:

Դիսեն ըհանրապս, թէ ո իւրեանց հարուստ է ոսկւով. և թէ երկիրն ը յաւէտ և նուազ չոր և անքեր գոլոյ, ունի ոսկի յաւէտ և նուազ. այլ ոչ դիտեն որոշել. թէ որ է այն. յայն սակս անխուիր ուր:

մէր և իցէ քերեն և պեղեն զհող ։ և յորժամ դէպ
լինի նց գտանել ուրեք հարուստ մի ոսկի , անդ
շարունակեն զդործն : Պեղեն զհողն 6 . 7 . կմ 8 ոտ
նաչափ ՚ի խոր . և հազիւ երբէք հասանեն ցտան
տոնաչափ և ոչ երբէք աւելի . իբր ոչ եթէ կարծե
լով , թէ ոսկին յերեսս և թէ հողոյն դոյանայ . այլ ը
հկուկն՝ փորձիւ գիտեն , զի որչափ ՚ի խորս իշանեն ,
այնչափ առատադոյն ոսկի գտանեն . այլ զի չունին
օանդուխս իշանել նոքօք ՚ի խորս . և ոչ իսկ գիտեն
հնարս ՚ի դնել մոյլթս և նեցուկո ըդէմ հողոյ առ
՚ի չփանիլ ՚ի ներքս . այլ միոյն աստիճանս հատա
նեն ՚ի հող անդր վերուստ ՚ի վայր , ը որ ելանեն
և իշանեն . բայց այն ոչինչ հաստատուի տայ հո
զայն առ ՚ի չկործանիլ մնդ յանձրեային եղանակս .
որ է սավորական թմկ նց գործելոյ ՚ի մետաղս . իբր
զի պէտս ունին ջրոյ , առ ՚ի մաքրել և որոշել զու
կի ՚ի հողոյ . իսկ ՚ի ներքին կողմանս , ուր առաւել
յահախ են բովք ոսկւոյ՝ չիք գետ :

Յորժամ տեսանեն . թէ գոյ վտանգ փլանելոյ հո
զայն , թողուն զայն ծակ , և պեղեն յսյլ տեղի , ուր
դէպ լինի երրեմն զի ինչ ոչ գտանեն : Վշկ սք հա
մարին զոսկին էակ իմն խորամանկ և չսրասէր ,
որ զուարձանայ ՚ի տանջել զայնոտիկ , որք սիրենն
զիա (Ճշմարիտ է այս ՚ի բարոյական միտս ,) նմին
երի ստեպ փոփախէ ասեն զբնակուի իւր : Եւ յայն
սակս յորժամ պեղեն ուրեք փոքր մի . և ոչ գտա
նեն ինչ ողպ ակնունէին , ասեն ցմիմեանս առանց
ինչ տժգոհուե ՚Նա նէնեցա աստի ՚ : ուստի և թող
եալ զայն տեղի , գնան այլուր : Բայց չունին աղա
տուի երբ և իցէ պեղել զերկիր . և ոչ ՚ի խնդիր ելա
նել բովուց ը հաճոյից . այլ պարտապան են սպա
սել , զի ը պահանջելոյ հարկց՝ կմ մասնաւորաց
պիտոյից՝ իշխանք երկրին հրաման տայցեն : Յոր
ժամ հրատարակի հրամանն , ամքեան որք պէտս
ունին ոսկւոյ , երթան ՚ի սահմանեալ տեղին . և
հանել անտի ոսկի որչափ ինչ որոշել է յիշխանաց ,
բաժանեն զայն . զկէսն առնու իշխանն . և բաց
յայնմանէ՝ նաև այն հատք ոսկւոյ , որք անցանեն
ք զսահմանաւոր իմն չափ մեծուե . նը հն . զմնաց
եալն աշխատաւորքն հաւասարապս բաժանեն ՚ի
մէջ իւրեանց : իսկ որք յայլ թմկ պէտս ունին ոսկ
ւոյ , գնան յուզեն ՚ի գետս . յորս գտանեն ոսկի
մանրամաղ խառնել ը աւազոյ . առ որ չունին պէտս
հրամանի :

Բաց յոսկւոյ և արծաթոյ, զոր անիմնայաբար առաւ-
տաձեռնեաց բնութին պամագուշկոյ, գտանին անդ'ի
բնշմ տեղիս կապուտակ քարինք • ուրբ համարել են
իրը հաւաստի նշանք բովուց պղնձոյ, կապորի
անագի, և երկաթոյ: Գոյ անդ և մագնիո քար
աղնին • յորմէ բնշմ կոտորակո տարան ՚ի գաղղիա •
այլև բորակ, և այլ այսպիսի զնշն հանք անկա-
տարք, Աւնի և տեսակս ինչ անասնոց նշանաւորս •
ոոկ կապիկս սպիտակափաւո առաւելք ք զնագար •
զորս մինչդեռ փոքր են՝ դիւրաւ մարթ է ընտելա-
ցուցանել, այլ յետ այնորիկ ոչ ևս • զի յորժամ
մեծանան չեն ինչ ը հատ ը կտղսւե յոյլոց գազանա-
բարց կապկաց, այլ մինչև ցայժմ չեղև հնար ՚ի կամր-
կաց տստի տանիլ կենդանի յեւրոտիա, կմ յայը
աեղիս • զի ոչ հանդուրժեն զօդ օտար երկրի: Աշ-
ունէս սպիտակ արծաթագոյն: Ճեամալա • կմ կեա-
մալա • է նորանշան իմն կենդանի բարձր ք զփիզ-
այլ անհամեմատաբար վտիտ և նուրբ ք զնա • գը-
շուիս և սպարանոց նր նման ուղտու, ոոկ և թիկունք •
յորս ունի երկու գունտս մնեղէնս, յոյր սակս և
կարծի լինել տեսակ ինչ ուզուու • արունքն երկայն
յոյժ • կճղակքն սեաւ ը կճղակուց եղին • արագըն-
թաց է և ուժեղ բաւական ծանրակիր ըեռանց • և
յաջողակ առ Ճնպրհորդունս երկայնս • այլ բնու
կիչք երկրին ոչ գիտեն ընտելացուցանել զնա • կե-
րակուր նր են փուշք, ոոկ ուզաւուց • նմին իրի ոչ
երբէք սպարարտանայ • սակայն միս նր ասեն թէ
համեղ է, զոր ախորժանօք ուտեն նիկրիուացիք •
ունի եօմն փոքրիկ եղջեւրս ուզիդս • որոյ երկայ-
նուն չի ինչ աւելիք ք զերկու ոտնուշափս • և բնութ
կատաղի է յոյժ: Նոյնոկս և աղաւնիք սրամակուկայ
նշանաւոր են • զի առ հորկ կանաչագոյն են ը նմա-
նուն թութակաց: Է անդ և տեսակ մի թռչնոյ,
զոր թռչուն գրախտի կոչեն • յունարէն Մօնօինքու •
ց միեղջերու, կմ միաեղջիւր • զի ՚ի գլուխն ունի
երկու փետուզս երկայնս իբր երիս կմ չորս մատ-
նաշափս, որք միացեալ սրածայր աւարտին ՚ի նմա-
նուն եղջեր • յորմէ ոմանք կարծեցին ունել նմ իս-
կական եղջիւր: Մեծուն նր է ՚ի չափ ընտանի ա-
քաղաղի • փետուրքն խայտաճամուկ, մենդ թեքն •
կտուցն կոր ը նմանուն արծուոյ: Գուանին ՚ի պամայուկ և նորատեսակ բոյզք ինչ և
ծառք • յորս երեկի է ծառն իւղաբեր • որ է մի-
ջակ ը մեծուն և ը ստրարուն: Տերեք նր մանր
են

Են ջլային և խիտ յոյժ ։ զոր ճմլել մատամբք ար-
ձակէ հիւթ ինչ իւղային ։ Խսկ պառւղն է բոլորակ
մեծութ ՚ի չափ հորկ ընկուզոյ կարծրակեղեւ կար-
մրագոյն իւղային և ինկահոտ ։ Ընկոյզ նր կմ մէջ
է ՚ի չափ ընկուզոյ հնդկաց ։ այլ համ նր կաղնոյ ։
զոր լոսել ։ արկանեն ՚ի ջուր ջերմ ։ և ելանել յերես
ջոյն իւղ թանձր իբրև զկոգի կմ ճարապ ։ Զայն
իւղ անդ ՚ի պամպուկ կոչեն Վաթաւել ։ խսկ յայլ տե-
ղես Պամպուկ նուշ ։ յթ կոգի պամպուկայ ։ զի բե-
րէ ղնանանուի կոգւոյ ։ կմ մենդ ճարապ ոչխարի ։
զի իբրև զայն սպիտակ է և պինտ ։ զոր լցել յա-
նօթս ։ տանին ՚ի վաճառ ցհեռաւոր տեղիս ։ Նիկ-
ըլատացիք ՚ի կեր արկանեն զայն ՚ի կերակուրու իւր-
եանց փինկ իւղոյ ։ ուտեն և անխառն ։ այլ ՚ի գեղ
բժշկուե ախտից յօդունածացաւուե՝ միջացաւուե՝
ջլացաւուե ։ և այլոց այսպիսի ախտից ։ օծել նովաւ
զախտացել մասն մարմնոյ ։ և շփել առ հրով ։ զի իւղն
այն ըմանանցէ ը ծակտիս մորթոյ ։ և ապա դնեն
՚ի վր կապոյտ թուղթ աղնիք ։ և ծածկեն զանդին
թանձր հանդերձին ։ զի ջերմ մնացէ ։ որով և
բժշկի ։ Նիկը իւտացիք զայս իւղ նախադասեն յոյժ
ք ղիւղն արմաւոյ ։ Պրուե գաղղիացի երեսի հաւան-
եալ թէ այս իւղ կարի առողջարար է ։ զորոյ ըզ-
ճաշակ էառ և ինքն ։ ոնք և այլ եւրոպացիք ։ և
ասեն թէ համ նր չէ ինչ զնշն ՚ի համոյ պարար-
տուե խոզենւոյ ։ բայց միայն զի փոքր մի կծու է ։
որ չէ ինչ անախորժ ։

Երեւելի է և բոյսն անունանել Աշխել նունի ։ այլ է
հագ նշոյ ։ կմ ամագէրի ։ որ յաճախել է յոյժ և ՚ի
կալամ անդարման ՚ի մարդկանէ ։ Այս բոյս եթէ
գոցէ ծառ մերձ իւր ։ յոր կարիցէ պատատիլ ։
բարձրանայ ցվեց կմ ցեօթն ոտնաշափ ։ ապա թէ
ոչ ճապատի զերկրաւ ։ և ոչ բարձրանայ աւելի ք
զերկու ոտնաշափս ։ Տերեք նր երկու երկու բուսա-
նին ։ մինն մեծ ։ իսկ միւսն փոքր ։ ՚ի վերուստ պսյ-
ծառ կանաց ։ իսկ ՚ի ներքոյ գեղնագոյն ։ զոր եփել ՚ի
ջուր ։ և եղել ՚ի վր ուռուցից ։ վզիղնի հասուցա-
նեն ։ նոյնուս համարել են դեղ ազդողական ըդէմ
ելնդոց ։ այլ զմմլումն պառճռել ՚ի հարունածոյ ա-
պաքինեն ։ Ճաղիկ նր ելանէ առ կանթին տերեւոյն ։
և է հինգթերթեսն սկսիհաձև ։ ՚ի ներքուստ կար-
միր ։ իսկ արտաքուստ ոսկեգոյն ։ ՚ի միջի ունի թեշս
քշմա ։ և ՚ի մէջ նց սիւնակ ։ յորում է սերմն ։ կմ
ուսուղ նր մրիւրագոյն ատափարակ ։ որ և ունի զհոտ
ամ

ամպեր ծաղկան քաղցր և ախորժական . նմին իրեն
կոչի հատ մշկոյ, կմ ամպերի :

Այս նահանգ կոչի թէքրութի . վս զի յոջին Ժմկս
ունէր իւր թէքր ինքնիշխառն . ոող և քոնտու , և քու
սլրէ կուտու նահանգք սահմանակիցք նը . իսկ ոյժմ
կացուցանէ զմասնաւոր իմն տեսակ հարկութե . և
փնկ թէքրի են իշխանք գիւղորէից . որք առ ֆալե-
մէ գետով կոչին ֆարիմ+ հանդերձ յարադրութ ան-
ուան գեղջն . ոք ֆարիմ թորաքայ . ֆարիմ ֆար-
ուարանայ . իսկ 'ի ներքին կողմանս Եւնաւ+, կմ այ-
լով անունամբ անունանին . որք և վսրեն գրեթէ ըզ-
թէքրական իշխանութի . և ժղվրդն ևս հնազանդի նց
իրրե թագաւորի ցորչափ գնան ըս հին սովորութեն-
երկրին . առա թէ կամիցին փոփոխութիս առնել,
կմ ինքնիշխանաբար բռնակալել, վաղվաղակի կո-
րուսանեն զնու , կմ 'ի բաց ընկենուն յիշխանուէ ,
և զնմ ինչս նց աւար հարկանեն . յայն սակս կարի
զգուշաւոր են 'ի պահպանութի հին սովորուեց : Ամ-
իշխանք այսոր նահանգի անկախ են 'ի միմեանց .
բայց 'ի սկաշտպանութի Շի իւրեանց ըդէմ օտարաց
ամենեքեան միաբան են և գաշնակից . և ամ զօրու-
թք ըդէմ զինին նց : Բնակիչք նը բազմաթիւ են ,
որք հնրկ անունամբ Մաւինուդի կոչին . այլ չունին
քղքս պարսպաւորս , այլ միայն գեուզս անշուքս և
անպատսպարս . որոց գլխաւորքն են հետագայքդ :
Շնամհա . Անդէտն . կմ Անդէտն . Աշէրա : Են գեուզ-
երեւելիք ը մէջ նահանգին . առ որովք յաճախ են
բովք ոսկւոյ առաւտաբերք . և ոսկի նց մաքուր և
աղնիւ :

Ջուրդարանէ . Սանդանուուր . Անդաւլա . Շիարուտ : Առ-
որով գանանին ոսկեհանք պատունական . ուր բնա-
կիչք տեղւոյն հաւաքեն ոսկի բղմ՝ լուանալով զա-
ւազ վասկաց , որք հոսին ը այն :

Ախառահաննա . Դրայէ , և կայինուրա : Են այլևս երեւ-
և գեօվք . որոց վերջինն է առ ֆալէմէ գետով
յարեմաեան կողմն նը մերձ առ ամրոցն սըյն պետ-
րոսի . զօր 'ի 1714 շնուեցին գաղղիացիք , ունելով
'ի մտի հաստատել անդէն վաճառատեղի , և զկնի
ժմից առ սակաւ սակաւ ը իւրեանց իշխանութք
գրաւել զմեծագանձ բովս պամարտկայ . այլ մինչե-
ւայժմ ոչ հասին վահճանի իւրեանց :

Աշուակի համար:

Ա, ահանգ ըստ արձակ և թքրութե՛ ի հարաւակողմն պամպուկայ. արդաւանդ և բաղմամարդ յոյժ. զի ասի թէ կանայք նր կարի բեղմնաւոր են և բազմածին. և զի չիք առ նո այն անագորոյն սովորութե՛ ի գերութի վաճառւելոյ զմիմեանս, բայց միայն զյանցաւորս մեծամեծ յանցանաց, զորս փիկ սպանանելոյ վաճառեն 'ի գերութի, վայ օր լը օրէ միշտ աձեթիւ նց. որք բաց 'ի մանտիկայ նահանգէն սփռել կան և յայլ զնդն կողմանս ափրիկոյ. մշնդ 'ի ծովեղերեայս 'ի բազմավաճառ տեղիս. ուր և հիմնելեն բնակութիս բջմն: Բայց Մանտիկացիք՝ որք գոտնին 'ի կալամ և 'ի պամպուկ, ոչ են 'ի սցնէ, այլ յԵակացւոց անտի. ոտք և 'ի վերոյ նշանակեցաք: Պատմի թէ Մանտիկացիք հրահանգել են և քղքական ք զբշմ աղքս ափրիկեցւոց. բալցրաբարոյք և հաւատարիմք, եռանդնոտք, աշալուրջք, զուարթամիտք. և մոլեալք զհետ պարուց և կաքաւմանց. և գլխովին անձնատուրք 'ի վճռշահութե՛. որք առնեն երկար ձնողը հորդութիս ը անջրդի անապատա ափրիկոյ բջմ տարժանմամբ, զի երթան մինչեւ 'ի թունպուդ և անդր ևս: Զանտեսութանն և զմուկութ որիզը՝ բոլորովին յանձն առնեն կանանց իւրեանց. և նք ամբարել յորիզոյ անտի այնչափ ինչ: զոր բաւական համարին 'ի պէաս տան, զյաւելելեն վաճառեն. և զգինն ինքեանք առնուն, և ծախեն ը հաճոյից. զի արք չունին ինչ իշխանութե՛ 'ի վրա այնորիկ: Նոյն սովորութիւն է և 'ի վրենտանի հաւուց, զոր կանայք անուցանեն. զի և զնոցայն գին ինքեանք առնուն:

Աք սովորաբար ունին գերիս բջմն, զոր փառս համարին անձանց. զի՞ն բազմուէ գերեաց չափի փարթամութենց. և այնպիսի խնամով պահեն զնն. զի բջմ անգամ գերիք հազիւ զնդնին 'ի տեարց. մշնդ կանայք՝ որք միշտ զարդարել շրջին. ոտք թէ ամ գործ գերութեն իւրեանց էր զարդարել զանձինս. ուստի լաւագոյն կեանս վարեն 'ի գերութեն յօտարնի, ք 'ի բուն հայրենիս իւրեանց: Այլ որչափ գթած են առ նո յորժամ առ իւրեանս ունին, այն շափ անգութեն յըմբունելն և 'ի վաճառւելն. զի թէ պէայազգե իւրեանց ոչ զոք վաճառւեն 'ի գերութի, բայց միայն զմեծամեծ յանցաւորս, ոյլ յօտար ազ-

գաց անինայ վաճառեն : Վազ զի յորժամ հսռանեն
նաւք եւրոպացւոց , ոլք ինդրեն մարդագերիս ,
գերեվաճառք նց առաքեն խումբ մի արանց զօրա-
ւորաց 'ի գեօղ ուրեք . որք յանկարծակի 'ի վը հաս-
եալ պաշարեն զգեօղն . և կալել անտի գերիս արտ
և կանայս , այնչափ թուով որչափ հարկաւոր է նց ,
ածեն զնն ձեռս 'ի յետու կապել , և գայլ 'ի բերան ,
զի մի կարասցեն աղտղակել , և ահ արկանել այլոց
գիւղորէից ը որ անցանեն . իսկ զմանկունս ածեն
'ի պարկս : Աք ը կրօնից միշտ մահմէտական են ,
և նախանձտինդիր մահմէտական օրինաց . յայն
տակս գինի և ողի ոչ ըմպեն :

ՈՌԵԼՄ :

Դ նահանգ և թագաւորութ շարժակ . ը ոմանց
ը 9 աստիճանաւ հարաւային լայնուե . ուղ և
մք եղաք 'ի մերում հացուցի . իոն ը այլոց՝ առա-
ւել 'ի հիւսիսակողմն տռ միով յառաջից նիկեր գե-
առյն յարեմտեան կողմն կակօայ . շրջապատել յարե-
մտից մեծամեծ լերամբք և անտառոք , որք ձգին
գրեթէ մինչև ցծովին առլանդեան : Օգ նր տօթա-
գին է յոյժ և ծանր . իսկ երկիրն անջրդի և ան-
բեր ամենեին , բաց 'ի հանքաց ոսկւոյ և այլոց ի-
րաց . Ջեանդ գրաստ բեռնակիր , ոչ ձի , ոչ ուզու-
և ոչ այլ ինչ ընտանի չորքուանի անասուն . այն զի՝
և յուղառոց անտի , ոլք երթան անդր ը կարաւա-
նին , հազիւ երրդ մասն դառնայ ողջանդամ :
Քանզի վաճառականք մաղրըպայ և ղանհակայ այլեւ
արաբացիք բնակիչք զառայ՝ ամի ամի կազմեն կա-
րաւան մեծ . և յաղահանքաց թէկազսյի հատեալ
աղ բջմ 'ի մեծամեծ շառաշիղս , և բարձել 'ի վը
ուղառոց՝ տանին 'ի մէլլի , անցել ը թումպուդ : Եւ
թէպէա երկայն է և տարժանաւոր յոյժ այս հա-
նաւպարհորդ ուն նց , զի 'ի թէկազսյէ մինչև 'ի թոմ-
ուպուդ է 40 աւուրց ձնողրհ . իսկ 'ի թումպուդաց
մինչև 'ի մէլլի՝ 30 . վոյ և բոլոր ձնողրհորդունն 'ի
թէկազսյէ մինչև 'ի թումպուդ է 70 աւուրց ձնողրհ .
Թոզ զայն ձնողրհ , զօր 'ի մաղրըպայ և 'ի զանհակայ
աւունեն մինչև 'ի թէկազա . և 'ի զնքն տեղիս ունին
անցանել ը անապատս անհետու և անջրդիս . յորտ
բջմ անդամ վասնդին կեանք մարդկան և գրաւ-
առուց :

առաջ . սակայն և այնողս յանձն առնուն զայն ճմ՝
դժուարունս և զվահնգս սակս յոլովուն շահից՝ զոր
շահին . զի աղ տանին 'ի մելլի , և փոխարէն ոսկի
առնուն , քզի կարի մեծադին է անդ աղն . իբր զի
համարել է գերագոյն դեղ ըդէմ նեխուն և ապա-
կանուն արեան , զոր պտճակ անդ տօթն և յոռուն
օդոյն . վոյ համօրէն բնակիչք մէլլեայ՝ և շրջակայ
տեղեացն՝ յամօր կոտորակ մի աղի արկել 'ի ջուր
լուծանեն , և ըմպեն զայն ախորժանօք . որով հա-
մարին պահել զառողջուն և զուժ իւրեանց : Աղա
և վաճառականք մէլլեայ պահել յաղէ անախ որչափ
ինչ բաւական է 'ի պէտս ծի իւրեամնց . զյաւելեալն
հանեն 'ի փոքրագոյն շառաչիզ , և բարձել յուսս
արանց ուժեղաց , տանին մինչև 'ի գետ մի մեծ . և
անդ դիզեն զայն կոյտս կոյտս միակարգ առ գե-
տափն , իւրաքանչիւր զիւր նշան եղեալ 'ի վր աղի
իւրոյ . և մեկնին անտի հեռի իբր կէս աւուր ճաւ-
նապարհ : Յայնժամ գան բնակիչք միւսոյ կողման
գետոյն , ժզիլթք անծանօթք . ը որոց առանց տե-
ռանելոյ՝ և առանց խօսելոյ՝ առևարութիս առնեն
մէլլեացիք . և մեծամեծ նաւակօք անցել ը գետն ,
զնիեն զայն . և գետել յիւրաքանչիւր կոյտ աղի՝ ոս-
կի որչափ արժան համարին՝ գնան 'ի բաց : Աղա
վճռկանք մէլլեայ եկել անդրէն յափն գետոյն , և
աեսել զոսկին , եթէ համարին զայն բաւական գին ,
առնուն զոսկին , և թաղուն անդ զայն . ապաթէ
ոչ թօղուն և զոսկին , և դառնան յետս : Յետոյ
գան բնակիչք միւսոյ կողման , և յաւելուն յոսկին ,
կմ զառաջին եղեալն ևս բառնան , և գնան 'ի աե-
զիս իւրեանց :

Զայոյ ճմ պատմէ կատամոստ վէնէտկեցի երևելի
նաւալետ Ենրիկոսի փորդուքալսց արքայի , որ ճա-
նապարհորդեաց 'ի ծովեղերս սէնէկալսյ լունել 'ի
վաճառականաց անտի զանհակայ , և նոցին իսկ նիկ-
րիտացւոց . որ և եհարց ցնոյն վաճառականս , թէ
ըէր թագրն մէլլեայ որ է սյնչափ հզօր , չորար ինչ
փոյթ մինչև ցայժմ բռնուք , կմ հնարիւք իմն առ-
նուլ զտեղեկուն ինչ վլայնը անծանօթ ժզիլթքեան :
Նք աստցին նմ թէ ամօք ինչ յառաջ արար զայդ-
փորձ . պատմէր տունել իւրոց վճռկանաց , զի առ
գետոյն ուր գնեն զայն , փորեսցին գուրս և զօ-
վեսցին 'ի նո . և 'ի գալ անդր նց , կալցեն զոմանտ
'ի նցէ . զոր և արտրին , և կայան անձինս չորս ,
իսկ այլք փախէան . այլ քզի մինն բաւական էր տալ
նց

նց տեղեկութ, արձակեցին զերիսն . խոստանալով
նց, թէ և չորրդին մնաս ինչ ոչ հասցի :
Բայց վրիպեցան՝ ի յուսոյ . վն զի եկաց նա անդ
ամենեին անբարբառ և պատահձեալ . և չետ ինչ
պիմի առ ամ հարցմունս, զոր հարցին ի զնդն լե
զուս . և ոչ իսկ բնաւ կամեցաւ առնուլ կերակուր .
վնյ և մեռաւ ի չորրդում աւուր : Իսկ վճռկանաց
գարձել ՚ի մշլի, պատմեցին զիրսն արքայի եւր
եանց . ը նմին և զհանդատանս մարմնոյ նց ստորա
դրեցին նմք ասելով, թէ են արք քարձրահասանիք
սանացափ մի և կէս քարձր քան զինքեանս . և թէ
ստորին շրմունք նց թանձր են իրը ՚ի չափ բռան
մարդոյ առ կախել, յորոց կաթէին շիմք արեան .
բայց վերին շրմունքն հասարակ են . յերկուց կող
մանց քերանոյն ունին մի մի աստամունս մեծամեծա .
աչք նց սեաւ և մեծ և բոլոր տեսիլ դիմացն ահար
կու : Յետ այսոր գիպուածոյ ը ամս երիս ոչ եկին
նմք ՚ի գետափն . այլ յետոյ բունագատեալ ՚ի հար
կաւորութէ, վերստին սկսան առնել զայն առե
տրութ ը մշլեացոց : Այս ուստմութին թէ ոչ ը
բոլորին՝ գէթ ը պարագայից ինչ երեկ առասպե
լախառն . ը որ և կատամօսո՛ որ պատմէ զայս
ոչ երեկ հաւան :

Բնակիչք մշլեայ ՚ի մշջնիկրիտացւոց առաւելքա
զարգական են և հրահանգել . որք յոջ ք զայլս ՚ի
նիկրիտացւոց՝ ընկալան զօրէնս մահմէտի . և յոյն
ժամ անձնատր եղեն իշխանի՝ որ էր ՚ի սերնդոց
ցեղի ինչ բնիկ ափրիկեցւոյ զաառա անտղատին .
և հօրեղբայր իւսուֆայ արքային մաղրըպայ : ՚ի
սերնդոց օր թքրեցին ՚ի մշլի մինչև ցիոքիա բանա
կալ . որ յաղթել վերջին թքրի նր . հարկատու կա
ցոյց զնա թամպուդայ : Յայսմ թքրութեն մի միայն
քղք գտանի, կոչեցել Մէւլէ . յորմէ և նահանգն
առնու զանուն . որ և է արքայանիստ . և ունի
տունա կմ ծուխ իրը նօօօ . և մղբիթս յոլովս . և
մօնլայս բազմաթինս : Են անդ և արհեստաւորք
բղմք, և վճռկանք բնիկք և օտարականք . որք ը
մեծի մասին հարուստ են : Իսկ այլք ցրին բնակին
տիտ և անդ ը նահանգն ողջոյն :

Յօդ Կ. Վամպիա :

() ովեզերեայ կողմն նիկրիտիոյ 'ի դալարի հըրունդանէն մինչե 'ի հր' վէրկայ՝ սովորաբար կոչի Քամպիա . կմ Ծաշվէրտ տամպիա , որ է լըարձակ ծ արգաւանդ և մարգաշատ , կալեալ զանուն 'ի Քամպիա ; գետոյն . որ է մի 'ի գլխաւոր գետոցն ափքիկոյ . զոր յըհանուր ներածութ անդ ափրիկոյ 'և ճնիսագոյն ևս 'ի նիկրիախա' ստորագրեցաք : Ելանէ 'ի միջերկրական կովմանց նիկրիախոյ . այլ ակն նը անծանօթ է . և հոսել ը հիւսիսակողմն սոնկովայ յարեելից ը արևմուտս , մտանէ յայս ։ զոր և բաժանէ յերկու մասունո . քը 'ի հիւսիսոյին , և 'ի հարաւային . յորս են զնշն թէրունք կմ նահանդք , զորս յառաջիսյդ ստորագրեցուք :

Հիւսիսային Վամպիա :

Այս մասն քամպիայ 'ի դալարի հրունդանէն ձգի մինչե ցկարմիր սարն և պարագրէ զայսոսիկ թէրուն կմ նահանդո . Քայօր . Պալու . կմ Պալ . Սին . Պարսալի . Պառա . Եանի . Վոլէյ . Փօնիա . Քայն . Թիւնարակ . Թիւնանի . և զայլ այսողիսի փոքրիկ թրուն , զորս յայսամ վայրի մի առ մի ստորագրեցուք :

Քայօր . կմ Քայպօր :

Ա թագաւորուն կմ նահանդ մեծ և երեելի ք զայլ ամ թէրունս որք են ը մէջ սէնէկալ և քամպիա գետոց . որ ունի իւր սահման 'ի հիւսիսոյ ' զսէնէկալ . իսկ յարեելից զմեալօֆացիս . և ձգեալ տարածի առ ծովեզերբբ մզոնս իբրե ճչ . և առաւել : Երկիր նը արգաւանդ է յոյժ . ըերէ ցորեան և այլ տրմաիս առատապէս , և զնշն բանջարս 'ի կերակուր , և 'ի դեղ բժշկուե , այլ և լեղակ : Ունի և պատունական արօտս , և անասունս բջին , և թըռչունս ընտանիս և վայրենիս : Գտանին անդ և փիղք , և ոչք մեծամեծք և շարաթոյնք , և արծունիք անհամարք , որք մարտ եցել կուուին ը օծից , և սատակն

կեն զնու . և ինքեանք ողբենը վնաս կրեն յօձից անտի . զի ասի թէ փետուրք նց թաւ են յոյժ . ուստի և ոչ կարեն օձք խայթել զնու , և թափել զմոյն ինչ : Բնակիչք նր են նիկրիտացիք 'իցեղէն ձեալօֆաց ոց մահմէտականաց : Գտանի անդ և այլ աղդ մի կոչեցել կիւնեցի + կմ ը այլոց Սէքէրացի + , կռասպաշտ առ հնրկ . որք ցրուել կան աստ և անդ ը հոն . և մննդ 'ի մերձակայ ծովեզերս դալարի սարին . և կացուցանեն 'ի մէջ իւրեանց զնշն փոքրիկ հմրկուիս աղատս և ինքնադլուիս . չունելով զայլ ենչ օրէնս , բայց եթէ զմելադրուի բնուեն , և զսովորուիս նախ նեաց իւրեանց : Սք ը բարուց պարզամիտ են և քաղցրաբարոյ . պարկեցու , առատաձեռն , մարդասէր առ օտարս , և հիւրասէր յոյժ . ող վկայէ անդրէաս պրուէ գլխաւոր գործակալ ընկերուէ վճռկանաց դաղդիացւոց . որ բչմ հիւրասիրուք պատուեցաւ 'ի նցէ . բայց միանգամոյն և ոխակալք յոյժ . որք ոչ երբէք գիտեն մոռանալ զրնկալեալ : Խասն , այլ թէ կանուի և թէ անագան՝ առնուն զվսէժ . զի ոխակալուի նց 'ի հարց անցանէ յորդիս : Սք իբր վայրենի անտառունք համարել են 'ի շըջակայ ազգաց . որք և յայն սակս նախատինս համարին անձանց , և թէ ոք սէրէրացիս , կմ աղատս կոչեսցէ զինքեանս : Աւ կայն ող ասէ տէ լա հարք , սէրէրացիք առաւել զգօն են ք զնու . զի ժրաշան են 'ի մշակութիւն երկրի : և պատրաստեն անձանց պարէնս կերակրոյ , և ոչ ը նց ծոյլք և անդործք . որք լաւ համարին կեալ 'ի թշուաւուէ , և տուայտիլքաղու , ք վաստակիլ 'ի գործ մշակուէ երկրի :

Ասէ նախայիշատակել սինդրէաս պրուէ գաղղիացի , որ 'ի սկիզբն անցեալ գարու շըջեցաւ 'ի կողմանն յայսսիկ , թէ նք ոչ գիտեն , և ոչ իսկ ըունին զան մահութիւն հոգւոց մարդկան . այլ համարին , թէ 'ի մեռանիլ մարդոյ , և հոգին ը մարմնոյ գնայ յապականութիւն : Բայց պատիւն՝ զոր առնեն նք մեռելոց 'ի թաղելն զնու , թունի թէ զհկուկն վկայէ . զի ը նորին պրուայ՝ թաղեն զնու արտաքոյ գեզջ իւրեանց 'ի բոլորակ և 'ի բրդաձեն խրձիթս տմրափակեալս . եդել 'ի վր մասնաւոր իմն մահմի պատունով . և առ խրձիւն կանգնեն եղեգնակերտ պատնէլ իբր ուս նաշափի մի թանձրյառաւել հաստատուի . և 'ի գլուխ նր՝ թէ այր իցէ թաղեալն 'ի նմ , գնեն աղեղն և նետս , իսկ թէ կին՝ անկան . որք ցուցանեն զգըւ խաւոր գործս երկոցունց , որով և որոշին տապանք

տրանց և կանանց : Այսպիսի գերեզմանատեղիք՝ ի հեռուստ երեխն իրը երկրդական գեօղս՝ ուր առաւ և լ բազմաթիւ են գերեզմանք մեռելոց, քը զբնա կարանս կենդանեաց՝ ի գեօղս : Ծագաւորն, կմ իշխանն այսր նահանգի է մի յերեւելի յիշխանաց անտի նիկրիտիոյ, որ կոչի Տամէւ : Իսկ գլխաւոր տեղիք նահանգին են հետադայք :

Քայօք . որ կոչի և Բագիստո : Ե գլխաւոր տեղիք այսր նահանգի . առ ափն ծովու հանդեպ պատուական ծոցոյ՝ որ կոչի ծառ քրտնիոյ . ունելով շուրջանակի անտառ մեծ արմաւենեաց, և այլոց ծառոց . և արտաքոյ՝ դաշտ մեծ, կմ անապատ աւաղուտ և անքեր . ուր այնցափ սաստիկ է տապ տօթոյն, մենք՝ ի միջօրէի՝ մինչեւ աւազոյ երկրին հրանալ իբրեւզ դազախ հնոցի, և կիզուլ զտերես ծառոց, և զկո շիկս ոտից : Այս քղք (զոր թէ արժան իցէ կոչել քղք,) ունի 300 տունս կմ խրճիթս, շինեալս յեղեգանց և ՚ի տերեոյ արմաւենեաց . բայց մեծագոյն են և լաւագոյն քը զտունս այլոց աեղեաց այսր նահանգի . որ և տիրանզս խօսելով՝ է գլխաւոր նաւահանգիստ այսր թդրուե . ուր յաճախինն նաւք անգղիացւոց և դաղղիացւոց . որք ունին երեւելի համբարանոց վաճառաց, և վճռտեղի ՚ի կորէա մօտակայ կղղին :

Կառավարուեն քղքին է ՚ի ձեռս միոյ ՚ի գլխաւոր իշխանաց թդրուե, որ և է իբրեւ փոխարքայ : Իսկ բնակիչք նր՝ ոոկ և շրջակայ տեղեաց՝ թէպտ բիրտ են և տգէտ ամենեին, սակայն խօսին ՚ի բարբառ փորդուքալաց, թէպէտ բշրմ աղաւաղութք . դիրք մարմնոյ նց վայելուէ է . այլ ոունդն լայն և տափարակ, որ մեծապէտ տգեղացուցանէ զդէմս նց . արք և կանայք մերկ շընին, զամօթոյս ևեթ ծածկեալ ունելով փոքրիկ կապերտիւ . որք և վարեն կեանս զօրէն անասնոց անբանից :

Մագայա: Գեօղ մեծ արքայանիստ . ուր բնակի թագաւոր այսր նահանգի յելեղնակերտ ապարանս, ըստինակի այլոց թդրաց կմ իշխանաց նիկրիտիոյ : **Մանիս:** Գեօղ մեծ, ուր ՚ի թմկս ինչ տարւոյն բնակի թդրն :

Իշխանաւ: Քաղսք կմ գեօղ, ուր է բնակարանն հարճից թդրին :

Սահէնէ: Գեօղ մեծ, ուր յառաջագոյն էին բշրմ տունք փորդուքալաց . բայց այժմ երկու ևեթ մեծամեծ տունք փորդուքալոց գտանին ՚ի նմ . որք ժը :

հանդեպ տանց իւրեանց ունին մի մի ծառս ստուարս
յոյժ։ Գոյ անդ և ջրհոր մի խոր 10 կանդնացափ։
յորմէ բոլոր գեղվն առնու ջուր։ որ մաքուր է յոյժ
և բաղզր։ ոնդ թէ մեզը խառնեալ կայր՝ ինձնա։

Հրանտան Պատրիք։ Բնակիչք տեղւոյն Պէրէւէր կո-
չն։ իսկ 'ի փորդուքալաց կոչեցաւ դաշարի՛ ատկա-
դաշարադեղ ծառոց, և փոքրիկ անտառաց իւրոց,
և երկուց բոլորաձեւ ըլքոց, զորս գաղզիացիք ստինս
կոչեն։ որք 'ի ծովէ գեղեցիկ և կարի զուարձալի
երկուն։ Այս հրուանդան հարուստ մի երկայնեալ
ձգի արտաքս ՚ի ծովին, և համարեալ է մեծագոյն ք-
զայլ ամ հրուանդանս ափրիկոյ զինի հրուանդանին
բարեյուայ։ Եւ ունի երկու չեշտս՝ կմ լեզուա չեշտ-
անկիւնս։ մի յարեմտեան ծայրն, և միւս ևս 'ի
հարաւայինն։ վերջինս այս թէպէտ ցած է, բայց
գեղեցիկ յոյժ։ ունելով 'ի ծովափնեայ եզերս իւր
երկայնաձիգ շարս ծառոց, որք այնպս վայելուչ կար-
դու բուսել կան, ոնդ թէ ձեռամբ ոնկել էին։ Եւ
մէջ սցսց երկուց ծայրից՝ է կղզի փոքր և ան-
բնակ, որ կոչի Կոցի նախաց։ վո՞զ զի գրեթէ միշտ լի
Են 'ի նմ ծովվերեայ թուշունք։

Սար կմ Հրուանդան Եմմանուէցն։ Ելեառն ծովեղեր-
եայ իբրև 12 միլինաւ հեռի 'ի դաշարի հրուանդա-
նէն։ գագաթն որի տափարակ։ և ծածկել մշտադա-
շար ծառովք։ որով յամ կողմանց երեսի իրը վայե-
լուչ իմն թատրոն։ զոր յեւրոպացւոց անտի փոր-
դուքալք գալին զառաջինն, և յայս անուն կոչեցի-
պնա 'ի պատիւ էմմանուէլի արքայի իւրեանց, յա-
ջարդի ը յավհաննու։ Այս սովին հրուանդանու են
երկու փոքրիկ կղզեք կմ ժայռք, 'ի հոլանտացւոց
անուաննելք յայտ սպիտակ։ և յերկոսին ևս գտանի
ինչնանաւոր, մինն ունի 'ի գագաթան իւրում ծառ-
մի մեծ յոյժ։ իսկ միւսն խոռոչ ըարձակ, յորում
կարկօջահոս շառացմամբ իջանեն ջուրք։ ուր և 'ի
մրրկալից թմկս գագարին թռչունք ծովու։ 'ի վր-
այսր հրուանդանի էմմանուէլեան՝ հոլանտացիք շի-
նեցին ամրոց փոքրիկ, անուաննել Աբ անդրեան։ այլ
'ի 1664 առին զայն անդղիացիք։ և փոխեցին զանուն
նոր յիշու։ 'ի պատիւ իշխանին եօրքայ։ որ առ նովին
թմկւ եր յընկերուէ տնտի անգղիացւոց վճռկանու-
տփրիկոյ։ Այլ փութով 'ի վր հասել հոլանտացւոց՝
անդրէն առին 'ի նցէ։

Կրէս։ Եր կղզի յետկոյս գալարի հրուանդանին։
գրեթէ յանդիման նախայիշատակեալ ստեանց, կմ
միդ

բոլորաձեւ թլրոց . զոր բնակիչք նոր Պարսակայք կու-
շեն . իբրև քարընկէց մի հեռի ի ցամագէն . շըջառզատ
նոր իբրև 2 մզոն անդղիական . և է իբր անհասչելի
'ի պատճուս բաղմուտն ժայռից , որք շուրջ պատեն զնո-
վաւ : 'Ի հիւսիսային արևմուեան կողմն՝ ունի փոքրիկ
ծոց քաջ պաշտպանել , և ապահով ի հողմոց . և այն
է միայն Ճնիպհ՝ ըստ մարթ է հասանիլ 'ի կղզի
անդր . բայց և նորայն մուտ դժուարին է յօյժ . առ
որով կառուցեալ կայ և ամրոց : Հող կմ երկիր այսը
կղզոյ՝ է տեսակ իմն կարմիագոյն աւազոյ . որ այլ
ինչ ոչ բերէ , բայց միսյն եղէդն , և կնիւն . ուր
բաղմուն վայրենի աղաւնեաց բունելի կան : Զիք անդ
բնաւ գետ , կմ աղբեւր ինքնարուղխ , այլ միայն
դուրք . ուր լնուն ջուր 'ի պէտս բնակչաց՝ բերել 'ի
ցամարէն :

Զայս կղզի ղառաջինն հոլանտացիք գտին . որք և
անուանեցին զնա Կուչա . յանուն միոյ 'ի կղզեաց զէ-
լանտսոյի վա նմանուե , զոր ունի ը այնմ կղզոյ .
որ և 'ի 1617 շնօրհեցաւ նց 'ի սկիրամնոյ արքայէ դա-
լարի հրուանդանին , կմ քայորայ . և շինեցին անդ
ամրոց 'ի գլուխ ժայռի՝ զոր և կոչեցին Ալճրո նառ-
ստայ . բայց յետոյ տեսել եթէ չեր այն ամրոց յար-
մար և բաւական 'ի սկահպանուե մտից նւկնդստի
նոր , շինեցին միւս ևս ամրոց փոքր մի 'ի վայր 'ի քա-
ջադէպ վայրի 'ի խափանել զմուտնաւուց թշնամիոց
'ի ծոց անդր նոր , զոր և անուանեցին Ալճրո օրանձնայ :
'ի 1663 առին անգղիացիք զայս կղզի . այլ յամին որ
զկնի ' հանին զնտ անտի հոլանտացիք , անդրէն ը
իշխանութիւրեանց ընկրկելով , և լու ևս ամրա-
ցուցին զամրոցս նոր : Ապա 'ի 1677 դաղղիացիք տի-
բեցին նմ , և քակեցին զամրուեն նոր . զորս յետոյ
Ընկերութիւն վճռ կսմնաց դաղղիացւոց սէնէկալայ 'անդ-
րէն շինեաց . և փոփոխել զանուանս ամրոցաց . ըշ-
վերինն կոչեցին Աբ Գուշնէլ . իսկ զստորինն Վէ-
ճանափէ . ապա Աբ Քըանլիսիս . և հաստատեցին անդ-
զվանուկանուել ըստ երից թղթուեց . ցո քայորայ , սի-
նայ , և սալումայ . յորոց հանէին զմարդագերիս ,
ուկի , գլուխիր , մոմ , մորթս , և պարէնս 'ի պէտս
անձանց և նաւուց իւրեանց . տալրվ փոխարին զա-
նազան վաճառս եւրոպիոյ : Այլ յետոյ վերստին
առին զնա անդղիացիք . իսկ 'ի ֆմկի պատղմի ' որ
գրգուեցաւ 'ի մէջ դաղղիացւոց և անգղիացւոց 'ի
պատճուս ապստամբուն հիւսիսային տմերիկացւոց 'ի
հնաշանդութէ անդղիացւոց , առի թէ գաղղիացիք
դազտ

դաղստ 'ի վլր հասել, անդրէն տիրեցին այսոմ կղզւոյ .
այլ փութով դրձլ վանեցան անտի յանդղիացւոց :
Այս կղզի անուանի է առ Եւրոպացիս ոչ միայն 'ի
սպանուա այսչափ պազմաց և փոփոխուեց, այլ ա-
ռաւել սակս ասաղաբաշխական և քնական ըննոււեց,
զոր արարին անդ հայէս, վարիաս, և կլօս . որբ էին
յարքայական ձեմարանէ անտի գիտուեց փարիզու .
առաքելք անդր 'ի մեծէն լուգովիկոսէ, զի 'ի ձեռն
քաջ զննուեց կատարելագործեսցեն զտեսական ու-
սումն շարժմանց և խաւարմանց արբանեկացն լուոըն
թագի, զբարձրուի ծանրաչափ և ջերմաչափ գործ-
եաց, զուզուաւորուի կողմնացոյց մագնիսեան սլո-
քին, և զպէտպէս շարժմունս, և զերեւոյթս ծովու-
Պիյութի: Քաղաք առ ափն սէնեկալ գետոյ . մօտ 'ի
բերան նր յանդիման կղզւոյն սբյն լուգովիկոսի . որ
ունի տնդ նաւահանդիսա պատուական, ուր կարի
յաճախմն նաւք . յայն սակս անդ նստին մաքսապետք
թագուաորին քայորայ առնուլ զմոքսս վլ վաճառաց :
Աւ սովին նաւահանդստիւ տեսանին աւերակք .
ամրոցի՝ զոր 'ի 1433 առ մերութ թ յովհաննու փոր-
դուքալացւոց արքսոյի սկսան շինել փորդուքալք .
այլ 'ի տնդուայուուեցոյն և անյարմար դրից տեղ-
ւոյն՝ որ չուներ բովս ոսկւոյ, ոոկ կարծեին, թողին
կիսակատար զշինուածն . և գարձան անդրէն յ
իւրեանց :

Սէնեկալ . 'ի գաղղիացւոց կղզի սբյն լուդովիսի կոցե-
եալ . է կղզի ը մէջ սէնեկալ գետոյն . 8 մղոնաւ
հեռի 'ի բերանոց նր : Ըստապատ նր է իբրև 3 մղոն .
և երկիրն աւաղուտ և անբեր : 'ի հարաւակողմն ունի
շուրջանակի աւազսկայտ բլուրս, և 'ի մէջ նը ճա-
հիճ կիմ լիճ աղի : 'ի հիւսիսային ծայր նր են մեծու-
մեծ ծառք, որբ իբրև տնտառ երեսին, և 'ի միջի նը
այլ լիճ մի : Բաց յերկուց աստի՝ է անդ ը մէջ կրղ-
ւոյն միւս ևս լիճ փոքր . և առ նովաւ անտառ փոք-
րիկ, ուր 'ի ատօթոյ արեգական խուսափել մակաղին
խաշինք բնակչոց ամրոցին ֆրանսիոյ . որբ պահեն
անդ խոշինս 'ի պէտու իւրեանց : Այս կղզի գրեթե
ը կէսն տարւոյն, յո 'ի դեկտեմբեր ամսոյ մինչեւ
ցյուլիս՝ զուրկ է 'ի քայլցր ջրոյ . վլ զի չունի բնաւ-
ինքնաբուզի աղքիւրս կմ ջըհոր . և ջուր գետոյն ը
այն ֆմկս գոլով նուազեալ, ծովին մտանէ 'ի նմ, և
դառնացուցանէ զջուր նր . իսկ յայլ ամիսս աճեցել
բարձրանան, որով և քաղցրանան վտնեալ զդառն
ջուրս ծովու :

Հայոց սիր լւարավիկոն : Եւ բերդ ամուռ ՚ի հարաւային ծայր վերսոգրել կղզւոյ ՚ի քաջադեպ վայրի քաջ պաշտոպանեալ զինուք և զօրք . որ ունի և զինարան պատուական . և Եւ իբրև կեղրոն վաճառ ուականուել ընկերուե անգղիտոց վճռկանաց ափ ըիկոյ . զոր շնուցին գաղղիացիք ՚ի 1642 . ՚ի Ժմիին յորում կալան զկղզին . որ եւ յանուն ամրոցին՝ կոչեցաւ կղզի սքյն լուգովիկոսի : Այլ ՚ի 1692 հանին զնոտ անտի անգղիացիք . ը նմին փոխեցին և զանուն կղզւոյն , կոչելով զնա Միւլիան նորի : Ապա զինի 5.6 ամսոց մի միայն պտղմական նաւ գաղղիացւոց յանկարծակի ՚ի վր հասել , սոնդրէն կալառ զկղզին և զամրոցն . յորում տիրեցին գաղղիացիք խաղաղութ մինչև ցամ 1763 . յորում ամի ասի թէ վերստին առին զնա անգղիացիք :

Յունանէս պրէրա : Եւ կղզի ը մէջ պիֆէսքան պօքոս կղզւաց : Ըրջապատ նր է իբրև 12 մլոն . երկիրն արգաւանդ . և ՚ի բդմ տեղիս ծառախիտ . և Եւ եւսանութք երկուց իշխանաց նիկրիտիացւոց՝ որք բնակին յերկուս գեօղս :

Պրէտ : Մակնէրա : Ին այլ երկու փոքրիկ կղզիք ոչ այնչափ ինչ տարտիաց ՚ի միմեանց : Յառաջնումն գտահին բնակիչք՝ թէպէտ սակաւք՝ վայ յոռուելոյ նր , և ստէու ողողելոյ ջուրց ունէկալայ զերկիր նր . բայց երկու գլխովին անբնակ է :

Պատու . կմ^թ Պատւ :

Մ յու թագաւորուե կմ նահանդ ձգի ը երկայն առ ծովեզերքքամուիայ , մզոնս աւելի ք 30. սկսել ՚ի պրիկնեայ որ է վլրջին սահման թէպրուեն քայուրայ , մինչև ՚ի ուկրէնա սարաւանդակին՝ որ է սահման սին նահանդի . իսկ յարեկլից՝ ունի իւր սահման զնահանդս ճեալօփացւոց : Երկիր նր գրեթէ ը ամ նման է այլոց շրջակայ նահանդաց : Յառաջագոյն նուածեցաւ առ ժմկ մի ը որութ թէպրին քայորայ , այլ այժմ է ինքնիշխան . և ունի իւր ուեփական թէքր , ոնկ ունէր և յշչն . որ իջանէ ՚ի սերնդոց թէքրացն քայորայ , և կոչն Զին . նստի ՚ի լամպաւսա գլխաւոր տեղի թէքրուե իւրոյ . ոչ է բռնակալ , ոնկ այլք սմանք ՚ի թէքրացն նիկրիտիոյ . քղի ՚ի մէծամեծ իրողութիւս սովոր է իսորհուրդ տունուլ ՚ի գլխաւոր պաշտօնաւարաց և իշխանաց իւրոց : Պատմի թէ յորժմ կամի խորհուրդ առնուլ ՚ի վր երևելի ինչ իրաց , ժռ

Ժողովէ զխորհրդականս իւր յանտառախիտ վայր . և անդ փորեալ գուբ մեծ 'ի գեանի , ամ խորհրդականք ժողովին առ շրթամբք նր շուրջանակի . և զգը լուսիս իւրեանց խոնարհեալ 'ի գուբ անդր , ունկն դնեն թպրին , որ առաջի առնէ նց զնիւթ խորհրդագոյն . ապա տունել զխորհուրդ իւրեանց սուհմանել վճռեն զիրսն . միշտ 'ի նոյն դիրս կալով մինչեւ յաւրտ խորհրդոյն : Յետոյ խնուն զդուբն նովին հողով , որ հանաւ անտի . առ ՚ի նշանակել թէ ամ բանք , որք 'ի խորհրդեան անդ խօսեցան , ը մշտնջենաւոր լուռք թաղել մնացեն . իսկ եթէ ոք դէք դպշն ինչքանս յայտնեսցէ 'ի բանից խորհրդոյն , ըպատիժ մահու ածեն ՚ի վր :

Սիս :

Այս թագաւորութ ևս կմ նահանդ՝ ձգի ը երկայն առ ծովեզերբք քամպիսց . 'ի նախայիշտակել սարաւանդակէն սէրէնույ մինչեւ 'ի պարսալո դետն իբր 24 մզնուաւ . այլ յարեւելց ը արեւմուտս կարի ըարձակագոյն է լայնութ նր : Երկիր նր արդաւանդ է և քաջ մշակել . բաց 'ի շրջակայ սահմանացն , որք անդորք և անդարման լքեալ կան 'ի պտղնուս ստեղու արշաւանաց մերձակայ ժողովրդոց . ը որոց բնակիչք այսր նահանդի միշտ արտղմ ունին : Իսկ գլխաւոր տեղիք նր են հետագայքդ :

Եռակալ: Քզք մեծ և բազմումարդ . բնակիչք նր թէտէտ բիրտ են և ստահակ , սակայն կարի անձնատուր են 'ի վաճառականութի : Անդիհացիք ունին անդ վաճառատեղի , և համբարտանոց վաճառաց . որ է 'ի ներքոյ կառավարութ վաճառատեղոյն , զոր ունին 'ի նախայիշտակել կորէս կլզին . որք փխէ վաճառաց իւրեանց առնուն տատի դերիս , մորթս , փղոսկր , և մոմ :

Ջատիս: Քզք կմ աւան ծովեզերեայ . ուր յահայնեն անդզիացիք 'ի սակս վաճառականութ :

Պարսալի :

Ուագաւորութ կմ նահանդ՝ որ առնուր զանուն 'ի նախայիշտակետ սպարսալո գետոյ . ձգի նոյնութ առ ծովեզերբք քամպիսց իւրեւ 10 մզնաւ , մինչեւ 'ի պէրսնուտա դետն . բայց լայնութ նր ըարձակագոյն է յոյժ : Ունի իւր թպր , որ է մի 'ի

փոքր թղթուեց նիկրիտիոյ . սակայն ամբարտաւան
ուն և բռնակալուն նր չէ ինչ ըհատ 'ի մեծագոյն
թղթաց անտի : Ասի թէ ոչ ոք 'ի ժղվրդենէ երկ-
րին՝ բաց 'ի թագաւորէն և յընտանեաց նր՝ կարօղ
է ննջել ը մասնաւոր ինչ կտաւի ծածկութիւն . զոր
առնեն 'ի պաշտպանուի 'ի ճանձից և 'ի պիծակաց .
և եթէ ոք անցանիցէ զայսու օրինոք՝ պատիժ նր
է դերութիւն : Նոյնպէս եթէ ոք առանց հրամանի
համարձակեցի նպատիլ 'ի վլր փսիաթի , յորոյ վլր
նստին ընտանիք թղթին , նովին պատժով պատ-
ժի : Այս բռնակալութիւն և խստութիւն պատժոց
վեց գուղնաքեայ յանցանաց՝ թագաւորէ 'ի բոլոր
նիկրիալիա :

Քոհոնէ կմ Քոպոնէ : Քղք ծովեղերեայ արքայանիստ
և բազմավաճառ . ուր յաճախեն անդղիացիք սակս
վաճառականութիւն : Վաճառականք մանտիկացիք ամի
ամի յամսեանն դեկտեմբերի հասանեն անդր 'ի ներ-
քին կողմանց նիկրիտիոյ . բերեալ եօթն կմ ութն
հազար դերիս , և փղոսկր բղմ , և ոսկի , զոր դրե-
թէ բովանդակ անդղիացիք գնեն :

Եղանք : Քղք առ քամպիա գետով իրրե 100 մլու-
նաւ հեռի 'ի նախընթաց քղքէ . և երիւք 'ի քովէ-
րոյ , որ և է նաւահանդիստ նր . ը մէջ դեղեցիկ
դաշտավայրի , որ ըրջաւպատել է մեծամեծ անտա-
ռովք . յորում գտանին բազմութիւն զանազան վայրենի
գաղանաց : Բնակիչք նր դրեթէ բովանդակ փոր-
դուքալացիք են . որք յանցել ժմկս մեծապէս ծաղ-
կեցուցին զքղքս զայս . բայց այժմ նուազեալ է
յոյժ : Ընկերութին անդղիացւոց վաճառականաց ու-
նի աստ սեփական վաճառատեղի և գործակալս .
Քղի կարի բազմավաճառ է տեղիս այո . ուր յա-
ճախեն վաճառականք մանտիկացիք , և կուինէա-
ցիք . բարձել բերելով անդ զվաճառս իւրեանց :

Պառա:

Խագաւորութիւն կմ նահանգ ձգել առ ափն քամ-
պիայ գետոյ , 'ի հիւսիսակողմն մերձ 'ի բե-
րան նր իրրե 40 մլոնաւ : Ծագաւոր նր է 'ի ցեղէ
անտի մանտիկացւոց . այլ հարկատու է արքային
պարսալեայ : Իսկ գլխաւոր տեղիք նորա են հե-
տագայք :

Պառա : Քղք կմ գեօղ , յորմէ նահանգն ովզոյն
առնու զանուն , 'ի հիւսիսային ծայր քամպիայ գե-
տագայք :

ուր, ուր նստի թագաւորը նր չ մեծ մասն տարային: Մերձ յայս տեղի է ծառ մի մեծ և ստուար յոյժ. զոր փորդուքալք Ալբան բանարդա կոչեն. վաղ չ է նշանակ ուղեցոյց և առաջնորդ նաւավարաց յուղեցել զնաւս իւրեանց:

Աննապար: Քիզք կժ գեղ միով մղոնաւ հեռի յանառառի միոջ. ուր չ մասն ինչ տարւոյն բնակէ թագաւոր սորին նահանդի. առ որով է ծառ մի մեծ յոյժ. կոչեցեալ Դրօսի արտային պառայ, զոր նմնաւք՝ մենդ անդղիացւոցն՝ որք մտանեն, ի քամպիս դեան, ողջունեն երիս հրացինս արձակէ լով. զնոյն առնեն և յեղանելն անտի. չ նմին տան և երկաթսաւ; մանաւոր կշռով արքունի պաշտօնատարաց՝ ի վճար խարիսխ արկանելոյ 'ի նւհնդստի անդ:

Եւնու: Է կղզի 'ի սմին թագաւորուե 'ի մէջ քամպիսյ գետոյն իբրե 10 մղոնաւ հեռի 'ի բերանոյ նր. որ այժմ է 'ի ձեռս անդղիացւոց, և է գլխաւոր տեղի ընկերուե վաճառականաց նց որ յափրիկէ. յոյր սակս ամի ամի ասկաւ ինչ հարկս տան թագաւորին պառայ: Ըստապատ նր է մղոն մի. որ և է քարտաժայո գիւր և տափարակ ամենենին անբեր և անջրդի. բայց դիրք նր քաջադեպ 'ի խափանել զվաճառականութիւն այլոց ազգաց չ գետն քամպիս: Եւ ահա այս իսկ է պատճռն՝ վն որոյ անդղիացիք առին զայս կղզի. և շինեցին 'ի նմ բերդ. և կարգեցին 'ի պահպանութ նր 30 զօրականս չ զօրապետաց իւրեանց. և 'ի բերդի անդ պատշաճական բնակարանս վն բերդակալ իշխանին, և գլխաւոր վաճառականաց անդղիացւոց. և գործակալաց ընկերուե նց. այլև մեծամեծ համբարանոցս վաճառաց. իսկ զօրքն՝ և արհեստաւորք և գերեք նց՝ արսաքոյ բերդին բնակին 'ի քարաշէն բնակարանս: Զօյս բերդ երիցս աւին գաղղիացիք. մի 'ի 1695. զոր 'ի բիսվերեան դաշնագրուե անդրէն գարձուցին անդղիացւոց: Ալպա 'ի գրդոփլ միւսանդամ ուատերազմի 'ի մէջ անդղիացւոց և գաղղիացւոց վերսափին տիրեցին նմ դազգիացիք 'ի 1702. այլ առեւեալ յանդղիացւոց 100000 սքուտս, անդրէն ետուն նց զկըլլին: Յետոյ 'ի 1709 գարձեալ առին դազգիացիք. այլ զնինի ամաց ինչ անդրէն կալան զնա անդղիացիք:

Եանի:

Այս թագաւորութիւն կմնանդ ըարձակ է յոյժ, որ ձգի ը երկայն առ քամպիա գետով մղոնս իբրև 160, ը մշջ սպարսալեաց և վոլեյայ, և 'ի ձեռն սամի կոչեցել գետոյն որ գայ ՚ի հեռուստ, բաժանի յերկու մասունս կմն դռամ. որք կոչին Վերին և Մուրին եանի. որոց իւրաքանչիւրն ունի իւր մաս նաւոր թագաւոր, և անգղիացիք յերկոսին ևս ունին սեփական վաճառատեղիս. յորոց մինչ որ է 'ի վերին գաւառի, կոչի Սամբո. իսկ երկրորդն էանի նարու. Այս թագաւորութիւն ունի և կղզիս մանունս և անբնատկու դործելց ՚ի քամպիայ գետոյ, որք կոչին Պիտր. Սահինեան իշխան, որք բղմնի. և Մային. յեաինս այս մեծ է ք զայլս. զի Երկայնութիւնի նր է իբրև 8 մղոն. յարում գաանի յաճախութիւններաց, այծենանց, և արմաւենեաց: Այս վա բնսկաւոր տեղեաց նր ոչ յիշտկեն ինչ որոշակի աշխարհագիւրք:

Աշէ:

Այս թագաւորութիւն ևս է ըարձակ, և ձգի առ քամպիա գետով. որոյ գլխաւոր տեղի՝ ուր նստի թագաւոր նր, կոչի Գաւառնոց: Գաւառնի անդ միւս ևս քղք Սէմբիօ կոչեցեալ. 3 մղոնաւ հեռի ՚ի դետոյն. որ մեծ է ք զայլ ամ բնակաւոր տեղիս այսր նահանդի. բայց չէ այնչափ ինչ բազմա մարդ: Անգղիացիք ունին և աստ սեփական վաճառատեղի, 'ի տեղւոյ միում' որ կոչի Քարտէն պտ, առ քամպիայ գետով ՚ի հիւսիսակողմն նր. և թէպէտ աեղիս այս իբրև 500 մղոնաւ հեռի է 'ի ծովէ, կմ' ի բերանոյ գետոյն, սակայն ըստ սրբագրութագորդաց ումանց՝ մակընթացութ ծովուն հասանէ մինչեւ ցաստ, ուր իբրև 3-4 սահացտի բարձրանաց յայնժամ ջուրն: Եթէ Հըմարիտ իցէ այս ասելին է, թէ երկիրն քամպիայ աշխարհի ցած է յոյժ. և սակաւ զառ ՚ի վայր: Եւ իբրև 60 մղոնաւ ՚ի վերոյ՝ են սահանդ կմ ջրվէժ քամպիայ գետոյն, որ յանուն տեղւոյն կոչի Սահան+ պարտէն պայ. ուր ը քարաժայում գահավեժ հոսի չուրն. և քանի մի մղոնաւ ՚ի վերոյ՝ է միւս սահանդ կոչեցել Սահան+ բար:

Փակա:

Պագաւորուի կմ նահանդ ըս մասին ձգել առ քամպիա գետով, և ըս մասին 'ի ներքս կոյս 'ի ցամոքն . և է ըարձակ յոյժ, բաժանեալ յերկու թագաւորուիս . այլ բնակիչք նր սակաւ են 'ի պահան անյագ ագահուե թագաւորաց նր, որք ու խնայեն 'ի ժողովուրդս խրեանց վաճառելով զնո՞ 'ի գերուի եւրոպացւոց : Խոկ գլխաւոր տեղիք նց են հետագայքդ :

Վլնիայիր : Քղք առ համանուն գետով ը լանջակողմն ըլրոյ : Բնակիչք նր կէս մի փորդուքալք են, և կէս մի մահմէտական . որք ունին անդ մզկիթ մի մեծաքն , որոյ 'ի գագաթան եղեալ կայ ձու ջայլեման : Անգղիացիք ունին և աստ սեփական վաճառաաեղի . ուր գնեն մոմ, փղոսկր, և մորթա անհասնոց :

Երեյա : Քղք կեօղ իրրե 16 մզոնաւ հեռի 'ի նախընթաց աեղոյդ 'ի գեղազուարձ վայրի . ուր գտանի յաճախութի վայրենի որսոյ : Բնակիչք նր են փորդուքալք, կմ պակնոնեան նիկրիացիք : Աստ ևս ունին անգղիացիք վաճառաաեղի վշ մոմոյ, որ կարի շահաւետ է նց :

Քայէն :

Այս թագաւորուի կմ նահանդ ձգեալ տարածի առ քամպիա գետով իրրե 50 մզոնաւ ը երկայն . որ և 'ի ձեռն վինթայի գետոյ բաժանի 'ի նախընթաց նահանդէ . և ունի երկու ինքնակալս . յորոց մին կոչի կայսր, խոկ միւսն թագաւոր . և երկոքին ևս են 'ի ցեղէ անտի մանտիկացւոց : Խոկ գլխաւոր աեղի նահանդին է քղքդ որ զինի :

Եշներուշաւ կմ թաներուշաւ : Քղք մեծ և բազմամարդուա քամպիա գետով, 'ի զուարձալի և վայելու չվայրի . առ որով 'ի մի կողմն ձգեալ տարածին գեղեցիկ բլուրք անտառալիցք : Այս քղք բաժանի յերկու վիճակս կմ թագս . յորոց 'ի միում բնակին փորդուքալք, խոկ 'ի միւսն մանտիկացիք : Փորդուքալք բղմ են յոյժ, բայց մի միայն եկեղեցին ունին, և մի քնյ, որ ամի ամի տուաքի անդր 'ի կղղոյն սրբյն յակարայ : Տունիք նց են քառակուսի և բարեցն . խոկ տունք մանտիկացւոց ը հկուկն՝

Են Փոքրիկ խրճիթք կաւակերպ , և ծածկել խո-
տով կմ աերեով արմաւենեաց :

ԹԱՀՄԱՐԻ :

Ուագաւորուի կմ նահանգ՝ որ ձգի նոյնողս առ
քամպիայ գետով իբրև 66 մղոնաւ ըերկայն .
և ունի իւր թագաւոր ՚ի ցեղէ անտի մանտիկաց-
ւոց . որոյ գլխաւոր աեղի՝ է քղքդ որ զինի :

ՊՐԱԿՈ : Քղք երեւելի առ քամպիա գետով . բնա-
կիչք ՚նր են մանտիկացիք . կարի նախանձայոյզք
մահմէտական օրինաց : Աչ կարի ինչ հեռի ՚ի քղքէ
աստի՝ են շարք ինչ ժայռից , որք գրաւեն զմեծ
մասն լայնատարած ձորոփորոյ քամպիայ գետոյն .
Թողեալ ՚նեղ անցս գետոյն ՚ի հարաւակողմին , որ
կարի վրանգաւոր է վա մեծ նաւուց ։ Գտանի և
այլ այսպիսի վրանգաւոր անցք 9 մղոնաւ ՚ի վերոց
առ տուղղողնուա քղքւ :

ԹԱԽԱՆԻ :

Ահանգ կմ թագաւորուի ձկեալ նոյնպէս առ
քամպիա գետով իբրև 52 մղոնաւ ը երկայն .
և ունի իւր թագաւոր ՚ի մանտիկացւոց անտի . և
քղքս և գեօլս բջմն քան զայլ ամ տրուիս . որք
դաւանին առ քամպիա գետով . յորոց գլխաւորն է
քղքդ որ զինի :

Եամեամա տօնպա : Քղք բարեշէն և բազմամարդ .
ուր անգղիացիք ունին վաճառատեղի և համբարա-
նոց վո փզասկրէից և գերեաց . որ ՚ի 1733 քան-
դեցաւ յողողմանէ ջուրց քամպիայ գետոյ . այլ
վաղվաղակի վերստին շինեցաւ հրամանաւ ընկերու-
թե վաճառականաց նց : Ցայսմ մասին քամպիայ՝
դտանին և այլ զանաղան փոքրիկ տրութեք , զորս
նշանակեսցուք յառաջիկայգ :

ՊՐԱՎԵԼ : Թագաւորութի յարեւելեան կողմն պա-
ռայի , իբրև 40 մղոնացափ ը երկայն . բայց չունի
քնաւ քղք , կմ այլ նշանաւոր աեղի . իսկ թղր ՚նր
է ՚ի ցեղէ մանտիկացւոց :

Սանեալէն : Թագաւորուի փոքրիկ ՚ի հիւսիսային
կողմն քամպիա գետոյն . երկայնուի ՚նր չէ ինչ ա-
ւելի ք մղոնս իբրև 24 . չունի և սա նշանաւոր
ինչ աեղի . իսկ թագաւոր ՚նր է նոյնպէս ՚ի ման-
տիկացւոց :

Քուամզօ : Աղուացին թդրուե կմ նահանգ՝ որ ը առաջ լինի 'ի հարաւակողմն քամովիա գետոյն մերձ 'ի բերան նր . երկայնութի նր է իբրև 22 մղոն 'ի սարէն սիյն մարիամայ՝ մինչև 'ի քապաթա գետոն հողակաւոր է այս տեղի սակս բազմուե այծից , և բաղմատեսակ վայրենի թռչնոց , և շորքոտանեաց : Անգղիացիք ունին աստ վաճառատեղի . որ և է իբրև համբարանոց կմ շտեմարան , յորմէ եամէտ բերդ նց՝ առնու զհամբարս իւրոց պարէնից :

Երիւա : Թագաւորութի յարևելեան կողմն քայէն այ . երկիր նր արդաւանդ է , բերէ ցորեան և որիզ առատ յոյժ . իսկ բնակիչք նր ժրաջան և աշխատասեր մշակք : 'ի սմին թագաւորուե է կղզին կոչեցել փղաց 'ի մէջ քամովիայ գետոյն . երկայն իբրև 4 . 5 մղոն . այլ լճային և անտառալից :

Եամիս : Թագաւորուե առ քամովիա գետով , իբրև 30 մղոն ը երկայն . ունի ցորեան և այլ արմատս առաստ . սյլե զանազան աեսակս հաւուց ընտանեաց և վայրենեաց : Ունի և երկու կղզիս . յորոց մինն՝ որ է 'ի մէջ քամովիայ գետոյն՝ կոչ կոչէ ծոշիոց . վս զի միշտ գտանի 'ի նմ բազմուե այսպիսի :

սի կենդանեաց :

Երուինա : Թագաւորուե սահմանակից եկմարովայ , որ ըստ տարածութեն գրեթէ նոյնշափ է՝ որշափ եամիս . և չունի ինչ նշանաւոր տեղի :

Քանիք : Թագաւորուե սահմանակից նհնդին թռմանեայ . որոյ գլխաւոր տեղի կոչել Առավելօք . ութ նստի թագաւոր նր :

Հարաւային քամովիա :

Իյս մասն քամովիայ՝ է ըարձակ յոյժ . որ ձգեալ տարածի ը մէջ քամովիա գետոյն , և նհնդին սէռալիոնի , 'ի կարմիր սարէ մինչև 'ի սարն վէրկայ . յարևեմտից՝ ունի իւր սահման զովկիանոս . որ կոչե ծով կուինէայ . իսկ արևելեան սահմանք նր անծանօթ են . զի խառնին ըս սահմանս վայրենի ժողովը . դոց , որք բնակին 'ի ներքին կողմանս ափրիկոյ : 'ի ծովեզերս նր գտանին բշմ մանր կղզիք . որք կոչին Պիտու իւսիւ . իսկ գլխաւոր գետք նր են Աբ Դամիկա . Ճելէս . Քառողլայ . Մեծ գէտ . և Սուսի . որք ոռոգեալ զերկիր նր , արդաւանգս գործեն :

Ու և բաժանի 'ի զնդն նհնդս կմ որուիս ը զնդն

Ժաղովրդոց՝ որք 'ի նմ. զի իւրաքանչիւր ժղվթդ ունի սեփական տրութիւն և նշնոր, որք ըս ճշտագոյն ծագրաց՝ ևն այսոքինկ. Ֆլուբիտ. Բաբէլ. Պալատ. Պիտիաբարա. Նաւուշ. և կլզիք ինչ. յորս յաւելցուք և զսէռալիոն, մի ըս միովէ յառաջիկայդ ստորագրելով։

Ֆլուբիտ. Կմբ Ուլուբիտ։

Անահանդ ըարձակ ը մէջ քառամանայ գետոյն, որ է առաջք մի քամովիա գետոյ, և գետոյն արյն գոմինիկոսի : Երկիր նր բարի է և պաղաքեր յոյժ. թէպէտ ոչ է ը տմ տեղիս մշակեալ : Իսկ բնակիչք նր՝ որք կոչեն ֆլուբացիք՝ յորոց և նշնոր նց ֆլուբիտ գլխովին բարբարոս են և վայրենի. բարք նց և սովորութիք և տարադ զգեստուց՝ չեն ինչ ըհատ յայլոց նիկրիտացւոց բնակչաց գալարք հրունդանին, և հիւսիսային քսմովիայ : Ասի, թէ շունին սք զայլ ինչ կրօն, եթէ ոչ զայն՝ զոր թելադը քեն վայրենի միտք նց ուստի և չիք առ նմ միակեր պութարագին պաշտաման, այլ ումանք պաշտեն զկով այլք զեղջիւրս նր, իէսք զժաւս և այլք զայլ ինչ, որոց մատուցանեն պատարագս ըս իւրաքանչիւր կարի, և հաճոյից : Բայց ուղ քաջ նշանակէ ութիւններ, այս արտագին անհամաձայնուն պաշտաման և խըռարանաց՝ ոչ ցուցանէ չունիլ նց զմանմտւոր կրօն ինչ հսրից . ուղ յայտ է և յայլոց կուապաշտից, և զնին աղանդաւորաց . որք թէպէտ սւնին դպէսուղ խըռանս զանազանս 'ի միմեանց, այլ գլխաւոր գեն նց մի է :

'ի մէջ ոց գտանին ժղվթդ ինչ, որք չեն այնչափ բիրաք և վայրենիք . որք և դոլով երբեմն նուշան եալ ըս տրութիւն փորդուքալաց, ունին հետո ինչ քրիստոնէուեն . ուղ նք՝ որոց ակրեցին թիգրք եւ բէյայ՝ ունին ինչ ինչ 'ի մատհմէտական օրինաց : Առաջ և լդազանաբարոյ և վայրենի մասն այսոր ժդիրդեան՝ է այն, որ բնակի առ ափն նախայիշատակել քասամանսայ գետոյ 'ի հարաւակովին նր : Աք ըհանրաւ պէս խօսելով թէպէտ վայրենի են, սակայն ժրաշան 'ի մշակուն երկրի սերմանեն և հնձեն սրիզ և կորեակ առատ յոյժ, և այլ ազդի ազդի արմտիս, և պատուզս ոպարախիզաց . յորս նշանաւոր է սեխն համեղ և մեծ . զի գառանին անդ սեխիք, որք կշանի մինչ 20. 25 օխայ . գարմանին և անդեայս նրանց և կավուց, և հօրանս այծից . և հօտոտ խաշանց : 'ի թէքու

Թդրս կմ յիշխանու նց՝ չկը սահմանել ինչ կարդյա-
ջորդուն . այլ որ բժնագոյն է 'ի նո՛ , նա տիրէ այ-
լոց տկարագունից : Սոցա գլխաւոր պաղմ' է ընդ-
դէմ մանափիացւոց . որք բջմ' անգամ ջանացին ընդ-
լծով իւրեանց նուանել զնո՞ . այլև ըդէմ եւրոպաց-
ւոց , որք հանապաղ յափշտակեն 'ի նցնէ գերիս .
միշտ անհաշտ թշնամութ են ը նո՞ . մինչև յըմբը ըո-
նիշն զոք յեւրոպացւոց անտի՝ առժամայն խողխո-
զին ասեն , և ուտեն առ սաստիկ կատաղունն : Իսկ
գլխաւոր աեղիք այսր նէնդի՞ են հետապայքդ :

Եսամէ : Ես աեղիք բազմամարդ , և անուննի 'ի պատ-
ճառս մեծի վճռկանունն մոմոյ . զի երկիցս յեօթ-
նեկի լինեն անդ տօնավաճառք . ուր յամ' շրջակայ
կողմանց բարձեալ բերեն մօմ բդմ . զոր դնեն վա-
ճառականք փորդուքալաց . և մաքրեալ՝ առսքեն 'ի
կաքէոն : Իբրև 60 մզոնաւ հեռի 'ի տեղւոնցէ աստի՝
է ամրոց մի նոյնոկս Եսամէս կոչեցել , 'ի ցամաք անդը
առ վտակաւ ինչ՝ որ մտանէ 'ի սք դոմինիկոս կօշեց-
եալ գետն :

Քինկին : Աւան կմ քղք մերձ յակն փոքրիկ ինչ
վտակի՝ որ ելանէ 'ի քասամանայ գետոյ , և մտանէ
'ի նը դոմինիկոս կոչեցեալ գետն : Բնակիչք նը լը
մեծի մասին փորդուքալացիք են . որք 'ի վաղ թմբ
գնացել բնակեցան անդր . ուր և ունին ամրոց և
վաճառատեղի 'ի սակս առեւտրուն . այլև կալուածս
երկրի , զոր տան մշակել նիկրիտիացւոց գերեց
իւրեանց : Գետեղերք նախայիշատակել փոքրիկ վե-
տակին՝ որ յետոյ անեցել յայլոց գետոց . նոյնոկս
Քինկին կոչին , զուարձալի են յոյժ . ունելով աստի
և անտի զնո՞ն տեսակս սկաղաբեր ծառոց . յորս ե-
րեւելի են կիտրենիք , որք բերեն զմասնաւոր իմն
պառուղ ազնին . ձե նը բոլորակ : կեղեն նուրբ , և
'ի միջի լի հիւթ համեղաճաշակ . չունելով բնաւ կո-
րիզս :

Զիւնետիր : Ես ամրոց ը իշխանութիւն փորդուքալաց
առ քասամանայ գետով իբրև 50 մզոնաւ 'ի ներբա
'ի ցամաքն 'ի ճախին տեղւոջ . շրջապատեալ բաղմա-
խիտ ջուլացեալ ծառովք :

Բաբել:

Այս նէնդ՝ է առ երի նախընթաց նէնդիդ . յու-
նակ բաժանի 'ի ձեռն ըարձակ անտառի . և ձբշ-
եալ տաքածին սահմանիք նը մինչև 'ի ծովեղերս սպա-
լուն.

շանտայ: Բնակիչք նր կոչին բարելացիք • որք ըստ
բարուց՝ և ը այլ ամ հանգամանաց՝ նման են ամ
իրաք ֆլուբացւոց, զոր վերագոյնդ ստորագրեցաք.
ող և երկիր նց զնոյն արդասիս բերէ: Բայց կա
ռավարութին է 'ի ձեռս միոյ: որ և է ինքնակալ լժա
գաւոր, կմ ըհանուր հրամանատար երկրին: Իսկ
դիմաւոր աեղիք նր են հետապայքգ:

Պարիմ: Քաղաք-կամ աւան առ ոք դոմինիկոս կո
չեցեալ գետով 'ի հարաւակողմն նր: Հրջապատեալ
ցցովք: և է ը որուք փորդուքալաց • որք պահեն
անդ միշտ զօրականո 'ի պաշտպանութի տեղւոյն:
Գործեն անդ բամբակի կաաւս: և այլ զնշն բամ
բակի գործածս: գտանի և մոմբշմ, զոր հաւաքեն
